



ՀԱՅ ՄԱՏԵՎԱԳԻՏՈՒԹԵԱՆ

ՏԻՐԱԿԱԼԸ  
(ՅԱԿՈԲ ԱՆԱՍԵԱՆ)



Լու Անջելիս, Յունիար, 2018










«Զայլող Հանրագիտարան» հօրս  
ոտնահետքերը եղե՛լ են, կա՞ն ու պիտի մնան  
Երեւանի փողոցներում եւ մենք՝ նրա  
հետևորդները, մշտապէս պիտի ջանանք  
քայլել այդ հետքերով:

**ՀԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ**



929; 01(479.25) (հայոց)

1254214

ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ

ՏԻՐԱԿԱԼԸ

(ՅԱԿՈԲ ԱՆԱՍԵԱՆ)

~~Հ 103457~~

ՅԱԿՈԲ ԱՆԱՍԵԱՆ..... 3

Ինքսակենսագութիւն

ՀԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ..... 73

ՄԵՆՔ ԹՈՂՆՈՒՄ ԵՆՔ ՀԱՅԱՏԱՆԸ

ԳԵՒՈՐԳ ԱՍԱՏՐՅԱՆ ..... 113

ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԻՐԱԿԱԼԸ

ՀԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ ..... 130

«ԱՐՄԱՏ ՀԱԻՍՈՅ»-Ի ԱՌԵԴԾՈՒԱԾԸ

Լու Անջելէս, Յունուար, 2018



Սոյն աշխատութեան հրատարակութեան  
հովանաւորն է  
Տէր և Տիկին  
Սարգիս և Լուսինէ Թոփալեան ամոլը



---

**YEREVAN PRINTING**

**818.246.2070**

626 W. Colorado St.  
Glendale, CA 91204  
[yerevanprinting.net](http://yerevanprinting.net)

Յակոբ, Սեղրակի որդին, ծնուել է Փոքր Ասիայի Էսկիշեհիր քաղաքում 1904 թ. Մայիսի 15-ին: Հայերէն տարրական գրագիտութիւնը նա ձեռք է բերել Կուտինայի հայ կաթողիկէ համայնքի դպրոցում: 1916-17, 1917-18 ուսումնական տարեշրջաններում սովորել է Կուտինայի Թուրքական Սուլթանական Վարժարանի (Սուլթանի Սէքթիֆի) Ա. Եւ Բ. Դասարաններում:

Այս դպրոցից Յակոբի ստացած հիմնական կրթութիւնը եղել էր օսմաններէնի իւրացումը, որի շնորհիւ հետազայում ինքնաշխատութեամբ իւրացրեց այդ լեզուի անթերի իմացութիւնը եւ այն օգտագործեց իր զիտական աշխատութիւններում:

1919 թ. սկզբներին, իր հօր եւ քրոջ հետ տեղափոխւեց Կ. Պոլիս: Քիչ ժամանակ անց ուղարկուեց Վենետիկ՝ իր ուսումը շարունակելու՝ Ս. Ղազար կղզում: Յակոբը պատկանել է Ս. Համաշխարհային պատերազմից յետոյ Ս. Ղազար հասած ուսանողութեան առաջին խմբին, որը հիմնականում բաղկացած էր Մեծ Եղեռնից վերապրած 18 պատանիներից: Որոշ ժամանակ անց, Պոլսից եւս ժամանեցին 14 պատանիներ, որոնք էլ ամբողջացրին հոգեւոր ճեմարանի ուսանողութեան կազմը՝ հիմնականում երկու՝ Վարի եւ Վերի դասարաններ պայմանական անուանումով: Յակոբը վերի դասարանում էր: Ճակատագրի բերմամբ Յակոբի ընտանիքը թուրքախօս էր,

ինչպէս բոլոր կուտինահայերը (Ինչպէս Կոմիտասը, որը նոյնպէս Կուտինահայ էր,- ՀԵՆ. Ա.):

Կուտինայի (Թքքերէն՝ Քէօթահիա) երկրորդական՝ վերը նշեալ դպրոցում Յակոբը հազիւ էր տառածանաչ դարձել ու ընդամէնը երկու տասնեակի չափ հայերէն բառեր գիտեր միայն, եւ սա էր հայերէն լեզուի հետ նրա ունեցած ամբողջ ծանօթութիւնը՝ մինչեւ Վենետիկ հասնելը:

Էր հօր ներշնչած զաղափարներով նա գիտեր, որ Վենետիկը հայ մշակոյթի նշանաւոր օճախներից մէկն էր, եւ ինքն այնտեղ էր գնում՝ մեր հին ու հարուստ լեզուն սովորելու համար: Այս խանդավառութեամբ եւ ուսման համար բուռն ձգտման շնորհիւ, նա դարձաւ հաստատութեան ամէնաառաջադէմ ուսանողներից մէկը:

Ս. Ղազարում Յակոբը բոլորեց 3 ուսումնական տարեշրջան, առաջինը՝ վանքի Նորընծայարանում, վերատեսչութեամբ՝ Հայր Թաղէոս Թովմաճեանի, որը յայտնի գրաբարագէտ էր, իսկ երկրորդ եւ երրորդը՝ Վանքի վարժարանում, ուր աշակերտները ուսման լսարանական ընթացքին էին հետեւում՝ վերատեսչութեամբ բանասէր Հայր Քերովք Չրաքեանի:

Նորընծայարանում Յակոբը առաջին հերթին պիտի յաղթայարէր լեզուի դժուարութիւնը, պիտի արագօրէն տիրապէտէր հայոց լեզուին, որպէսզի կարողանար հետեւել նաեւ ուսումնական միւս

առարկաների դասաւանդմանը: Այս դժուարութիւնը հիմնականում կայանում էր նրանում, որ դեռ աշխարհաբար հայերէն չիմացող Յակոբը պիտի սկսէր միանգամից սովորել զբարարը: Յաջողութեամբ աւարտելով առաջին տարին, քննութիւնների արդիւնքով Յակոբը արժանացաւ առաջին մրցանակին:

Նա անյագ տեսչ ունէր սովորելու: Տրուած դասերը չէին բաւարարում նրան: Իւրաքանչիւր դասավերջին, եթք ուսուցիչները յաջորդ դասը պատրաստելու համար էջեր էին հաշուում դասազրքերի վրայ, ուսանողներն սկսում էին միաբերան ասել՝ <<Բաւական է, բաւական է...>>, մինչ Յակոբը առաջ էր նետում ասելով՝ <<Բաւական չէ, բաւական չէ, աւելի տուեք, աւելի տուեք...>>: Յակոբը տառապում էր անբաւարարութեան զգացումով: Իրեն թուում էր, թէ ուսման ընթացքը անբաւարար էր վանքում՝ համեմատութեամբ դրսի դպրոցների, որոնց մասին ինքը, բնականաբար ոչ մի գաղափար չուներ:

Մի աղոտ գաղափար ունէր միայն Վենետիկում գտնուող Մուրատ Ռափայէլեան վարժարանի մասին, ուր մի անգամ, նրա շքեղ դահլիճում իր ընկեր ների հետ ներկայ էր եղել երաժշտական համերգի եւ մէկ անգամ էլ՝ Հայր Սահակ Տէր Մովսիսեանի <<Բարգէն Սիւնի>> ողբերգութեան ներկայացմանը: Այդ զոյզ երեկոններից ստացած տպաւրութիւնների շնորհիւ Յակոբը մէկընդմիշտ փոխեց իր կարծիքը Ա.

Ղազարում մատուցուող գիտելիքների որակի մասին:

Այդ ուսումնական հաստատութիւնում էին դասաւանդում այնպիսի խոշոր գիտնականներ, հայագէտներ, որոնցից էին Հայր Խորեն Սինանեանը, Հայր Քերովք Չրաքեանը, Հայր Գրիգորիս Այտընեանը, Հայր Մանուկ Ղետնտեանը, Հայր Հմայակ Կետիկեանը եւ ուրիշներ:

Յակոբի հոգում լրութեան մէջ թաղուած էր իր հօր տուած պատուէրի համար որդիական հաւատարմութեան զգացումը, ըստ որում, վանքում ուսումը լրացնելուց յետոյ, նա պէտք է տուն վերադառնար, որովհետեւ ինքը ընտանիքի ապագայ միակ յոյսն էր: Որքան էլ տարօրինակ թուայ՝ այս վերջին հանգամանքին ի սկզբանէ խսկ՝ տեղեակ էր վանքի Վարժարանի վերատեսուչ Հայր Քերովքէն:

1919 թ. Յուլիսին, վանք հասնելու առաջին օրերին, Նորընծայարանում աշակերտները խոստովանանքի հրաւիրուեցին՝ ըստ վանքի սովորութեան: Խոստովանահայրը, որ մի անձանօթ վարդապէտ էր, խոստավանանքի ժամանակ այսպիսի զրոյց ունեցաւ Յակոբի հետ.

- Տղաս, դուն վարդապէտ պիտի ըլլա՞ս...
- Ω̄ς:
- Ուրեմն՝ Ինչո՞ւ համար եկած ես հոս:
- Ուսում առնելու համար եկած եմ, որովհետեւ հայրս այդպէս ըսաւ ինձի, ըսաւ որ ուրիշ տղայ

չունի, եւ ուսումս առնելին ետք տուն պիտի վերադառնամ:

- Մի յուսահատիր, տղաս, Աստուած հետդ կըլլայ:

Հետազայում է, որ Յակոբը տեղեկացաւ, թէ անձանօթ խոստովանահայրը Հայր Քերովքէ Չրաքեանն էր, այն անձը, որը մի տարի յետոյ նրա դեկավարն էր դառնալու՝ իբրեւ Վարժարանի վերատեսուչ:

Յամենայն դեպս՝ այդ օրերից անցել էր երեք տարի: Այժմ Յակոբի հոգին ալեկոծում էր հօրը տուած իր խօստումով, ուսման համար, ունեցած շոտապողականութեամբ եւ, մանաւանդ, այն գիտակցութեամբ, թէ ինքը կոչում չունէր եկեղեցական կեանքի համար եւ պէտք է անկեղծ եւ մաքուր ապրէր յետազայ կեանքում:

Հոգեկան տագնապի այդ դրութեան մէջ, Յակոբն այլեւս չկարողացաւ նոյնիսկ մէկ-երկու շաբաթ եւս համբերել, որպէսզի կարողանար ներկայ լինել ուսումնական տարեվերջի քննութիւններին: Եւ նա, 1922 թ. Մայիսի 25-ին, վճռական որոշումով դիմեց վերատեսչին, քացատրելով ամէն ինչ եւ խնդրելով, որ, եթէ կարելի է, իրեն տեղափոխեն Սուրատ Ռափայէլեան՝ ուսումն այնտեղ շարունակելու համար, իսկ եթէ ոչ՝ իրեն ուղարկեն Կ. Պօլիս, իր հօր մօս:

Հայր Քերովքէն թէեւ չզարմացաւ նրա այս որոշման համար, քանի որ արդէն իրազեկ էր իր սանի <<զաղտնիքին>>, քայց խոր ցաւ զգաց, որովհետեւ

մեծ յոյսեր էր կապել նրա հետ: Նա աշխատեց Յակոբին համոզել, թէ սխալ քայլի էր դիմում: Անօգուտ էր, սակայն: Ի վերջոյ բացատրեց, որ Ս. Ղազարից տեղափոխուել Մուրատ Ռաֆայելեան՝ ընդունուած օրէնքով էլ՝ անթոյլատրելի էր:

Եւ այսպէս, նոյն տարուայ Մայիսի 29-ին, Յակոբին շոգենալով Վենետիկից ուղարկեցին Կ. Պոլիս:

Յակոբը Հայր Քերովքի աշքի լոյսն էր՝ իր աշխատասիրութեան, ընդունակութեան եւ օրինակելի վարքի շնորհիւ: Ապահովաբար՝ նրա հանդեպ Հայր Քերովքի ունեցած անխառն համակրանքը այն օրուանից էր, երբ խոստովանանքի պահին նկատել էր պատանի ուսանողի անկեղծութիւնը, միամտութիւնը եւ մանկական անմեղունակութիւնը, յատկանիշներ, որոնք անտեսանելի չեին վանական միջավայրում: Հրաժեշտի առիթով Հայր Քերովքն նրան նուիրեց, ի շարս այլ գրքերի, փոքրադիր հրատարակութեամբ մի <<Եղիշէ>>, որի ընթերցումն ու ուսումնասիրելը լաւագոյնս լրացրին նրա պարապ ժամերը ողջ նաւազնացութեան ընթացքին:

Այսպիսով, ուսուցչի եւ սանի փոխարաբերութիւնները նամակագրութեամբ շարունակուեցին երկա՞ր տարիներ:

Պոլիս հասնելուց օրեր անց, Յակոբը հասկացաւ, որ մեծ սխալ է գործել հեռանալով Ս. Ղազարից: Ուսումը շարունակելու համար պայմաններ չկային Պոլսում: Փորձեց որպէս ուսուցիչ աշխատանք գտնել

քաղաքի ֆրանսիական դպրոցներից որեւէ մէկում, սակայն ապարդիւն: Ի վերջոյ, որպէս ուսանող ընդունուեց Պոլտոյ Պերա թաղամասի Ս. Գրիգոր Լուսատրիչ ուսումնարանում, որը հայկական դրախտոցների մէջ լաւագոյնն էր, ուր նա կարող էր ընդլայնել իր գիտելիքները՝ հայագիտական առարկաներից: Չկարողացաւ սակայն, երկար յաճախել այդ ուսումնարանը, որովհետեւ ժամանակները խառն էին ու վտանգաւոր:

Յունական բանակները, որոնց գրաւման տակ էր Փոքր Ասիան, սկսել էին նահանջել թուրքական ուժերի առջեւ: Մուստաֆա Քեմալի (Աթաթուրք) բանակները Անկարայից դեպի արեւմուտք յաղթական արշաւանքով անխնայ կոտորում եւ հալածում էին քրիստոնեայ ազգաբնակչութեանը (յոյն, հայ, ասորի), որը յունական նահանջող բանակների հետ միասին խուճապահար փախչում էր դեպի ծովեցրեայ քաղաքները, գլխաւորապէս Իզմիր եւ Կ. Պոլիս՝ արտասահման անցնելու յոյսով:

Կ. Պոլսում սարսափ էր տիրում: Փախստական բազմաթիւ բազմութիւններ, հազարաւոր յոյն եւ հայ ընտանիքներ, Անատոլիայից շնչասպառ այնտեղ էին հասնում՝ ամէնօրեայ կարաւաններով: Քաղաքը վեր էր ածուել հսկայական զաղթակայանի: Այնտեղ էին հաւաքուել նաեւ Յակոբի հօր եւ մօր կողմի մերձաւոր բոլոր ընտանիքները:

1923 թ. Հոկտեմբեր 6-ին թուրքական բանակը մտաւ Կ. Պոլս: Ահաւոր ահն ու սարսափը տիրել էր քրիստոնեայ ազգերին: Վախ կար, որ նոր կոտորած է սկսուելու: Պոլսի հայ գաղթականների եւ նրանց միացող տեղաբնակների հոսանքը օտար նաւերով ուղղուում էր երկու ուղղութեամբ. Դեպի Յունաստան (եւ այնտեղից՝ նաեւ Բուլղարիա եւ Ռումինիա) եւ դեպի Ֆրանսիա, ինչպէս նաեւ այլ երկրներ:

Կ. Պոլսում էին գտնուում նաեւ հայկական բազմաթիւ որբանոցներ, որոնցում պատսպարուած էին Եղեռնից վերապրած տասնեակ հազարաւոր որբեր: Այդ որբերը ազգային իշխանութիւնների ջանքերով էին փրկուել ստրկութիւնից, այսինքն՝ թուրք, քուրդ եւ արար առեւանգիշներից, իսլամ ընտանիքներից, Դեր-Զորի անապատներից եւ թուրքական, այսպէս կոչուած որբանոցներից, որոնք ծառայում էին հայ մանուկներին կրթութեամբ թուրքացնելու գործին:

Մղձաւանց էր նաեւ այս որբերի պարագան: Նրանց՝ երկրորդ փրկութեան համար արեւմտեան որոշ երկրներում յայտնուեցին օգնութեան շարժում կազմակերպողներ, ինչպէս Իտալիայում Վատիկանը եւ Ամերիկայի Միացեալ Նահանգներում՝ <<Մերձաւոր Արեւելքի նպաստամատոյց>>(Near East Relief Society) ընկերութիւնը: Ամերիկեան այս ընկերութիւնը իրացրեց հայ որբերի հսկայական զանգուածի մեծագոյն մասի շուտափոյթ տեղափոխումը Կ. Պոլսից Յունաստան:

Այդպիսի թոհուրոնի մէջ 6 ամիս Պոլսում մնալուց յետոյ, Յակոբը միանալով Յունաստան մեկնող հսկայ կարաւանին, երկու օրուայ ընթացքում հասնում է Յունաստան, ուր 13 ամիս իր գոյութիւնը պահելու համար ստիպուած է լինում պատահական աշխատանքներ կատարել:

Երիտասարդ Յակոբի նպատակն էր ինչ-որ ձեւով Ֆրանսիա հասնել, ուր ապրում էր իր հայրը: Վերջապէս, 1924 թ. Մարտի 5-ին հայ եւ որդի գրկում են միմեանց Ֆրանսիայի հարաւում գտնուող Կաստելսարագէն գիւղաքաղաքում: Հազի մէկ ամիս ապրեցին միատեղ հայր եւ որդի: Անողոք մահը երկնային արքայութեան առաջնորդեց հօրը: Նրա մահից յետոյ Յակոբը չուզեց մնալ գիւղական այդ վայրում եւ կարծ ժամանակ անց մեկնեց Փարիզ՝ ուր ապրեց աւելի քան 11 տարի:

Այդ տարիների ընթացքում ապրուստի համար Յակոբը զբաղուեց պատահական աշխատանքներով: Սովորեց կար անել, աշխատեց հազուստեղէնի արտադրութեան մէջ, որպէս առտնին (տնային) արհեստաւոր:

Այս շրջանում մղում զգաց ազգային հասարակական կեանքի հետ շփուելու: Նրա մօտ այդ հետաքրքրութիւնը զարթնել էր դեռ Կաստելսարագէնում գտնուած ժամանակ՝ այնտեղ եղած մօտ երկու տասնեակ դաշնակցական եւ հնչակեան երիտասարդների ընկերական շրջապատում:

Փարիզում այդ հետաքրքրութիւնն էլ աւելի զօրացաւ եւ ինքը դարձաւ Անիեր եւ Բուա-Կոլոմբ արուարձաններում Հ. Յ. Դաշնակցութեան <<Եռագոյն>> խմբի հիմնադիրներից մէկը (<<Եռագոյն>> անուանումն ընդունեց իենց իր առաջարկութեամբ,- Հեն. Ա.): Յակոբը գործոն մասնակցութիւն ունեցաւ այդ տարիներին հիմնադրուած ՉՈՍ-ի (Չափահաս Որբերի Միութիւն) մէջ, որը որպէս անկուսակցական կազմակերպութիւն, ցանկանում էր իր մէջ համախըմբել Եղեռնից վերապրած հայ որբերին եւ առհասարակ հայ երիտասարդութեանը, եւ նրան կազմաւորել ու դաստիարակել որպէս <<Վահագնեան բանակ>>՝ հայութեան, իբրեւ ազգի վերականգնման համար պայքարի նուիրուող կազմակերպութիւն:

Իբրեւ ՉՈՍ-ի Փարիզի մասնաճիւղի քարտուղար, Յակոբը կազմակերպում էր դասախոաւութիւններ, առիթ ստեղծելով, որ մեր նոր սերունդը անմիջական շիման մէջ լինի հայ մտաւորականութեան ներկայացուցիչների հետ: Այս միջոցով է, որ ինքնանձնական յարաբերութիւնների մէջ էր մտել մշակութային գործիչներից Արշակ Չոպանեանի եւ Կարապետ Պասմաճեանի հետ: Միաժամանակ փորձեր էր կատարում մամուլում հանդէս գալու: Այս հանգամանքը, սակայն, նրան ստիպեց վերանայել իր ազգանուան արմատը: Ի՞նչպէս կարող էր նա հասարակութեան առջեւ հանդէս գալ մի այնպիսի ազգանունով, որի արմատը բացայացորէն թրքական էր:

Յակոբը որոշեց լեզուաբանօրէն տարրալուծել թրքաբոյր ՍԷՕՅԼԷՄԵԶ բառը, եւ նրա մասերի թարգմանութեամբ վերականգնել հայերէնով ԱՆ-ԱՍ բառակազմի հիմքը, որն արդին գոյութիւն ունէր՝ ԱՆԱՍԵԼԻ բառի մէջ, ի հակադրութիւն ԱՍԵԼԻ բառի:

Մտածելն ու որոշումն իրականացնելը մէկ եղաւ։ Փարիզի <<Հայ գաղթականների պաշտօնատան>> 1929 թուակիր կարգադրութեամբ, Յակոբի ՍԷՕՅԼԷ-ՍԷԶԵԱՆ ազգանունը դարձաւ՝ ԱՆԱՍԵԱՆ։

Հայկական ազգանունների ծագման մասին խօսելիս՝ Հրաչեայ Աճառեանը, ի շարս այլ օրինակների, օրինակ է բերում այս փաստը.

**Համալսարանում ունենք ԱՆԱՍՅԱՆ ազգանունով մի բանասեր։ Հարցրի նրան այս ազգանվան ծագումը։ Նա պատմեց, թէ իր պապը եղել է սակավախոս մարդ, ուստի կոչել են՝ ՍՈՅԼԵՄԵԶՅԱՆ (թուրքերեն՝ <<Հիտոտի, շատող>>)։ Իր հաջորդները հայերէնի թարգմանելով այդ անունը դարձրել են ԱՆԱՍՅԱՆ, այսինքն՝ <<Հատողյան>>։**

Հ. Աճառյան, <<Լիակատար քերականություն հայոց լեզվի>>,  
Հատ. Զ, Երևան, 1971, էջ 770

Ի լրացումն նշանառը հայագէտի պատմածի, աւելացնեմ, որ սակաւախօսութիւն նշանակող ՍԷՕՅԼԷՄԵԶ անունը Յակոբի գերդաստանն ունեցել

**Է դեռևս 18-րդ դարի վերջերին, իսկ հայացնողի պատիւը կամայ, թէ ակամայ պատկանում է Յակոբին:**

### **Սուրէն Քոլանձեան**

Որոշ ժամանակ անց Յակոբը ամուսնացաւ Փարիզի Ռենսի արուարձանում հաստատուած Դպրոցաւէր Տիկնանց Վարժարանի սաներից Վերժինէ Յովհաննիսեանի հետ: Վերջինս 1929 թ. աւարտելով Վարժարանը, այնտեղ հայերէն լեզու էր դասաւանդում: Ամուսնութեան առթիւ Յակոբի գրած մի բանաստեղծութիւնը՝ <<Տաճար մըն ես>> խորագրով, լոյս տեսաւ <<Երկունք>> ամսագրի 1930 թ. Ապրիլեան համարում:

Վերժինէն վերապրող էր Հայկական Ցեղասպանութիւնից: Նա, ըստ իր մանկական յիշողութեան, ծընւել է Աղաբազարում: Մեծ Եղեռնի ընթացքում նրա ընտանիքը տեղահանուել ու զոհուել է թուրք ջարդարարների ձեռքով, իսկ ինքը, 5 կամ 6 տարեկան հասակում որբ մնալով Դեր-Զորի անապատում, թուրքական հայատեաց իշխանութիւնների կողմից որպէս մարդկային աւար, տարուել է Մերդին, եւ այնտեղից՝ Կ. Պոլիս, ուր պահում էր թուրքական մի որբանոցում:

Պատերազմի աւարտին Կ. Պոլսում կազմակերպուած <<Հայ որբախնամ մարմնի>> ջանքերով ազատուել է եւ յանձնուել հայկական հաստատութիւնների

խնամքին՝ քաղաքի արուարձաններից՝ Օրթագիւղի եւ Բեշիկթաշի որբանոցներում: Օրթագիւղի Ազգային Աղջկանց որբանոցից Վերժինէին տեղափոխում են Բուրսա, այնտեղից էլ՝ Պոլիս:

Մերձաւոր Արեւելքի Ամերիկեան Նպաստամատոյց ընկերութեան միջոցներով, բազմահազար հայ որբերի հետ միասին, Վերժինէն տեղափոխում է Յունաստանի Սիրայի որբանոցը, իսկ այնտեղից, որպէս ուշիմ, աշխատասեր աշակերտի, ուղարկում է Ֆրանսիա՝ Դպրոցասեր Տիկնանց Սիրութեան վարժարանում ուսանելու:

Առօրեայ աշխատանքին զուգընթաց, Յակոբը Փարիզում հետամուտ եղաւ իր ուսուցումը շարունակելու: 1931 թուականից մինչեւ 1934, ամբողջ չորս տարի, հետեւեց բանասեր-պատմաբան Կարապետ Յ. Պասմաճեանի մասնագիտական դասերին (Հայաստանի պատմութիւն, հնագիտութիւն, պատմական աշխարհագրութիւն, եւ իին գրականութիւն): Զանում էր պրատումներ կատարել հայագիտական որոշ նիւթերի շուրջ եւ այդ նպատակը իրագործելու համար, մշտապէս այցելում էր Նուպարեան մատենադարան, որտեղից էլ գնել էր մեծ քանակութեամբ մասնագիտական գրքեր, որի շնորհիւ հարստացել էր իր անձնական գրադարանը:

Նրա գրչի համար փորձադաշտ հանդիսացաւ <<Երկունք>> ամսագրի (խմբագիր՝ Շաւարշ Նարդունի) էջերը: 1929-1936 թ.թ. ընթացքում իր ստո-

րազբութեամբ այնտեղ լոյս տեսած յօդուածներից երկուսը զիտական առումով՝ արժանի ուշադրութեան արժանացան: Մէկը՝ <<Ինքզինք դերանուան շուրջ>> (1932 թ. Յունուար եւ Ապրիլ, 1934 թ. Յունուար-Փետրուար) քերականական յօդուածն էր, որը հակածառութիւն էր՝ Հայր Ղազիկեանի այն տեսակէտի դէմ, թէ <<Ինքզինք>>-ի մէջ գտնուող Զ-ն յօդակապ եւ զօրացուցիչ տառ է:

Միւս յօդուածը՝ <<Նպաստ մը հայոց ազատագրական պատմութեան (ԺԷ դար) <<Մահտեսի Շահմուրատ եւ Յովհաննէս Թիւթիւնձի>> յօդուածն է՝ տպագրուած <<Յառաջ>> թէրթի 1934 թ. Հոկտ. 7-ի համարում:

Կարապետ Պասմաճեանը, իր աշակերտին տուած ուսումնական վկայականում, այս յօդուածը համարել է <<Փոքր, բայց կարեւոր աշխատութիւն, զոր կարելի է համարել իբր իր աւարտածառը>>; Հետագայում, երբ Յակոբ Անասեանը ընտանիքով տեղափոխուել էր Հայաստան, Երեւանի Պետ. Համալսարանի դասախոսներից Պրոֆ. Խաչիկ Սամուկեանն այն համարել է՝ <<Արժեքաւոր եւ խիստ շահեկան աշխատութիւն, որտեղ հեղինակը ցուցաբերում է պատմագիտական ուսումնասիրութիւն կատարելու ունակութիւն...Հետեւապէս ընկ. Անասեանը միանգամայն նոր բան է ասում, նոր տեսակէտ է արծարծում, որը կարեւոր նշանակութիւն է ներկայացնում հայ պատմագիտութեան մէջ>>:

Խաչիկ Սամուելեանը 1939 թ. Նոյեմբեր 3-ի՝ Պետական Համալսարանի ԳԱՍ-ին (Գիտական աշխատողների սեկցիա) ուղղուած իր նամակում իր կարծիքն է յայտնել այն մասին, թէ Անասեանին կարելի է ընդունել որպէս Համալսարանի ԳԱՍ-ի (Գիտական ամբիոն) անդամ:

*Հ/203 45*

1936 թուականին Անասեանի ընտանիքի կեանքում տեղի ունեցաւ պատմական իրադարձութիւն: Նրա նախահայրերը անյիշտակ ժամանակներում էին հաստատուել Կուտինայում: Գաղթելով Հայաստանից, հաւանաբար Գողթն զաւարի Ցղնա գիւղից: Յակոբը որոշեց իր ընտանիքին փրկել դարաւոր գաղթականութիւնից: Հայաստանի կառավարութիւնը ՀՕԿ-ի (Հայաստանի օգնութեան կոմիտէ) միջոցով պարբերաբար ներգաղթի կարաւաններ էր կազմակերպում դեպի Հայաստան:

Յակոբը չէր կարողացել մասնակցել 1932 թուին Ֆրանսիայից մեկնող կարաւանին, որովհետեւ դիմողների թիւը պահանջուածից շատ աւելին էր: Դրութիւնը նոյնն էր նաև 1936 թուին կազմակերպուած կարաւանի համար, բայց այս անզամ նրան, որպէս խոստումնալից երիտասարդի, ներգաղթի կարաւանում հերթից դուրս տեղ ապահովելու խնդրանքով Հայաստանի կառավարութեանը դիմեցին մշակութային եւ հասարակական գործիչ Արշակ Չոպանեանը եւ բանաստեղծ Աւետիք Իսահակեանը, որն այդ շրջանում Փարիզում էր գտնուում:

Վերջինիս հետ Յակոբը Նուպարեան մատենադարանում էր ծանօթացել և խնդրել էր նրան՝ օգնել իրեն՝ ներգաղթելու հարցում: Հայաստանի կառավարութիւնը, ի յարգանս հայ մտաւրականութեան այս անուանի ներկայացուցիչների, ՀՕԿ-ին հրահանգել էր ընդառաջել նրանց խնդրանքին:

Յակոբի ընտանիքը 1936 թ. Մայիսի 9-ին Մարսել-Բաթումի ծովային ճանապարհով ոտք դրեց սովետական հողի վրայ:

Յակոբը ընտանիքով տեղատրուեց Երեւանի Արաբկիր աւանում՝ պետութեան կողմից իրեն յատկացուած պատրաստի բնակարանում՝ ներգաղթողների համար կառուցուած շենքերից մէկում:

Հայաստան հաստատուելու առաջին իսկ օրուանից Յակոբն անցաւ աշխատանքի Երեւանի պետական համալսարանում, սկզբում գրադարանի աշխատակից, այնուհետեւ, որպէս գիտական աշխատող, նշանակուեց պատմութեան բաժնին կից Մարի անուան գիտական բաժնում: Մի քանի ամիս անց նշանակուեց նոյն բաժնի վարիչ:

Յակոբը այդ պատուաբեր պաշտօնը վարեց գրեթէ հինգ տարի անընընդմէջ՝ մինչեւ Հայրենական Մեծ պատերազմի սկիզբը: Պատերազմի առաջին իսկ օրուանից Յակոբը գորակոչուեց Սովետական բանակ: Սկզբում՝ շտաբի գրասենեակում որպէս գրագիր: Այնուհետեւ դարձաւ գումարտակի մշակութային մասի պատասխանատու: Գումարտակը, որը

սկզբում գործում էր Աշտարակ-Լենինական խճուղու վրայ, տարուայ վերջերին շարժուեց դեպի Հիւսիսային Կովկաս և 1942 թ. Սկզբներին Թամանի նեղուցով անցաւ Ղրիմի թերակղզին, ուր տեղաւորուեց Կերչի մօտակայքում: Գերմանացիների վերջնական գրոհի ժամանակ նո. 40 գումարտակի և սովետական այլ զօրամասերի հետ միասին, գերի մնաց գերմանացիների ձեռքում և տարուեց Ռումինիա, ուր հանգրուանեց Բուխարեստին մօտակայ Բոլգրադ գիւղաքաղաքի ռազմագերիների նո. 8 կայանում:

Բոլգրադի կայանում Յակոբը, որպէս մտաւորականի, ազատուել էր ֆիզիկական աշխատանք կատարելուց: Նման մարդասիրական վերաբերմունքի համար նպաստաւոր եղաւ այն հանգամանքը, որ նրա շինելի (զինուորական վերարկու) թեւերի միջից գերմանացի սպաները յայտնաբերելցին մի քանի գրքեր և ձեռագրային շատ նիւթեր, որոնք սկզբում բռնագրաւուեցին, բայց ստուգումներից յետոյ վերադառնեցին որպէս գիտական աշխատանքներ:

Յակոբը Երեւանում, բանակ մեկնելիս, հետոն էր վերցրել վերոյիշեալ գրքերն ու ձեռագրերը այն նկատառումով, որ իր ազատ ժամերին կարողանար գրել մի ուսումնասիրութիւն՝ հետեւեալ վերտառութեամբ. <<Մի էջ ոռւս-թուրքական յարաբերութիւնների պատմութիւնից և Երեւանի 1724 թ. Հերոսամարտը>>: Եւ, իրոք, նա բանակում զգալի չափով

աշխատել էր այդ թեմայի վրայ, իսկ Բոլգրադում, կայանի հրամանատարը (Մայոր Լազարովիչ), որ ծագումով հայ էր, թոյլ էր տուել, որ Յակոբը շարունակի իր այդ աշխատանքը, միաժամանակ ցանկութիւն յայտնելով, որպէսզի նա թարգմանէր այդ աշխատութիւնը ֆրանսերէնի եւ տպագրուէր կայանի տպարանում:

Այս աշխատութեան Գ. Գլուխը գրեթէ աւարտուեց Բոլգրադում: Այս շրջանում Յակոբը տեղեկութիւններ էր հաղորդել իր վիճակի եւ աշխատանքների մասին Փարիզ՝ Արշակ Չոպանեանին: Վերջինս տեղեկանալով Յակոբի վիճակի մասին, տեղեակ էր պահել նաեւ զրականագետ եւ զրաքննադատ Յակոբ Սիրունուն, որ Բուխարեստում էր ապրում: Սիրունին երկիցս այցելեց նրան՝ նուերներ բերելով իր հետ: Ի թիս դրանց, նա Յակոբին նուիրեց նաեւ <<Սիքայել Էմինեսկու>> գիրքը: Այդ գրքում Սիքայել Էմինեսկուի ծագման մասին վերաբերող գլուխը գիտական հետաքրքրութիւն առաջացրեց Յակոբի մօտ, եւ նա գրեց հարցին լեզուաբանական հիմունքով կարեւոր ձշում բերող մի յօդուած՝ <<Ոչ թէ Էմինովիչ, այլ՝ Էմինովիչ>> (Պրոֆ. Ն. Եռրգայի տեսակէտի Ժխտումը), որը ժամանակի հանգամանքների բերմամբ չկարողացաւ հրատարակել ոումինական մամուլում:

Հետազայում այդ յօդուածը տպագրուեց 1978 թ. Վիեննայի <<Հանդէս Ամսօրեայ>> ամսագրում:

Յակոբ Սիրունու եւ նրա գլխաւորած Հայ Ռազմագերիների օգնութեան յանձնախմբի շանքերով, 1943 թ. վերջերին Յակոբին տեղափոխեցին մեկ ուրիշ՝ աւելի նպաստաւոր պայմաններ ունեցող ռազմակայան: Որոշ ժամանակ անց, յատուկ կարգադրութեամբ, այնտեղից <<աշխատանքի>> տարուեց Քերիլայի շաքարի գործարան, որը հայկական ձեռնարկութիւն էր, որի տէրն էր մեծահարուստ Ֆրենգեանը: Այս ձեռնարկութիւնում էր, որ Յակոբի համար ստեղծեցին բնակութեան եւ ապրուստի հանգստաւետ պայմաններ: Այնտեղ նշանակուելով որպէս գրասենեակային պաշտօնեայ, հնարաւորութիւն ունեցաւ ուսումնասիրելու ռումիներէն լեզուն՝ մինչեւ 1944 թ. Օգոստոսի 23-ի յեղաշրջման օրը, երբ Ռումինիան իր գենքը շրջեց գերմանացիների դեմ:

Ի տես այդ օրուայ Վտանգաւոր խառնաշփոթութեան, Յակոբը կեանքը փրկելու համար խոհեմութիւն համարեց փախուստ տալ Քերիլայից եւ հետիոտն ճանապարհով 12 կիլոմետր քայլելուց յետոյ հասաւ Բուխարեստ:

Բուխարեստում Յակոբը նորաստեղծ <<Հայաստանեան ճակատ>> կազմակերպութեան հրաւերով, Ռումինահայ Միութեան պատկանող Հայ Մշակոյթի տան մէջ պաշտօնի կոչուեց՝ որպէս տնօրէն Ռումինահայ Կենտրոնական Մատենադարանի եւ թանգարանի, որոնք հիմնադրուել էին Յակոբ Սիրունու շանքերով:

Այդ մատենադարանի տպագիր գրականութեան եւ արխիւային նիւթերի եւ, մանաւանդ, Ռումինական Ակադեմիայի գրադարանից օգտուելու իրաւունքը, որ նա առացաւ Սիրունու օժանդակութեամբ, Յակոբին հնարաւորութիւն տուեցին ընթացքի մէջ գտնուող իր աշխատանքների ուղիով նոր որոնումներ կատարելու:

Մի քանի քայլ առաջ տանելով <<Մահտեսի Շահմուրատ եւ Յովիաննէս Թութունջի>> թէմայի գծով իր հետազոտութիւնները, Յակոբը զրեց <<Ճայր Օստոմանը եւ արևմտահայոց ազատազրութեան խնդիրը (ԺԷ. Դար)>> իր նոր ուսումնասիրութիւնը եւ Արամ Նայիրեան հեղինակային կեղծանունով ներկայացրեց Մշակոյթի Տան կողմից կազմակերպուած հայագիտական մրցոյթին, որի գրադատ ատեանի միաձայն որոշմամբ արժանացաւ մրցանակի (5 Յունիս, 1945 թ.):

Բուհարեսում Յակոբի երկամեայ (1943-1945 թ.թ.) գիտական բուռն գործունեութեան արզասիրը եղան մի քանի արժեքաւոր աշխատութիւնների համար նիւթեր հաւաքելը, որոնց թուում՝ <<Մի էջ ոուս-թուրքական յարաբերութիւնների պատմութիւնից>> թէման, որը գիտական աշխատութեան վերածելու համար, նա ստուար քանակութեամբ նոր նիւթեր հաւաքեց օստար աղբիւրներից:

Բաւական շհամարելով <<Ոչ թէ Իմինովիչ, այլ Էմինովիչ>> յօդուածով հանդէս բերած իր նախնական

հետաքրքրութիւնները Էմինականի հարցում, Յակոբը հետամուտ եղաւ ի մի հաւաքելու նրա ծագման հայկական վարկածի վերաբերեալ ռումինական պարբերական մամուլում եւ զրականութեան մէջ եղած կարեւոր նիւթերը: Յակոբը արխիտային նիւթեր հաւաքեց ռումինական եւ շրջակայ երկրների հայ գաղթականութիւնների պատմութեան վերաբերեալ, ըստ որում արտազրեց 17-րդ դարից ի վեր Բուկովինայում իր հասարակական գործունեութեամբ յայտնի՝ հայազգի Կապրի (Գրեան-Գրեյան) գերդաստանի անտիպ պատմութիւնը, որը 1836 թ. գրի է առնուած Սուչաւայի հայերէնի ուսուցիչ՝ Տիրացու Աստուածատուր Ռումաշկանի ձեռքով:

Այս ամէնի հետ մէկտեղ, Յակոբի մտքում օրէօր, ել աւելի էր հասունանում հայրենիք վերադառնալու գաղափարը, որի իրականացման համար անհրաժեշտ էր թողնել իր զրաւած պաշտօնը, որպէս Հայ Մշակոյթի տան տնօրէն:

**ՃԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ,-** Հայրիկս գրեթէ չորս տարի, թէեւ, հիմնականում գերութեան մէջ, հիմնականում աշխարհիկ կեանքով է ապրել եւ զիտական հսկայական գործունեութիւն է ծաւալել: Մտերմիկ կապերի մէջ է եղել հիմնականում Բուխարեստի մտաւորականութեան հետ: Եղել է նշանաւոր պատմաբան, հայագիտ Յակոբ Սիրունու մտերիմ բարեկամը: Նրանց մտերիմ կապը շարունակուել է նաև

պատերազմից յետոյ: Սիրունին քանից եղել է Հայաստանում եւ հիւրընկալուել մեր բնակարանում:

Հայրիկս աւելի քան մտերիմ կապերի մեջ է եղել Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի հետ: Նրանց մտերիմ կապը ձեւատրուել է հենց Բուխարեստում՝ 1944 թ.: Մի ընտանեկան պսակադրութեան ժամանակ, երբ ապագայ վեհափառը Վարդապետի հագուկապով էր իրականացնում պսակադրութեան արարողութիւնը:

Հայրիկիս եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի մտերմիկ կապը հետագայում վեր է ածուել գիտական համագործակցութեան: Վեհափառ Հայրապետը հայրիկիս առջեւ լայնօրէն բաց է արել <<Էջմիածին>> ամսագրի էջերը, ուր աւելի քան 20 տարի տպագրուել են նրա գիտական յօդուածները: Դրանց համար վճարուած առատաձեռն հոնորարները մեր ընտանիքին ազատել են այդ տարիների համար բնորոշ տնտեսական տաղտուկից:

Ի վերջոյ, 1945 թ. Յուլիս ամսին սովետական ռազմական ստուգողական մարմինը քոյլատրում է Յակոբին վերադառնալ հայրենիք: Մէկ ամիս Կոնստանցայում եւ նոյնքան Մոլդավիայում մնալուց յետոյ, Հոկտեմբեր ամսին Յակոբը վերադառնում է Հայաստան եւ նոյն ամսի 20-ին անցնում իր նախկին աշխատանքին՝ Երեւանի պետական համալսարանում՝ որպէս գրադարանի գիտական մատենագիտութեան բաժնի վարիչ:

Այս նոյն հանգամանքով՝ Յակոբը դեռեւս նախապատերազմեան շրջանում էր ուշադրութեան արժանացել Համալսարանի գիտական մասի փոխտնօրէն, ակադեմիկոս Աբգար Յովհաննիսէանի կողմից, ուստի եւ վերջինս երկու տարի ժամկետով պայմանագրային աշխատանք յանձնարարեց նրան՝ <<Հայ հին եւ միջնադարեան զրականութեան մատենագիտութիւն>>կազմելու համար՝ արտապլանային կարգով: Յակոբը ստորագրել էր պայմանագիրը, շարունակաբար ստացել հոնորարի ամսական գումարները, բայց, տարուած իր սեփական ծրագրերով, անտեսել էր գործի իրագործումը՝ բուռն թափով առաջ տանելով <<Մահտեսի Շահմուրատ եւ Յովհաննես Թութունջի>> թեմայի գծով իր հետազոտութիւնները, շարադրել էր <<XVII դարի արեւմտահայ ազատազրական շարժումների պատմութիւնից>> ուսումնասիրութիւնը եւ ներկայացրել էր Ակադեմիկոս Աբգար Յովհաննիսէանին՝ պայմանագրային աշխատանքի փոխարէն:

Թեմայի այսպիսի փոխարինումը թէեւ իրաւաբանօրէն թոյլատրելի չէր, բայց սիրով եւ արտակարգ հետաքրքրութեամբ ընդունուեց ակադեմիկոսի կողմից, եւ նա տեղնուտեղը նոր պայմանագիր կնքեց Յակոբի հետ այս աշխատութիւնը <<գրելու>> համար: Վճարեց տոկոսային յարաբերութեամբ հասնող կանխավճարը եւ կարգադրեց, որ Անասեանի գործը

մեքենագրուի Համալսարանի հաշուին և ապա ներկայացուի իրեն:

Մօտ մէկ ամիս յետոյ մեքենագրուած վիճակում Աբգար Յովհաննիսեանին ներկայացրին Յակոբի աշխատութիւնը՝ տպագրութեան համար պատրաստի վիճակում: Խիստ ոգեւորուած գիտնականը կարգադրեց ամբողջութեամբ վճարել հեղինակին, թէեւ, ըստ պայմանագրի, վերջնահաշիւր պիտի իրականացուէր աշխատութեան տպագրութիւնից յետոյ միայն: Դրա հետ միասին նա ասաց.

«Այժմ այս աշխատութիւնը Համալսարանի սեփականութիւնն է, սակայն՝ ափսո՞ւ...: Կը մնայ արխիտում, եւ, հաւանաբար երբէք չի հրատարակուի, որովհետեւ ես այլեւս այստեղ չեմ լինելու: Ինձ տեղափոխում են Ակադեմիա՝ Պատմութեան ինստիտուտի դիրեկտորի պաշտօնով: Այժմ պահեք հատորը ձեզ մօտ, յետոյ այն կը բերէք ինստիտուտ: Ձեզ կը այնտեղ աշխատանքի կընդունեմ՝ Գիտաշխատողի պաշտօնով>>:

Գործը այս վիճակում էր, երբ 1947 թ. Սեպտեմբերի 20-ին, Յակոբին ազատեցին համալսարանում իր ունեցած պաշտօնից, հաստիքների <<կրծատման>> պատճառով:

1947 թ. Հոկտեմբերի 7-ից Յակոբը աշխատանքի անցաւ Հայաստանի Գիտութիւնների Ակադեմիայի պատմութեան ինստիտուտում՝ սկզբում գիտական մատենագիտի պաշտօնով, որը հետզհետէ փոխա-

թինուեց սկզբում կրտսէր եւ ապա աւագ գիտական աշխատողի պաշտօններով: Այս հանգամանքով Յակոբը համարուեց ինստիտուտի Հին եւ Միջին դարերի պատմութեան բաժնի անդամ եւ ստացաւ աղքիրագիտական թեմա՝ <<Հայ ժողովրդի պատմութեան մատենագիտութիւն>> անուանումով:

Հետագայում այս աշխատութիւնը ընդունելով հայագիտական համապարփակ բնոյթ, դարձաւ՝ <<Հայկական Մատենագիտութիւն>>:

Որպէս պատմագիտական կարեւոր ուսումնասիրութիւն, Յակոբի <<XVII դարի արեւմտահայ ազատագրական շարժումների պատմութիւնից>> աշխատութիւնը ինստիտուտի տնօրէն Աբգար Յովհաննիսեանի կողմից ներկայացուեց ինստիտուտի Գիտական Խորհրդի նիստին եւ միաձայն որոշումով մտցուեց 1948 թուականի հրատարակչական պլանի մէջ: Սակայն, որոշ ժամանակից յետոյ, տնօրէնը նրան ցաւով յայտնեց, որ Կուսակացական Կենտրոնական Կոմիտեում, ինստիտուտի հրատարակչական պլանը քննելիս, դրանից դուրս են հանել Յակոբի աշխատութիւնը, այն պատճառաբանութեամբ, թէ ներկայացուող ազատագրական շարժման քաղաքական կողմնորոշումը ոռւսական չէ, այլ՝ արեւմտաերպական, հետեւաբար՝ <<գիտական չէ>>:

- Դժբախտաբար,- ասաց նա,- այդպէս եղաւ, ես իրաւամբ, նախապէս կ մտավախութիւն ունէի, որ այդպէս կ կը լինի: Բայց դուք մի վհատուեք, տաշած

քարը գետնին չի մնայ: Առաջմ կը պահուի արխի-  
տում: Նրա օրն էլ կը գայ անպայման եւ կը հրա-  
տարակուի:

Յամենայն դեպս, Յակոբի համար հասել էր զիտա-  
կան լուրջ աշխատանքների լծուելու ժամանակը: Նա  
զեկուցումներով եւ հաղորդագրութիւններով հանդէս  
էր գալիս բաժնի նիտերին, մասնակցում էր զիտա-  
կան հարցերի քննարկմանը: Միաժամանակ՝ Երե-  
ւանի պետական Մատենադարանի ձեռագրերում  
հետազոտութիւններ էր կատարում եւ նոր յայտնու-  
ող նիւթերի հիման վրայ պատմական եւ բանասի-  
րական հարցեր էր մշակում: Բայց ժամանակներն  
այնպիսին էին, որ նա չէր կարող հանդէս գալ պար-  
բերական եւ զիտական մամուլում (որպէս անվատա-  
հելի անձի՝ բանակում գերի ընկած լինելու պատ-  
ճառով,- ՀԵՆ. Ա.):

Ստալինեան դիկտատուրայի եւ անհատի պաշտա-  
մունքի այդ տարիներին, այդ ծանր մթնոլորտում  
խմբագիրներն արտակարգօրէն զգուշաւոր էին՝  
ընդհանրապէս, իսկ յատկապէս՝ մարքսիստական-  
սովետական դպրոցի բովով չանցած հեղինակների  
վերաբերմամբ: Այդ դրութեան մէջ, Ակադեմիայի  
հասարակական զիտութիւնների <<Տեղեկագրի>>  
խմբագրութիւնում երկար ժամանակ Յակոբի նիւթը  
քննելուց յետոյ, 1951 թ. հազիւ հազ լոյս տեսաւ ՅԱ-  
ԿՈԲ ԱՆԱՍԵԱՆ ստորագրութիւն կրող <<Թուր-  
քական տիրապետութիւնը Հայաստանում XVII

դարում» յօդուածը, այն էլ՝ ինստիտուտի աւագ գիտաշխատակից՝ Պրոֆ. Վարդան Պարսամեանի պնդումով եւ աշխատասիրութեամբ: Մինչ այդ, Յակոբը կարողացել էր ի հարկէ, մի քանի յօդուածներ տպագրել աշքից հեռու համարուող <<Էջմիածին>> ամսագրում (1949-50 թ.թ.):

Սակայն, այդ նոյն շրջանում ստալինեան վարչակարգի ուղեգծից բխող մի ծանր հարուած էր սպասում Յակոբին:

Թէեւ Ակադեմիայի Հասարակական Գիտութիւնների Բաժանմունքի Բիւրոն, հաստատելով Վկայագրող Յանձնաժողովի որոշումը, 1951 թ. Յուլիսի 2-ի իր նիստում որոշում էր ընդունել թողնել Յակոբին իր պաշտօնում՝ որպէս իրեն արդարացնող գիտաշխատողի, հակառակ այդ իրողութեան, ստեղծուեց անակընկալ դրութիւն:

Ակադեմիայի Նախագահութիւնը, Յուլիսի 10-ի իր նիստում ընդունուած որոշումով, մի քանի ինստիտուտներից պահանջում էր աշխատանքից ազատել 13 գիտաշխատողների, որոնց թում եւ Յակոբին, առանց նշելու որոշման իրաւական հիմքերը: Սակայն շուտով պարզուեց, որ դրա հիմքը Հայաստանի Կոմունիստական Կուսակցութեան Կենտկոմի իրահանգն էր՝ վտարել աշխատանքից բոլոր նրանց, ովքեր պատերազմի ժամանակ գերութեան մէջ են գտնուել:

Պատմութեան ինստիտուտի տնօրէնը փորձեց ձգձգել այդ հրամանի գործադրումը, բայց յետոյ հարկադրուեց աշխատանքից ազատել Յակոբին: Յակոբի տուած դիմում-քացատրագերը՝ ուղղուած Ակադեմիայի նախագահ Վիկտոր Համբարձումեանին եւ Կենտկոմին՝ ոչ մի ցանկալի արդիւնք չտուին:

Միայն նոյն տարուայ Նոյեմբերի վերջերին էր, որ թոյլ տրուեց վերականգնել նրա արդարացի իրաւունքները: Եղած <<թիւրիմացութեան>> եւ անգործութեան շրջանի համար նիւթական հատուցում չստացաւ Յակոբը, բայց նրա բարոյական իրաւունքների ապացուցման վկայութիւնները եղան իրարետեւից իրեն շնորհուած չորս շքանշանները՝ կապուած Հայրենական Մեծ Պատերազմի յաղթանակի հետ:

Դեռ տարին չեր լրացել աշխատանքի մէջ վերականգնուելու օրուանից, երբ մութ ամպերը նորից կուտակուեցին Յակոբի զիսավերեւում:

1952թ. Աշնանը սկսուեց այսպէս կոչուած միասնական հոսանքի գաղափարախօսութեան դէմ Ակադեմիայի յատուկ բաժանմունքի կողմից կազմակերպուած քննութիւնների շաբաթը, որը տեւելով մինչեւ յաջորդ տարուայ սկզբները, սարսափի մթնոլորտ ստեղծեց պատմագիտութեան, գրագանագիտութեան ասպարեզների գիտաշխատողների համար:

Խնդիրը վերաբերում էր 18 եւ 19-րդ դարերի հայ հասարակական-քաղաքական հոսանքների զնա-

հատման հարցին: Ակադեմիայի ցանցում, Համալսարանում եւ գիտական այլ հիմնարկներում աշխատող մասնագետներից շատեր խստագոյնս քննադատութեան ենթարկուեցին՝ դասակարգային պայքարի պետական օճի անտեսման կամ նրանից ունեցած շեղումների համար: Մատնանշումների կարգով, յանուանէ բեմ էին հրաւիրում շատ յայտնի մասնագետներ, որոնք ճգնում էին ինքնաքննադատութեամբ բացայացտել իրենց <<սխալները>> եւ ներման արժանանալ: Այդպիսիներից էին Պրոֆ. Մկրտիչ Ներսիսեանը, Արգար Յովհաննիսեանը եւ Վարդան Պարսամեանը:

Այս քննարկումների ընթացքում Հայաստանի Պետական Պատմական թանգարանի աշխատակից Վ. Մելիքսեթեանը եւ Հայաստանի Գրողների Միութեան քուրդ գրողների մասնաճիւղից Հաջիկ Զնդին ամրիոնից ուշադրութեան հրաւիրեցին նաեւ Յակոբ Անասեանի <<Թուրքական տիրապետութիւնը Հայաստանում XVII դարում>> յօդուածի վրայ, ասելով թէ հեղինակը Զալալիների շարժման սոցիալական բնոյթի հարցում, յենուելով հայկական աղբիւրների վրայ, անքննադատօրէն բերուած փաստերի վրայ, անուղղակիօրէն հակադրում է սովետական պատմագիտութեան մէջ <<ընդունուած>> տեսակետին, որի համաձայն՝ այդ շարժումը զիւղացիական է: Բարեբախտութիւն էր, որ այդ մատնանշումին անմիջական արձագանգողներ չեղան, այլապէս Յա-

կորը եւս կը հրաւիրուէր մեղայական ելոյթ ունենալու: Իսկ նման հարուածի տակ ընկնելը՝ կարող էր եւ պատճառ դառնալ դուրս ընկնելու գիտական ասպարեզից:

Վերեւից թելադրուած այս բանավէճ-քննարկումները հանդիսանում էին գործունեութեան մի ձեւ, մի մեթոդ, որի նպատակն էր ահուսարսափի միջոցով քաղաքական զգաստութեան մէջ պահել բոլորին՝ ներշնչելով վտանգի մէջ գտնուելու գիտակցութիւնը:

Յակորը Ստալինեան վարչակարգի դաժանութիւններին ենթարկուեց նաեւ 1952 թուականի աշխանը, երբ Հայաստանի Ներքին Գործերի Նախարարութեան գաղտնի գործակալներ Գրիգոր Ղուկասեանը եւ ումն Ստեփանեանը (որոնք կեղծ անուններ էին անտարակոյս), խարդաւանքով գաղտնի հարցաքննութեան տարան նրան՝ կենսագրական որոշ հարցեր լուսաբանելու պատրուակով:

<<Հարցաքննութիւնը>> տեղի ունեցաւ մի կողմնակի վայրում, Օվիրի շենքում, Ազիզբեկովի հրապարակի վրայ: Առաջին իսկ բոպէից նրանք ազդարարեցին.

<<Պէտք է իմանաք, որ մեր երկրում կայ երկու տեսակ օրէնք՝ զրուած օրէնք եւ չզրուած օրէնք: Առաջինի մասին դուք արդէն գիտէք, իսկ երկրորդի մասին՝ մենք յայտնում ենք ձեզ հիմա: Այս բոպէից սկսած՝ դուք գտնուում էք չզրուած օրէնքի ազդեցութեան տակ: Վերջնականապէս: Զեր կեանք ենթար-

կուսմ է այս օրէնքի պահանջներին: Դուք իրաւունք չունեք ոչ ոքի յայտնելու մեր եւ ձեր միջեւ ստեղծուող կապի մասին՝ ոչ ձեր հարազատներին, եւ ոչ էլ ձեր բարեկամներին ու ընկերներին: Ոչ աշխատանքի վայրում եւ ոչ էլ պետական մարմիններում: Եթէ որեւէ առիթով գործ ունենաք նրանց հետ՝ մենք ձեզ չենք ճանաչում:: Դուք հիմա յանձնառութիւն եք գրում, որ մեր օրէնքը խախտելու դէպրում՝ պատասխանառու եք ձեր կեանքով:>>

Առաջին հանդիպման ընթացքում պարզուեց, ուրեմն, որ այս գործիչների նպատակը ոչ թէ Յակոբի կենսագրական տուեալներ ճշդելն էր, այլ սարսափի ենթարկելով նրան՝ յանձնառու դարձնել լրտեսութիւն կատարելու իր շրջապատում, յատկապէս իր գիտական գործունեութեան շրջանակում: Այնուհետեւ շաբաթական պարտադիր հանդիպումներով եւ հետզհետէ ուժեղացող սպառնալիքներով, այդ գործիչները աշխատանք էին պահանջում Յակոբից, բայց չէին կարողանում նրանից որեւէ ցուցմունք ստանալ որեւէ մէկի մասին:

Եւ երբ 1953 թ. Մարտի 5-ին մահացաւ Ստալինը, այդ գործիչներն ինքնաբերաբար անյայտացան, ըստ երեւոյթին: Ներքին Գործերի Նախարարութիւնում ծագած ներքին խլրտումների հետեւանքով:

Այս ամիսների ընթացքում Յակոբը հոգեկան ահաւոր ոլլերգութիւն էր ապրում՝ չկարողանալով մէկ րոպէ անզամ կենտրոնանալ գիտական աշխատանք-

ների վրայ, որովհետեւ այդ չարաղետ գործիչներն ասել էին, թէ ազատում չունի դժոխային այդ վիճակից դուրս գալու:

**ՀԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ,-** Ես, իհարկէ ամենայն մանրամասնութեամբ յիշում եմ այդ պժգալի եւ սարսափելի օրերը եւ, իմ՝ <<ԱՅՍ ԵՄ ԵՍ>> գրքաշարի 2004 թ. հրատարակուած 5-րդ հատորի՝ հայրիկիս նուիրուած բաժնում անդրադարձել եմ KGB-ի գործակալների կողմից նրան լրտեսական ցանցի մէջ ներգրաւելու փորձի մասին։ Ուստի նպատակահարմար եմ գտնում այդ հատորից մէջ բերել ներքոյ պատմութիւնը։

Ես այսօրուայ նման յիշում եմ այդ դառն օրերը։ Խորհրդաւոր լուրջիւն էր տիրում մեր տան մէջ։ Հայրիկս բնաւ չէր խօսում։ Շրջապատի նկատմամբ անտարբեր, երբեմն-երբեմն առանձնանում էր մայրիկիս հետ հարեւան սենեակում։ Ես զգում էի, որ ինչ որ վատ բան էր կատարուում նրա հետ։

Պատահում էր, որ մէկ-երկու օրով բացակայում էր տնից։ Նկատում էի, որ մայրս էլ խոհանոցում մի անկիւնում կծկուած, իբր թէ ինձնից ու եղբորից աննկատ մնալու համար՝ լռելեայն լալիս էր։

Զգուած ու պրկուած օրերից մի օր, երբ նոր էի վերադարձել դպրոցից (մայրս ու եղբայրս որպէս սեւազործ բանուորներ աշխատում էին նորակառոյց շէնքի վրայ), տեսայ, որ հայրիկս մենակ է տանը։

- Տղաս, Հենրիկ ջան, ես քեզ մի յանձնարարութիւն եմ տալու։ Դու՝ թէեւ փոքր, ուշիմ ես, ու կարող ես անել այն՝ ինչ խնդրելու եմ,- ասաց նա։ Ինչ որ

ասելու եմքեզ, ոչ ոք պիտի չիմանայ, նոյնիսկ մայրդ ու եղբայրդ, խօստանո՞ւմ ես որեւէ մէկին չասել մեր զրոյցի մասին:

- Այո՛, խոստանում եմ հայրիկ:

- Ես հաւատում եմ քեզ, եղբայրդ, ճիշդ է, քեզնից մեծ է տարիքով, բայց նա միամիտ է, մաքո՞ւր, կարող է պահի ազդեցութեան տակ զաղտնիքը երեւան հանել..., իսկ դու, վաստահ եմ՝ կարող ես զաղտնիք պահել: Ուշադիր լսիր:

- Նայիր պատին կախուած այն նկարին, որ Փարփակից ենք բերել, ուու էլ շատ ես սիրում այդ նկարը (ներկայումս այդ նկարը կախուած է իմ աշխատասենեակում): Ես քիչ յետոյ տեղ եմ գնալու: Այդ նկարի ետեւում շատ կարեւոր մի բան կայ, թէ ի՞նչ՝ պէտք չէ, որ դու, կամ որեւէ մէկը իմանայ այդ մասին: Եթէ երկու օրից չվերադարձայ, այն՝ ինչ թաքցրել եմ նկարի ետեւում, առանց նայելու, թէ դա ինչ է, ժամանակի ընթացքում, ինչ որ ձեւով կ'ուղարկես արտասահման..., հասկանալի՞ է:

Այդքան լրջօրէն տրուած յանձնարարութիւնն էր հաւանաբար պատճառը, որ մէկ վայրկեան կարկամեցի, չկարողանալով անմիջապէս պատասխանել, զիտակցելով յանդերձ, որ, թէրեւս, վերջին անգամն եմ տեսնում հայրիկիւ:

- Դէ՞ն, ասա, խօսիր Հենրիկ, կը կատարէ՞ յանձնարարութիւնս: Խոստացիր նաեւ, որ այս երկու օրուայ ընթացքին չես փորձի նայել, թէ ինչ է թարնուած նկարի ետեւում:

Ես, իհարկէ, պահեցի խոստումս եւ հօրս գնալուց յետոյ, որքան էլ ցանկութիւն ունէի բացայատել հայրիկիս զաղտնիքը՝ ես ինձ զապէցի:

Բախտի կամօք՝ հայրս երկրորդ օրը տուն եկաւ: Յաջորդ օրը հետաքրքրութեան համար նայեցի Ֆրանսիայից բերուած նկարի ետեւը, բայց..., բայց ոչինչ չկար: Ես այդպէս էլ չիմացայ, թէ հայրիկս ինչ էր թաքցրել շուեցարական հիանալի մի տեսարան պատկերող նկարի ետեւում: Յետազայ բոլոր տարիներին երբեւէ ես ինձ թոյլ չեմ տուել հարցնել հայրիկիս. թէ ինչ էր նա թաքցրել նկարի ետեւում: Այդ նիւթի շուրջ բնաւ խօսակցութիւն չի եղել մեր միջեւ:

...1977 թ. խոր աշնան օրերից մի օր (Ամերկա մեկնելուց երեք ամիս առաջ), հայրիկիս հետ իջնում ենք Արովեան փողոցով: Յանկարծ, աներեւոյթ մի ուժի ազդեցութեան տակ հայրիկս քարացաւ տեղում:

- Հայրի կ, ի՞նչ եղաւ քեզ, գոյնդ էլ զցեցիր, - վախեցած հօրս տեսրից, զրեթէ բղաւելով հարցնում եմ ես:

- Նայի ք, նայի ք Հենրիկ, նայիր դիմացի մայթին, ուսւական թատրոնի առջեւ կանգնած տղամարդուն, որ մեզ է նայում..., տե՛ս, տես դէպի մեր կողմն է զալիս:

Եւ, իսկապէս էլ, չնայած մեքենաների հոսքին, հայրիկիս մատնանշած տղամարդը անվարան փորձում էր դիմացի մայթից անցնել մեր մայթը, բայց..., բայց, այս ի՞նչ բան է՝ մեզ տեսնելուն պէս, շփորուած, մի տեսակ իրեն կորցրած, անմիջապէս փոխեց մտադրութիւնը եւ ետ դարձաւ դէպի իր մայթը:

- Գիտե՞ս ով էր այդ մարդը տղաս...

- Ո՞վ էր հայրիկ, որ մեզ տեսնելուն պէս արագօրէն շրջուեց ու մի տեսակ փախաւ մեզնից:

- Իհա րկէ կը փախչի... նա 25 տարի առաջ օրեր, ամիսներ շարունակ ինձ հարցաքննող ԿԱ-ԳԷ-ԲԷ-ի

քննիչն էր: Ասեմ, որ այս քննիչը տարիներ շարունակ փորձել է մտաւորականներին ներգրաւել լրտեսական գործունեութեան մեջ: Այդ սրիկան է, որ երիտասարդ տարիքում հարցաքննութեան ժամանակ սիզարետ է մարել Աճառեանի լերկ զիսի վրայ:

Մղձաւանջային այդ օրերից յետոյ՝ Յակոբը կարողացաւ անցնել իր ասպարեզի աշխատանքներին: Այդ բարեբաստիկ իրողութեան առաջին արտայայտութիւնը եղաւ նրա հանդէս զալը VIZANTISKI VREMENNIK պարբերականում, Կ. Պոլսի անկման 500-ամեակին առնչուող հայագիտական թեմայով: Եւ այնուհետեւ, երկար տարիներ, մինչեւ 1976 թ. ներարուեալ, Պատմութեան ինստիտուտում ունեցաւ անվերապահ լուրջ գիտահետազոտական արդիւնաւետ գործունեութիւն՝ վայելելով այդ հաստատութեան դեկավարութեան վատահութիւնը եւ գիտական աշխատակիցների անվերապահ համակրանքը:

Այս ժամանակաշրջանում Պատմութեան ինստիտուտը ունեցաւ 4 տնօրէններ՝ Ս. Ռ. Յովհաննիսեան, Ս. Տ. Երեմեան, Ս. Բ. Յարութիւնեան (Արմօ Յարենց) եւ Գ. Ա. Գալոյեան: Նրանցից առաջին երկուսը լինելով հայագիտութեան հարցերին մօտիկ կանգնած գիտնականներ, ըստ ամենայնի թիկունք են կանգնել Յակոբի աշխատանքներին: Վերջին երկուսը, թէեւ մասնագիտական առումով ի վիճակի չեին գնահատական տալու Յակոբի աշխատանքներին, բայց ակնածանքով էին վերաբերուում նրան՝

առաջնորդուելով ինստիտուտի գիտական անձնակազմի ունեցած կարծիքով:

Ա. Յարութիւնեանը անկեղծօրէն եւ մշտապէս պատրաստ է եղել Յակոբին օժանդակելու, իսկ Գ. Գալյեանը, թէեւ իր վերաբերմունքի մէջ միշտ զուսպ էր, բայց, ընդհանրապէս հեռու էր անցեալ ժամանակների պատմութեան եւ մշակոյթի հարցերին մեծ նշանակութիւն տալու գաղափարից:

Պատմութեան ինստիտուտի Հին եւ Միջին դարերի պատմութեան բաժինը եւ 1971 թուականին նրա վարչական վերակազմման առիթով ստեղծուած առանձինն՝ Միջին Դարերի պատմութեան բաժինը հանդիսացել են այն օղակը, որի մէջ Յակոբը սերտ շփումներ է ունեցել համապատասխան մասնագէտների հետ: Այդ բաժնով են անցել այն շրջանի բազմաթիւ գիտնականներ՝ որպէս աւագ եւ կրտսեր գիտաշխատողներ:

(Այստեղ հայրիկս նշում է բազմաթիւ անուններ, որոնց թուարկումը նպատակահարմար չեմ գտնում հրապարակել՝ հայրիկիս կողմից ումանց անունները ակամայ մոռացութեան տրուած լինելու մտավախութիւնից ենելով, միաժամանակ չվիրատրելու համար նրանց ժառանգների ինքնասիրութիւնը:

Սակայն, ես իմ կողմից ուզում եմ նշել մեծագոյն հնագէտ-պատմաբան Արգար Յովհաննիսեանի եւ Մորուս Հասրաթեանի անունները, որոնք 1949 թուականին, իրենց անձնական երաշխատրագիր-

ստորագրութեամբ փրկել են մեր ընտանիքին Սիրիո  
աքսորուելուց, վկայելով, որ Յակոբ Անասեանը  
աննկուն հայասէր-հայրենասէր է եւ նրա ներկայու-  
թիւնը Հայաստանում անհրաժեշտ է հայագիտու-  
թեան զարգացման համար,- ՀԵՆ. Ա):

Մէկ անուն կ աւելացնեմ՝ Ակադեմիկոս Վլադիմիր  
Բարիուղարեան, որ մահացաւ 2017 թ. Սկզբներին:  
Նրա անմիջական ջանքերի շնորհիւ լոյս տեսան  
Յակոբ Անասեանի կոթողային գործի՝ ՀԱՅԿԱԿԱՆ  
ՄԱՏԵՍԱԳԻՏՈՒԹԵԱՆ 2-րդ եւ 3-րդ հատորները,  
ինչպէս նաև՝ նրա ծննդեան 100-ամեակին նուիր-  
ուած՝ իմ կողմից հաւաքուած ու խմբագրուած  
ՆԱՍԱԿԱՆԻՆ: Երրորդ հատորն ու Նամականին  
լորս տեսան Երեւանում՝ 2004 թուականին,- ՀԵՆ. Ա):

Ստալինի մահից յետոյ փոխուեց կարծես աշ-  
խարհը: Մարդիկ սկսեցին ազատ շունչ քաշել:  
Միանգամից փոխուեց նաև մթնոլորտը Յակոբի  
աշխատանքի վայրում: Այժմ արդէն իր բաժնի ջերմ  
ու խրախուսական մթնոլորտում սկսեցին ձեւալոր-  
ուել ու մարմին առնել նրա յղացած գիտական ծրա-  
գրերը: Պատմութեան ինստիտուտի ներքոյ կեանքի  
կոչուեցին Յակոբի մեծ ու փոքր աշխատութիւններից  
շատերը եւ լոյս աշխարհ ելան տպագրուած:

Յակոբի գործունեութիւնը ընթանում էր յսկողու-  
թիւնից դուրս եւ ճնշումներից ազատ պայմաննե-  
րում: Նոյնիսկ բաժնի վարիչներ Սուլեյ Երեմեանը

Եւ 1971-ից նրան փոխարինած Վազգեն Յակոբեանը որեւէ ձեւով չեն միջամտել նրա գործերին՝ նկատի ունենալով, որ նախ նրա աշխատանքների մասնագիտական բնոյթը համարւում էր իրայատուկ եւ ապա՝ նա խոր վստահութիւն ու համակրանք էր վայելում ոչ միայն ինստիտուտի կողեկտիւում, այլեւ հասարակական գիտութիւնների ասպարեզի գիտնականների շրջանում:

Յակոբը աւելի բարձր վարկի եւ իրական համբաւի տիրացաւ այն ժամանակներից, երբ իրար ետեւից լոյս տեսան <<Հայկական Մատենագիտութիւն>> աշխատութեան Ա. Հատորը (1959թ.) եւ <<ԺԷ դարի ազատագրական շարժումներն Արեւմտեան Հայաստանում>> մենագրութիւնը (1961թ.): Յակոբի՝ որպէս խոշորագոյն պատմաբանի համբաւի էլ աւելի տարածմանը նպաստեց նաև այն հանգամանքը, որ, այս հրատարակութիւնների կապակցութեամբ, հայ մտաւորականութեան լայն շրջանակներում խոր յուզմունքներ առաջացնող անակնկալ դեպքեր պատահեցին:

Նախ՝ <<Հայկական Մատենագիտութեան>> առիթով:

<<Հայկական Մատենագիտութեան>> Ա. Հատորը լոյս է տեսել 1959 թ. 2-րդ կեսին: Նրա երեւումը մեծ ոգեւորութեամբ ընդունուեց հայագիտութեան եւ առհասարակ, հայ մշակոյթի ասպարեզում աշխատող մասնագետների կողմից, թէ Հայաստանում, թէ

նրա սահմաններից դուրս: Երեւանում <<Սովետական Հայաստան>> օրաթերթի եւ գիտական պարբերականների խմբագրութիւնների պատուերներով զրախօսութիւններ էին պատրաստում <<Հայկական Մատենագիտութեանը>> նուիրուած: Միև կողմից, նոյն տարուայ Հռկտեմբերից սկսած, դրսից Երեւան էին հասնում գնահատական նամակներ ոչ միայն սովետական հանրապետութիւնների գիտական հիմնարկներից ու անուանի մտաւորականներից, այլեւ եւրոպական երկրներից (զանց եմ առնում դրանց անունների երկարաշունչ թուարկումը, - ՀԵ.Ա.)

Նոյն շրջանում մեծաթիւ զրախօսականներ էին տպագրում նաեւ օտարերկեայ մամուլում: Սակայն դրանք բաւականին ուշ էին հասնում Հայաստան: Շատ շուտով անակնկալօրէն մթնոլորտը պղտորուեց <<Հայկական Մատենագիտութեան>> շուրջ:

1960 թ. Փետրուարին կայացած Հայաստանի Կոմկուսի 21-րդ համագումարում խստօրէն քննադատուել էին երեք գրքեր՝ որպէս քաղաքականապէս արատաւոր հրատարակութիւններ:

Դրանք էին Յակոբ Անասեանի <<Հայկական Մատենագիտութիւն>>-ը, Պարոյր Սեւակի <<Անլոելի Զանգակատուն>>-ը եւ Արտաշէս Մարտիրոսեանի <<Մարտիրոս Ղրիմեցի>> աշխատութիւնը:

Հենց նոյն օրերին, այս մեղադրանքների արձագանգները երեւացին մամուլում՝ Կենտկումի Առաջին

քարտուղար Սուրեն Թովմասեանի եւ ուրիշների ելոյթներով: <<Հայկական Մատենագիտութիւն>>-ը, որակում էր որպէս ապոլիտիկ (ապաքաղաքական), որովհետեւ, ինչպէս ասում էին՝ ոչնչից չէր երեւում, որ սովետական հրատարակութիւն էր: Ըստ ընդդիմադիրների, այդ գործը նոյնութեամբ կարելի էր հրատարակել բուրժուական որեւէ երկրի հայկական յայտնի կամ անյայտ գիտական կենտրոններից մէկում (Փարիզ, Շոում, Վենետիկ, Լոնդոն): Մեղադրանքներից մէկն էլ այն էր, որ Յակոբը իր գրքում օգտագործել էր ստուար քանակութեամբ միջնադարեան նիւթեր, որոնք, ըստ իրենց, անտարակոյս կը ծառայեն կրօնական պրոպագանդայի եւ ամենեւին պիտանի չեն ժամանակակից սովետական գիտութեան առումով:

Զայնը Կուսակցութեան կենտրոնից էր զալիս եւ մտաւրականութիւնը շփոթուած էր: Վրդովուած էին նոյնիսկ հայագիտութեան հետ առնչութիւն չունեցող մտաւրականները: Նրանցից մէկն ասում էր.

- Ընկեր Անասեան, ես պոլիտեխնիկի մաքսիզմի դասախոս եմ, անունս ... է, մի մտահոգուեք, այդպէս չի մնայ, որովհետեւ ձեր գրքի վերաբերեալ տրուած գնահատականը հակամարքսիստական է, օրը կը գայ եւ յետ կը վերցնեն իրենց գնահատականը: Գրականութեան ինստիտուտի տնօրին Գուրգէն Յովնանը ցաւով ասում էր.

- Սիրելի Անասեան, երանի թէ դուք ձեր աշխատութեան տպագրումից առաջ, ինձ մի անգամ ցոյց տուած լինէիք աշխատութեան ձեռագիրը, այնպէս կանէի որ... օրինակ, ձեր գրքի ներածութեան համար որպէս բնաբան բերուած է 13-րդ դարի վանական Գրիգոր Աբասինի ասոյթը՝ գրքի գիտութեան մասին։ Ես դրա փոխարէն կը դնէի Լենինի մի ասոյթը, եւ կը տենէիք, թէ ինչպիսի գնահատանքի կարժանանար ձեր գիրքը։

ՀԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ,- Ասեմ որ, հայրիկիս <<Հայկական Մատենագիտութեան>> առաջարանում, սովետական շրջանի պատմագրութեան մասին որեւէ արտայայտութիւն չանելն ու Լենինի՝ իբր նրա շնորհիւ հայագիտութեանը զարկ տուողի անունը չիշատակելը, Յակոբը մտածուած էր արել, որովհետեւ, երբ խօսակցութիւններ էին գնում այդ մասին, նա միշտ հաստատակամօրէն առարկում էր ասելով, թէ <<Լենինը այսօր կայ, վաղը կարող է եւ չինել, իսկ ես գրում եմ դարերի համար...>>։

Հասարակութեան մէջ զարմանախառն դժգոհութիւնը համատարած էր, մանաւանդ գրքասկրների շրջանում՝ կապուած Պարոյր Սեւակի <<Անլուկի Զանգակատուն>> պոեմի հետ։

Պետական պաշտօնական քննադատութիւնը Յակոբի գրքի նկատմամբ՝ շանթի հարուած էր։ Համագումարի վաղորդայնին մամուլի խմբագրութիւն-

ները, բոլորը մէկ, հարկադրաբար ձեռք քաշեցին պատուիրուած զրախօսութիւնները հրատարակելու մտքից: Հարցը սկսեց քննուել Կենտկոմում: Պատասխանատութեան կանչուեցին Ակադեմիայի ղեկավարութեան որոշ օղակներ՝ սկսած հասարակական գիտութիւնների բաժանմունքից, յատկապէս Պատմութեան ինստիտուտը, զրքի պատասխանատու խմբագիրը եւ հրատարակչութեան խմբագիրը:

Քննարկմանը մասնակցեցին գիտութեան բնագաւառի մօտ 15 մասնագետներ, որոնց կազմակերպելու գործում եռանդուն աշխատանք կատարեց Պատմութեան ինստիտուտի տնօրէն Արմօ Յարենցը: Եւ նրա նախաձեռնութեամբ ամրողացած այս խումբը թիկունք կանգնեց Յակոբի <<Հայկական Մատենագիտութեան>>-ը: Արդիւնքն այն եղաւ, որ Կենտկոմում մեղմացան տրամադրութիւնները եւ որոշուեց շրջանառութիւնից չհանել <<Հայկական Մատենագիտութիւն>>-ը, բայց համագումարի գնահատականը գոնէ ձեւականօրէն, համարում էր ուժի մէջ, ուստի եւ, անտիա զրախօսութիւնների խնդիրը այսպէս կամ այնպէս՝ մնում էր կալանքի տակ:

<<Հայկական Մատենագիտութեան>> ազատ շրջանառութեան շնորհիւ, աշխարհով մէկ տարածուեց Յակոբի գիրը, որի աղիւնքում լոյս տեսան երկու տասնեակի շափ փայլուն զրախօսականներ (Ես այստեղ զանց եմ առնում թուարկել դրանց անուանի հեղինակների, տպագրութեան վայրի եւ պարբե-

բականների անուանումները, որոնք ամենայն մանրամասնութեամբ ու մատենագիտական մօտեցմամբ շարադրել է հայրս,- ՀԵՆ. Ա.):

Այդ շրջանում Հայաստանում <<համարձակուեցին>> գրախօսութիւն գրել Յակոբի գրքի մասին միայն երկու գիտնական, մէկը Ստեփան Կուրտիկեանն էր, իսկ միւսը՝ Սուրեն Քոլանճեանը:

Հայաստանում տիրող այդ պաշտօնական լրութիւնը եւ անորոշ դրութիւնը տեւեցին մինչեւ կուսակցութեան 22-րդ համագումարը, որը տեղի ունեցաւ 1961 թ. Սեպտեմբերի 21-23-ը: Այդ համագումարում, Սուրեն Թովմասեանի զիսաւորած Կենտկոմի գործունեութեան քննարկման ժամանակ, Հայաստանի Գրողների Միութեան եւ գիտական տարբեր հիմնարկների կուսակցական կազմակերպութիւնների պահանջով, քննադատուեց <<Հայկական Մատենագիտութեան>> հարցում ցուցաբերուած սխալ վերաբերմունքը, որի արդիւնքում ամբողջովին վերացուեց նրա վրայ դրուած ստուերոտ քողը: Դրանից յետոյ կալանքի տակ գտնուող Հայաստանեան բոլոր թերթերն ու ամսագրերը, գիտական պարբերականները ծաւալուն յօդուածներով արժեւորեցին Յակոբ Անսսեանին՝ հայ պատմութեան, մատենագիտական, աղբիւրագիտական գրականութեան մէջ նման հանձարեղ գործ ստեղծելու համար: (Յակոբ Անսսեանի կոթողային աշխատութեանն են անդրադարձել այնպիսի խոշոր գիտնականներ, որպիսիք են՝ Արամ

Ղանալանեանը, Ռաֆայէլ Իշխանեանը, Սուրէն Երեմեանն ու Արտաշէս Մարտիրոսեանը, Գեորգ Աբգարեանը, Սուրէն Քոլանձեանը եւ ուրիշներ, եւ բոլորը նոյն՝ 1962 թուականին, որով եւ փակուեց «Հայկական Մատենագիտութեան» տիտոր պատմութիւնը, - ՀԵՆ. Ա):

Սակայն շուտով այս ամէնին յաջորդեց յուզմունքի մի նոր շրջան, կապուած՝ Յակոբի <<ԺԷ. Դարի ազատազրական շարժումներն Արեւմտեան Հայաստանում>> աշխատութեան հետ, որը տպագրուել էր 1961 թուականին՝ պատմութեան մասնագէտների գրաւոր կարծիքների հիման վրայ: Պատմութեան ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ, այս գիրքը պէտք է պաշտպանութեան դրուեր որպէս թեկնածութեան դիսերտացիա (աւարտաճառ), սակայն նպատականորէն պաշտօնական ընդդիմախօսներ էին նշանակւել երեք դոկտորներ, որպէսզի, ըստ ընդունուած կարգի, հնարաւոր լիներ հենց պաշտպանութեան ժամանակ, դոկտորականի վերածել հեղինակին շնորհուելիք թեկնածուական աստիճանը:

Այս միջոցառումը, որն առաջարկուած էր ինստիտուտի դիրեկտոր Արմօ Յարենցի կողմից եւ պարզաբանուել հին եւ միջին դարերի պատմութեան բաժնի վարիչ Սուրէն Երեմեանի եւ Աշօս Յովհաննիսեանի կողմից, միաձայնութեամբ հաստատուել էր Գիտական խորհրդի նիստում: Յակոբի գրքի

հրապարակային պաշտպանութիւնը պիտի տեղի ունենար 1962 թ. Սեպտ. 29-ին՝ Պատմութեան ինստիտուտի գիտական խորհրդի ժողովում, եւ այդ մասին պաշտօնական յայտարարութիւն էր լոյս տեսել <<Սովետական Հայաստան>> օրաթերթում:

Նշանակուած ընդդիմախօսներն էին Ակադեմիկոս Աշօս Յովհաննիսիսեանը, պրոֆեսոր Բաբկէն Առաքէլեանը եւ Պրոֆ. Սերոբ Պողոսեանը, որոնք սիրայիժար կերպով ընդունել էին այդ պարտականութիւնը: Ընդունուած կարգով, ընդդիմախօսները պաշտպանութիւնից առնուազն 10 օր առաջ պետք է Յակոբին յանձնէին իրենց կարծիքները: Ըստ այդմ Պրոֆ. Պողոսեանը կարծիք էր յայտնել Անասեանի <<ԺԷ. Դարի ազատազրական շարժումներն Արեւմբտեան Հայաստանում>> աշխատութեան համար հեղինակին շնորհել դոկտորական աստիճան:

Պրոֆ. Առաքելեանը գրաւոր յանձնելով իր կարծիքը՝ ասաց. <<Սիրելի Անասեան, գիտէք, որ ես պատրաստ եմ ձեզ դոկտորական աստիճան տալ, եւ հիմա կ ասում եմ, որ դուք արժանի եք դրան, բայց Աշօս Յովհաննիսիսեանն ինձ յայտնեց, որ դեմ է դուրս գալու դոկտորականին, չգիտեմ՝ ինչ պատճառով: Օրէնքն ասում է, որ պաշտպանութեան ընթացքում թեկնածուականը կարելի չէ վերածել դոկտորականի, եթէ միաձայնութիւն չկայ 3 դոկտոր-ընդդիմախօսների միջև: Եկէք՝ ներողամիտ լինել, ձեզ կը տամ թեկնա-

ծուականի կարծիք, որպեսզի անօգուտ վեճեր չստեղ-  
ծուեն պաշտպանութեան ժամանակ>>:

Ելնելով հանգամանքներից՝ նա իրաւացի էր: Յա-  
ջորդ օրը, Պրոֆ. Պողոսեանը իրազեկ դառնալով  
կացութեանը, հեռախօսով նոյն մտահոգութիւններն  
էր յայտնում Յակոբին եւ ազնուօրէն խնդրում նրան՝  
վերադարձնել իրեն տրուած գրաւոր կարծիքը՝ դոկ-  
տորականը թեկնածուականով փոխարիննելու հա-  
մար: Նա եւս իրաւացի էր: Եթէ միաձայնութիւն չկար  
երեք ընդդիմախօսների միջեւ՝ անօգուտ էր պայքա-  
րի մէջ մտնելը:

Այդ օրերին Երեւանում արդէն կայծակի արագու-  
թեամբ տարածուեց այս անակնկալ իրադարձու-  
թեան լուրը: Ողջ գիտական աշխարհը սպասում էր,  
որ Յակոբին կը շնորհուի դոկտորի աստիճան՝ իր,  
մինչ այդ, բացառիկ թեմայով գրուած <<ԺԷ. Դարի  
ազատազրական շարժումներն Արեւմտեան Հայա-  
տանում>> աշխատութեան համար: Սակայն Յակոբի  
եւ զրքի պաշտպանութեան գլխաւոր ընդդիմախօս  
Աշօս Յովհաննիսեանի ջրերը <<նոյն առուով չեին  
ընթանում>>:

Ոչ ոք չէր կարողանում պատկերացնել, թէ ինչ  
պէտք է պատահած լինէր, որ Անասեանին դոկտո-  
րական աստիճան տալու զաղափարին ջերմ պաշտ-  
պան հանդիսացած այդ գիտնականը յանկարծ ըն-  
դունել էր հակառակ դիրք: Սակայն մի քանի օր յետոյ  
Աշօս Յովհաննիսեանի հետ փողոցում պատահա-

կան հանդիպման ժամանակ, հարցուպատասխանի ընթացքում Յակոբի համար ակամայ լուսաբանուել էր այդ խնդիրը:

- Զեր աշխատութեան մէջ,- ասում է Աշուտ Յովհաննիսեանը,- կայ մի արտայայտութիւն, որը, դրժախտաբար իմ ուշադրութիւնից վրիպել էր անցեալում: Դուք Եղիազար Այնթափցու կապակցութեամբ գրում եք, որ Լէոն եւ ուրիշներ գտնուել են Չամչեանի եւ Օրմանեանի ազդեցութեան տակ, այդ ուրիշների շարքում, հաւանաբար ե՞ս կլ կամ, այդպէ՞ս է....:

- Այո՛, դուք կլ կաք...,- ասում է Յակոբը:

- Լաւ ուրեմն, նշանակում է՝ աջն ու ձախը նոյնն են ձեզ համար եւ դուք մարքսիստ պատմաբանին ստորադասում եք բուրժուակղերական պատմաբաններին: Ո՞ւր է Մարքս-Լենինեան ձեր սկզբունքայնութիւնը, ձեր քաղաքական զգաստութիւնը...

Յակոբի համար պարզ էր ամէն ինչ: Խստագոյնս վիրաւրուած էր <<Գիտնական>> Աշուտ Յովհաննիսեանի անհատականութիւնը: Նա նախապէս ծրագրել էր Յակոբի դէմ իր պայքարի բաղադրատարքերը: Այսպէս. խախտելով օրէնքը, նա աշխատութեան՝ ընդդիմախօսի իր կարծիքը փոխանցել էր Յակոբին ուրիշի միջոցով եւ այն կլ քննարկումից միայն երեք օր առաջ, որպէսզի Յակոբը անհրաժեշտ ժամանակը չունենար պատրաստելու իր հիմնաւրուած պատասխանը նրա առարկութիւններին:

Պաշտպանութեան արարողութիւնը տեղի ունեցաւ Ակադեմիայի դահլիճում՝ բազմամարդ մտաւորականների ներկայութեամբ: Դահլիճում էին հաւաքուել Ակադեմիայի բոլոր ինստիտուտների գիտնականները, Երեւանի Պետական համալսարանի եւ Մանկավարժական համալսարանի տասնեակից աւելի դասախոսներ, Գրողների Միութեան անդամներ, արտասահմաննեան երկրներից ժամանած հայ եւ օտար իիւրեր:

Պաշտօնական ընդդիմախօսների ելոյթներից յետոյ, պաշտպանական ելոյթով հանդէս եկաւ Յակոբ Անասեանը: Նրա ելոյթը զրեթէ ամբողջովին ուղղուած էր ակադեմիկոս Աշօտ Յովհաննիսեանի առարկութիւններին եւ տեսակետներին, որի պատճառով խստագոյնս լարուած մթնոլորտ ստեղծուեց սրահում: Յակոբը ոչ միայն խիզախօրէն դիմագրաւեց ակադեմիկոս Յովհաննիսեանի բոլոր քննադատութիւններին՝ իր կողմից փաստարկուած պատախաններով, այլև լիովին անյոդդոդդ մնաց իր դիրքերի վրայ: Յակոբը միաժամանակ հանդէս եկաւ Յովհաննիսեանի <<Դրուագներ հայ ազատազրական մտքի պատմութեան>> աշխատութեան մէջ առաջ քաշուած եւ զարգացուած որոշ կարծիքների անխնայ քննադատութեամբ (այս ելոյթի բնագիրը տեսնել Յակոբ Անասեանի՝ 1987-ին Լոս Անջելեսում տպագրուած 1000 էջանց <<ՄԱՆՐ ԵՐԿԵՐ>> աշխատութեան մէջ, - Հեն.Ա.):

Ելնելով տուեալ պայմաններից, բնական էր, որ պիսզի երեք ընդդիմախօսները կանգ առնեին Յակոբի թեկնածուական կոչման վրայ: Ազատ ելոյթ ունեցող գիտնականներից գրաքննադատ Մինաս Հիւսեանը պատշաճօրէն եւ տեղին դիտել տուեց, որ <<Անասեանի պաշտպանութեան այսպիսի դրուածքը նման էր այն բանին, որ ոազմադաշտում գեներալի պաշտօն ու փայլուն դէր կատարած զինուորականի մասին նստեն խորհրդակցելու թէ նրան տա՞ն արդեօք մայորի աստիճան>>:

Արարողութեան աւարտից յետոյ, դահլիճի եւ միջանցքների եռուզեռում, պաշտպանութեան ունկընդիրների միջեւ սկսուեցին մտքերի փոխանակութիւններ, զլիսաւորապէս այն իմաստով, որ եթէ Անասեանը իրեն համար ճակատազրական այս պայքարում մի կողմ թողնելով <<համեստութիւնը>>, արիաբար չպաշտպանուէր այդ ընդդիմախօսի դէմ, եւ քննադատաբար չպատասխանէր նրա փորձած իւրաքանչիւր հարուածին, ապա տանուլ կը տար լիովին եւ դուրս կընկնէր գիտութեան ասպարեզից: Անզլիացի հայագէտ Չառլզ Դոուսէթը, որը ներկայ եղող արտասահմանեան հիւրերից էր, ասում էր. <<Սա արտակարգ երեւոյթ էր: Մեր մօտ, Անզլիայում, այս աստճանի խստութիւններ չկան դիսերտացիաների ժամանակ: Այսօրուանը, իրականում դիսերտացիայի պաշտպանութիւն չէր, այլ գիտական լուրջ բանավէճ>>:

Ինչպէս <<Հայկական մատենագիտութեան>>, այնպէս եւ <<ԺԵ դարի ազատազրական շարժումներն Արեւմտեան Հայաստանում>> հատորի կապակցութեամբ տեղի ունեցած այս տիտրը դէպքերը խոր յուզմունքի մի շրջան հանդիսացան թէ՝ Յակոբի եւ թէ՝ հայագիտութեան ասպարեզի գիտնականների համար:

Գիտութեան թեկնածուի պաշտպանութեան վաղորդայնին, ակադեմիկոս Աշօտ Յովհաննիսեանը, ի հակադրութիւն Յակոբ Անասեանի պաշտպանական ելոյթի թողած տպաւրութեան, զրախօսականի էր վերածել իր ընդդիմախօսականը եւ այն յանձնել Ակադեմիայի պաշտօնաթերթ <<Պատմաբանափրական հանդէս>>-ի խմբագրութեանը: Խսկ հանդէսի խմբագիր Մ. Գ. Ներսիսեանը, որը պաշտպանութեան ժամանակ դահլիճում ականատէս էր եղել Յակոբի պաշտպանութեան ելոյթի ստեղծած ոգեւրութեանը, որոշել էր ի հակադրութիւն Աշօտ Յովհաննիսեանի զրախօսականի՝ հանդէսի նոյն համարում տպագրել նաև Անասեանի պաշտպանական ելոյթը:

Գրաւիչ թուացող այս առաջարկութեան ընդունումը է՛լ աւելի էր լարուած մթնոլորտ ստեղծելու Յակոբ Անասեանի եւ մոլեռանդ կուսակցական Աշօտ Յովհաննիսեանի միջեւ, եւ թէ հասարակութեան մէջ: Չխօսելով նաև այն մասին, որ ակադեմիկոսի ձեռքերը բաւական <<երկար>> էին եւ վերջինս

կարող էր անպատմելի խոչնդոտներ ստեղծել Յակոբի գիտական գործունեութեան ծառալման համար: Բացի այս ամենից, Յակոբն ու ակադեմիկոսը աշխատում էին միասին, նոյն ինստիտուտում՝ կողք-կողքի: Հետեւաբար, Յակոբը խոհեմութիւն համարեց հրաժարուել մեկ անգամ եւս Աշօս Յովհաննիսեանին հակահարուած տալու մտքից:

«Հայկական մատենագիտութեան» տիաճ դեպքից եւ դիսերտացիայի պաշտպանութիւնից յետոյ, Յակոբ Անասեանի համար աշխատանքի պայմանները դարձան բնականոն եւ նա անկաշկանդօրէն շարունակեց իր հետազոտութիւնները, տրամադրելով իր ժամանակը հիմնականում «Հայկական մատենագիտութեան» յաջորդ հատորների պատրաստութեանը՝ մինչեւ 1976 թ. ներառեալ:

Այս շրջանի աշխատանքներում ուշադրութեան արժանի են առաւելապէս Մատենագիտութեան Բ հատորի լրացումն ու տպագրումը, ուսումնասիրութիւններ Վարդան Այգեկցու եւ նրա նորայայտ երկերի, ու, յատկապէս՝ «Արմատ հաւատոյ»-ի վերաբերեալ, Աստուածաշնչի հայկական թարգմանութեան հարցերի վերաբերեալ, հայկական համարբառային գրականութեան պատմութեան վերաբերեալ, Մխիթարեանների հնագոյն թարգմանութիւնների վերաբերեալ եւ այլ թեմաներով:

Պատմութեան ինստիտուտում եւ, ընդհանրապէս, Յակոբ Անասեանը ձեռք էր բերել որպէս լուրջ մաս-

նագետի համբաւ: Գիտական եռամսեայ գործուղումով նրան Վենետիկ ուղարկելու համար Միփթարեանների կողմից եկած իրաւերի առիթով, ինստիտուտի տնօրէն Գ. Գալոյեանը, Հայաստանի Վենտկումի հաւանութիւնն ապահովելու նպատակով իր բնութագիր-յանձնաբարականում գրում էր.

«Ընդհանուր պատմութեան խոր իմացութիւնը, մի շարք լեզուներ զիտենալը, բացառիկ ջանասիրութիւնը եւ բազմահմտութիւնը նրան հնարաւորութիւն են տուել հայագիտութեան բնագաւառում զրելու զիտական երկեր, որոնք կարեւոր տեղ են գրաւում սովետահայ պատմագրութեան մէջ, եւ զիտական մէծ արժեք են ներկայացնում...»:

(Ես այստեղ զանց եմ առնում շարունակել հայրիկիս՝ որպէս խոշորագոյն զինականի բնորոշող Պրն. Գալոյեանի մնացեալ տողերն ու գնահատականները, եւ հայրիկիս կողմից մատենագիտական մօտեցմամբ թուարկուող բազմաթիվ պարգևների ու կառավարական շքանշանների ցանկը, սակայն որպէս լրացում՝ պարտականութիւն եմ զգում շարադրել հետեւեալ տողերը:

1970 թուականին, Վենետիկում նշում էր Միփթարեան Միաբանութեան 250-ամեակը: Համաշխարհային տարողութեամբ իրականացուող տօնակատարութիւններին մասնակցելու համար, Ս. Ղազար կղզու Աբբահայրը նամակով դիմել էր

Ակադեմիայի նախագահութեանը, որպէսզի վերջինս թոյլ տար իրենց նախկին սան, այժմ արդէն հոչակատր գիտնական Յակոբ Անասեանին մեկնել Իտալիա՝ այդ յիշարժան տօնակատարութեանը մասնակցելու համար:

Վերեւում շարադրուած պատմութեան ինստիտուտի տնօրէնի հիանալի բնութագիրը ոչնչով չեր կարող խախտել քարացած, բթամիտ կուսակցական մտայնութեանը՝ ի՞նչպէս... Անասեանի՞ն... նախկին ռազմագերո՞ւն, անկուսակցականին թողնել որ զնայ Իտալիա՝... Ոչ մի միջնորդութիւն, յորդոր, իրնդրանք՝ չօգնեց վերանայելու Կենտկոմի որոշումը: Թէեւ Յակոբ Անասեանը միակ գիտնականն էր Հայաստանում՝ որպէս Միհրարեանցի: Նրա փոխարէն Վենետիկ զնաց մէկ ուրիշ..., կարո՞ղ էր երեւակայել՝ կին պատմաբան....: Միհրարեան Միաբանութիւն՝ ուր բոլորը տղամարդ-հոգեւորականնր են եւ հանկարծ՝ անհրաւէր կին գիտնական... (ՀԵՆ.Ա):

Յակոբ Անասեանի ծրագրերը լիովին խախուեցին արտագաղթի հզօր ալիքի բարձրացման պատճառով: Անասեանների ընտանիքը եւս զնի զնաց այդ շարժմանը՝ ենթարկուելով ընտանեկան ներքին երկպառակութեան՝ այնքան ժամանակ, մինչեւ Յակոբը հարկադրուեց տեղի տալ ընտանեկան միասնութեան պահպանման պահանջին:

Դեռևս 1975 թուականին, երբ Անասեանի անունով դիմում էր ներկայացուել ՕՎԻՇ-ին՝ արտազադրելու հարցով, անհրաժեշտ էր եղել, որ ընտանիքի միւս անդամների նման, նա բնութագիր բերէր իր աշխատանքի վայրից: Այդ առթիւ, պատմութեան ինստիտուտի դիրեկտոր Գ. Գալոյեանը ոչ միայն մերժել էր բնութագիր տալ, այլեւ շատ վատ էր դրսեւորել իրեն, արտակարգօրեն կոպիտ էր վերաբերուել իր աւագ գիտաշխատողի նկատմամբ եւ անմիջապէս դիմել էր Կենտկոմին՝ իրավիճակի մասին յայտնելու եւ տպագրման ընթացքում գտնուող <<Հայկական մատենագիտութեան>> Բ. Հատորի նկատմամբ վերաբերմունք ճշդելու համար:

Այդ դեպքից երկու օր անց, Պատմութեան ինստիտուտի կուսկազմակերպութեան քարտուղար Հայկազ Ազիզբեկեանը Յակոբ Անասեանին հրավիրում է իր գրասենեակը, ուր, գիտական գծով տնօրէնի տեղակալ Վլադիմիր Բարխուդարեանի ներկայութեան յայտնում է, որ իրենք Կենտկոմի կողմից հրահանգ ունեն նրան հազորդելու հետեւեալը. <<Ձեր հարցի մասին Կենտկոմը, լսելով Ընկ. Գալոյեանի հադորդումը եւ ճիշդ չհամարելով բացասական դիրքորոշում ունենալը ձեր հանդեպ, հաւանութիւն չի տուել նրա ցուցաբերած վերաբերմունքին: Լիազորուած ենք ձեզ թելադրել, որ դուք անայլայլ եւ անվարան շարունակեք ձեր գիտական շնորհակալ աշխատանքը, միաժամանակ հետեւելով ձեր Բ. Հատորի տպագրման ընթացքին, այն վստահութեամբ, որ այդ հատորի շարումը կը լրացուի եւ Ակադեմիայի հրատարակութեամբ լոյս կը տեսնի

բոլոր դեպքերում, այսինքն՝ եթէ նոյնիսկ մեկնած լիներ երկրից՝ նախքան նրա լոյս ընծայումը»:

Այս դեպքից յետոյ Յակոր Անասեանը զգաց, որ դիրեկտոր Գալոյեանն իր վերաբերմունքով ակնյայտօրէն դարձել էր ոչ միայն տանելի, այլեւ բարեյօժար:

«Հայկական մատենագիտութեան» Բ. Հատորն իրօք լոյս աշխարհ եկաւ 1976 թ. Յուլիսին, հակառակ ումանց մօտ եղած այն թերահաւատութեան, թէ արտագաղթելու խնդիր ունեցողի գիրքը ոչ մի դեպքում չի կարող հրատարակուել: Այդ հատորի մասին տպագրուեցին բազմաթիւ գրախօսութիւններ հայաստանեան եւ արտասահմանեան մամուլում:

Առողջապահական խնդիրների պատճառով Յակոր Անասեանը որոշել էր յաջորդ տարուանից հանգըստեան կոչուել: Այդ նպատակի համար, 1976 թ. Դեկտեմբերին նա իր գրաւոր դիմումն էր՝ ներկայացրել Պատմութեան ինստիտուտի տնօրէնին: Այդ առթիւ Գ. Գալոյեանը գումարեց ընդլայնուած ժողով՝ մասնակցութեամբ ինտիտուտի բաժինների վարիչների, կուսակցական եւ արհմիութենական անդամների, թուով՝ մօտաւրապէս 20 հոգու, անշուշտ նաեւ «մեղադրեալ» Յակոր Անասեանին:

Գալոյեանի նպատակն էր Յակորի դիմումին ընթացք տալու հետ մեկտեղ ձշդել գլխաւոր աշխատակազմի վերաբերմունքը «հայրենափախ» գիտնականի նկատմամբ: Այս ընդհանուր հաւաքին, տնօրէնը միանգամայն բարեացակամութեան տոնով ներկաներին իրազեկ դարձրեց Յակոր Անասեանի դիմումի մասին, ցաւ յայտնելով, որ Անասեանի հեռացումով ինստիտուտը կորցնելու է իր երկա-

բամեայ գիտաշխատողներից մէկին, որը կոլեկտիվ շատ սիրուած եւ զնահատուած անդամներից է: Ներկաները միաձայնութեամբ արձանագրեցին տնօրէնի համակրական արտայայտութիւններին եւ շատեր հրաժեշտի սրտարուիս ելոյթներ ունեցան:

Մտերմական գրոյցի ընթացքին Յակոբ Անասեանը բաւարարութիւն տուեց նրանց հարցերին՝ ասաց. <<Արտասահման զնալու խնդիրը, եթէ իրականութիւն դառնայ, դա պարզապէս կը լինի ընտանեկան հանգամանքների բերումով եւ ոչ թէ որեւէ դժգոհանքի արդիւնք>>:

Նոյն ժողովում որոշում է 1977 թ. Յունուարի 7-ին կազմակերպել Անասեանին նուիրուած հրաժեշտի երեկոյ: Բայց այս ծրագիրն ու կարգադրութիւնը, ամբողջ երեք շաբաթ պատրաստելուց յետոյ, երեկոն զոհ զնաց մի սմսեղուկ միջամտութեան պատճառով:

Յանկարծ, երեկոյից մէկ օր առաջ, աւագ գիտաշխատակից Արամայիս Մնացականեանը, քաղաքականօրէն մի <<խելօր>> մտայդացումով դիմում է տնօրէն Գալոյեանին, նրան հասկացնելով, որ սխալ բան կը լինի հայոց հին շրջանների մասնագէտ եւ, ամենակարեւորը, անկուսակցական գիտաշխատողի համար հրաժեշտի այդպիսի շուրջով երեկոյ կազմակերպելը, այն էլ՝ նրա գիտական գործունեութիւնը վերհանող գեկուցումով, որը պատրաստել էր ողկուոր Վազգէն Յակոբեանը:

- Մի մոռացէք, ասել էր Մնացականեանը, որ նման շքեղ երեկոյ չի արուել հայ պատմութեան նոր ժամանակների մասնագէտ եւ կուսակցական գիտաշխատողներից որեւէ մէկի համար:

Բնականաբար նման մի արտայայտութեամբ չէր կարող չպղտորուել Գալոյեանի միտքը, եթէ նա չէր ուզում քաղաքական պատասխանատութեան մի անախործ առիթ ստեղծել իրեն համար: Բայց ժամանակը կարձ է, օրն աւարտում է, իսկ յաջորդ օրն արդէն միջոցառումն է:

- Պետք է հետաձգել երեկոն,- մտածում է նա, - առջեւում Շաբաթ-Կիրակի է..., այսպէս, երեկոն կանենք երեք օր յետոյ, Երկուշաբթի օրը,- հանգըստացած շունչ է քաշում Գալոյեանը:

Այսպիսով, երկու օրուայ ընթացքում շտապ կարգով սրբագրման է ենթարկում երեկոյի ծրագիրը:

Որոշում է այնպէս անել, որ Անասեանին նուիրուած մեծարանքի եւ հրաժեշտի երեկոն կորցնի իր գոյնն ու փայլը: Որոշում են Անասեանի կողքին զետեղել երկու <<ամուր>> ԹԻԿՆԱՊԱՀՆԵՐԻ, որոնք լինեն Հայաստանի եւ Անդրկովկասի ժամանակակից պատմութեան մասնագետներ եւ հին բոլշեվիկներ:

Ծիծաղելին եւ տարօրինակն այն էր, որ այդ երկու լրացուցիչ մեծարուտղներից առաջինը՝ Համբարձում Էլշիբեկեանը, ամիսներ առաջ էր անցել թոշակի եւ ապրում էր Մոսկուայում, հետեւաբար, ի նշ պէտք է նշանակեր հիմա անակնկալօրէն հրաժեշտի երեկոյ կազմակերպել այդ բացակայ մարդու համար:

Իսկ եկրորդ մեծարեալ Յովիկ Կարապետեանը՝ յայտնի մարդ էր դեռևս Ստալինի իշխանութեան օրերից: Որպէս կուսակցական կոմիտէի քարտուղար, նա տարիներով ահուսարսափի մեջ էր պահել պատմութեան ինստիտուտի գիտնականներին: Նրա ահաւոր հայեացքի եւ սպառնալիքների տարափի տակ, ընդհանուր ժողովների ընթացքում, սահմըռ-

կում էին բոլորը՝ մեծ ու փոքր: Նրա մի ակնարկով որեւէ մեկը կարող էր մի բոպէից միւսը դուրս շպրտուել ասպարեզից: Բանն այն է, որ այդ մարդը բնաւ չփոխուեց, եւ մինչեւ վերջը մնաց որպէս Ստալինական, իսկ զիտութեան համար էլ որպէս մի կլոր գերոյ:

Ակադեմիայի աշխատակիցներն ու քաղաքի մտաւրականութիւնը Գալոյեանի որոշումից անտեղեակ, ըստ նախնական յայտարարութեան, Յունուարի 7-ին, Ուրբաթ օրը, խուռներամ հաւաքուել էր դահլիճում: Ժողովը սկսուելու էր ցերեկուայ ժամը 2-ին, բայց ժամանակից 10 րոպէ առաջ, տնօրէն Գալոյեանը բեմից յայտարարեց, որ Ընկ. Անասեանի հրաժեշտի առիթով հրաւիրուած ժողովը, ծրագրի փոփոխման նպատակով յետաձգւում է 3 օրով եւ տեղի է ունենալու Յունուարի 10-ին, Երկուշաբթի օրը, նոյն ժամին:

Իրադրութիւնից անտեղեակ Անասեանը իր ընտանիքի անդամների հետ նոր էր հասել ինստիտուտ, երբ տնօրինութեան ներքին անցուղարձին իրազեկ ընկերներ շտապել էին նրան դիմաւորել դրսում, շէնքի նախամուտքին, որպէսզի անակնկալների հանդիպելով շհուզուէր նա: Նրան յայտնեցին նիստի յետաձգման եւ դրա նպատակի մասին, որը միանգամայն անյարիր էր նախապէս ընդունուած որոշմանը: Յակոբը ներքին զապուածութեամբ, թաքցնել փորձելով իր խորը յուզումը, միջանցքում իսկ, խըմբւած բազմութեան առջեւ ելոյթ ունեցաւ հետեւեալ խօսքերով.

- Ընկերներ, բարեկամներ, ես անհունօրէն շնորհակալ եմ ձեզանից, որ այսպէս խուռներամ

հաւաքուել կը այսօր ինձ հաճելի ողջերթ մաղթելու համար: Կասկած կ չունի, որ այսպէս կը լինելու: Ոչ միայն այսօր, այլ երեք տասնամետակներ շարունակ ես շրջապատուած եմ եղել ձեզանով, վայելել եմ ձեր մտերմութիւնը, անկեղծութիւնը, սէրն ու վատահութիւնը, ձեր գնահատանքն ու խրախուսանքը: Ի սրտէ շնորհակալ եմ այդ ամէնի համար:

Բայց թոյլ տուեք, որ հենց այսօր, այս միջանցրում կ ձեզ ուղղուած համարեմ, շնորհակալութեան հետ միասին, իմ հրաժեշտի խօսքը, որ ես պէտք է ուղղէի պաշտօնապէս՝ ի պատիւ ինձ կազմակերպուած այսօրուայ ընդհանուր ժողովում, որը քիչ առաջ տնօրինութեան կողմից անակնկալօրէն յետաձգուել է Երկուշաբթի օրուան՝ իբր թէ <<աւելի լաւ հիմունքներով>> կազմակերպելու ծրագրով:

Պէտք է սակայն, յայտնի լինի, որ նորանոր ծրագրերով վերակազմակերպուելիք նիստերն ինձ չեն ոգեւորում, որովհետեւ ես ինձ արժանի չեմ համարում նման, չարդարացուած ՊԱՏԻՒԵՄԻ: Հետեւաբար՝ ներեցեք, որ ինչդեմ ձեզ յոգնութիւն չկրել այլեւս կրկին հաւաքուելու իմ անունով: Այսօրուայ ձեր ներկայութիւնը լիուլի բաւարար է ինձ համար:

Պատմութեան ինստիտուտի միջանցքներում եւ աշխատասենեակներում մինչեւ աշխատանքային օրուայ աւարտը շարունակում էին հաստատութեան տնօրինութեան ձախաւեր գործելակերպի մասին զրոյցները, որոնց ընթացքին բացէիրաց քննադատում էին դեկավարութեանը: Եւ, քանի որ յստակ էր, թէ այլեւս չեր կարող նոր ժողով գումարուել, ապա ուրեմն ներկայ հասարակութեան առջեւ Յա-

կոր Անասեանին յանձնուեցին նախապէս որոշուած նուերներն ու յուշանուերները:

1977 թ. Հանգստի կոչուելուց յետոյ, Յակոր Անասեանը չի կտրում իր կապը Ակադեմիայի պատմութեան ինստիտուտի գիտական աշխատողների հետ: Անպաշտօն հանգամանքը չի խանգարում նրան յաճախակի մասնակցել ինստիտուտի քննարկումներին, հիմնականում ամբողջ օրն անցկացնելով Մաշտոցի անուան Մատենադարանում: Այստեղ նա ամփոփում, ի մի է բերում իր անաւարտ աշխատութիւնները, որոնք տպագրում են ինչպէս հայրենական, այնպէս էլ արտասահմանեան մամուլում:

Մեկ տարուայ ընթացքում նա լիովին ամբողջացըրեց ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ 3-րդ հաստրը եւ Վազգէն Վեհափառի պատուերով իրականացուելիք՝ Վարդան Այգեկցու <<Արմատ Հաւատոյ>>-ին նուիրուած գրքի երկու կարեւորագոյն յօդուածներ:

1978 թուականի Յունուարին Յակոր Անասեանին թոյլատրուեց իր ընտանիքի հետ մեկնել Ամերիկայի Միացեալ Նահանգներ՝ մշտական քնակութեան:

Տարանցիկ ուղին Խոտալիան էր, <<Տիեզերքի թագուհի>> անունով յայտնի Հռոմ մայրաքաղաքը: Անասեանների ընտանիքը այս հիւրընկալ քաղաքում մնաց 4 ամիս: Այստեղ սիրալիք ընդունելութեան արժանացաւ Լեւոնեան վարժարանի տնօրէն Ներսէս Եպիսկոպոս Սէթեանի կողմից:

Որեւէ օտարականի համար մեծ բարեքախտութիւն է, ի հարկէ, հին աշխարհի պատմութեան եւ մշակոյ-

թի կենդանի վկաներից մեկը հանդիսացող այս հոյակապ ոստանում տարանցիկ բնակութեամբ ապրել մի քանի ամիս եւ համակուել ու լիանալ նրանից ստացած անջնջելի տպաւորութիւններով ու անմոռանալի յուշերով:

Հոռմում Յակոբը շարունակեց իր գիտական գործունելութիւնը՝ օգտուելով քաղաքի զբաղարաններից եւ Վատիկանի մատենադարանի նիւթերից:

Հոռմում ապրելու ընթացքում, Յակոբն իր ընտանիքով մեկնեց Վենետիկ եւ մեկ շաբաթ եղաւ Ս. Ղազար կղզու Մխիթարեան Մխարանութեան հիւրը: Վերջիններս իրենց նախկին սան Յակոբին տեղաւրեցին Մուրատ-Ռափայէլեան վարժարանում, իսկ ընտանիքին, միաբանութեան հաշուին՝ քաղաքի հիւրանոցներից մեկում:

Վենետիկում Յակոբի հետաքրքրութիւնների հիմնական առարկան, իհարկէ Ս. Ղազար կղզին էր, որի հետ կապուած էր պատանեկան յուշերով: Յակոբը եղաւ նաեւ այն սենեակում, որը ժամանակին իր համար ծառայել էր որպէս ննջարան:

(Յակոբ Անասեանն այժմ խօսում է առաջին դէմքով,- ՀԵՆ. Ա.):

Առաջին օրը մենք ընտանեկան լրիւ կազմով ընդունելութեան արժանացանք Մխիթարեան Մխարանութեան կողմից: Հայր Սահակ Ճեմճեմեանի առաջնորդութեամբ այցելեցինք վանքի պատկերասրահը, թանգարանը, ձեռագրատունը, իսկ վերջին օրը վանքի ընդունարանում ընթրիք կազմակերպուեց ի պատի մեզ:

Իմ ժամանակը Ս. Ղազարում էր անցնում ամէն օր, շատ սիրալիր մթնոլորտում: Ծանօթներ չկային իմ

ուսանողութեան շրջանից, բայց բոլորը գիտէին իմ մասին: Միակ անձնական ծանօթս Հայր Ներսէս Տէր-Ներսիսէանն էր, որին մի քանի տարի առաջ հանդիպել էի Երեւանում: Թէեւ առաջին անգամն էի տեսնում Հայր Սահակին, բայց գիտական հարցերով Երեւանից նամակագրութեան մէջ էի գտնուել նրա հետ, եւ այնքան սիրալիր էին եղել մեր յարաբերութիւնները, որ մենք փոխադարձաբար եղբայր էինք անուանում միմեանց:

Այդ ամէնից վեր, սակայն, Հայր Սահակը մեծատառով գրելի ՄԱՐԴ էր, պարզութեան, անկեղծութեան ու ազնուութեան տիպար Մարդը, որին ես կարողացել էի ճանաչել դեռեւ Երեւանում՝ իր նամակների միջոցով:

Հայկական Աստուածաշնչի մատենագիտութիւնը կազմելու առիթով նրանից խնդրել էի ինձ ուղարկել Ս. Ղազարում գտնուող տպագրական հազուագիւտ նմոյշների նկարագրութիւնները, խոստանալով, որ իմ հրատարակութեան մէջ կը նշեմ իր անունը: Հայր Սահակի պատասխանը սքանչելի էր: Նիւթերն ուղարկել էր նա՝ խնդրելով յիշել իր անունը եւ նրա կողքին դրուեր նաեւ <<Միանձն Միսիթարեան>> նշումը, իսկ եթէ ոչ՝ խնդրում էր բնաւ չիշատակել իր անունը հրատարակութեան մէջ: Ահա մի անհատականութիւն, որն արժանի էր պատկանած հաստատութեան անդամը լինելու պատուին: Ես պարտք համարեցի այս հաճելի յայտարարութիւնն անել վերջին օրուայ ընտանեկան ընթրիքի ընթացքում՝ ի լուր ներկայ եղող բոլոր միաբանների:

Յաջորդ օրը աբբահայր Հայր Պողոս Անանեանը փափագ յայտնեց առանձինն ընդունելու ինձ: Աւելի

քան մեկ ժամ սիրալիր զրոյց եւ մտքերի փոխանակութիւն ունեցանք գաղափարական հարցերի շուրջ, սկսելով միաբանութեան անդամ Կարպիս Եպիսկոպոս Ամատունու <<Ուկան վարդապետ Երեւանցի եւ իր ժամանակը>> ուսումնասիրութիւնից, որի զնահատման հարցում իմ ունեցած վերապահ կարծիքի մասին նա, եթէ չեմ սխալում, տեղեակ էր Հայր Սահակի հետ իմ ունեցած նամակագրութիւնից: Իմ առարկութիւնը Ամատունու գրքի վերաբերեալ, վերաբերում էր ոչ թէ գրքի պատմա-քանասիրական արժեքին, այլ գաղափարական կառոյցին:

Ըստ հերթականութեան՝ այս եւ մի քանի այլ հարցերի կապակցութեամբ ես հաստատեցի, որ հայ պատմագիտութեան եւ, ընդհանրապէս հայագիտական ուսումնասիրութիւնների բնագաւառում խնդիրը վերաբերում է ազգային-քաղաքական ուղղեցի հարցին: Ըստ որի, ինչպէս Հայաստանի գիտնականների, այնպէս եւ մեծ մասամբ սփիտքահայ ուսումնասիրողների մօտ, որդեգրուած ուղղութիւնը շեշտակիօրէն գնում է արեւմտէանի դեմ:

Այս ամենը ոչ միայն կաթողիկեայ արեւմուտքի առումով, այլեւ՝ հաւասարապէս բողոքական արեւմուտքի, ոչ թէ՝ ի պաշտպանութիւն սովետական ընդհանուր տեսարանութեան, այլ խրախուսումն մեր ազգային-քաղաքական մտածողութեան զարգացման, յաճախ, եւ նոյնիսկ, ենթագիտակցական մղումով, նկատի ունենալով, որ ազգի գոյատեւման պայքարի կարեւրագոյն լծակներից մեկն է դա՝ ամրապնդելով մեր ինքնութեան եւ ինքնուրոյնութեան գիտակցութիւնը եւ խթանելով ինքնապաշտ-

պանութեան համար անհրաժեշտ մեր կարողականութիւնը:

Այս դատողութիւնների վերաբերմամբ անտարբեր չեր երեւում Հայր Անանեանը: Իսկ քաղկեդոնականութեան հարցերի կապակցութեամբ, եթի խօսում էինք հայ-յունական եւ հայ-հռոմէական պատմական յարաբերութիւնների մասին, անխուսափելիօրէն շօշափուեց նաեւ մեր օրերում եկեղեցիների միջեւ ստեղծուած տիեզերականութեան կամ համաշխարհայնութեան (Եկումենիկ) շարժումը, որին մասնակցում է նաեւ Հայաստանեայց եկեղեցին:

Իմ այս դիտողութիւնների լոյսի տակ, յանկարծ Հայր Անանեանն արեց հետեւեալ հաստատումը.

- Հռոմէական եկեղեցին եւս հետամուտ է եկեղեցիների միաւորմանը եւ կը մասնակցի Եկումենիկ շարժմանը:

- Այո՞,- ասացի ես,- բայց Հռոմէական եկեղեցին ուներ տիեզերականութեան ձգուող մի պատգամ, թէ <<Արտաքոյ կաթողիկէ եկեղեցոյ չիք փրկութիւն>>, միասնութեան շարժման մէջ մտնելով՝ այդ պատգամից հրաժարու ում է նա, կամ կարո՞ղ է հրաժարուել:

- Ո՞չ,- հաստատակամօրէն բարձրաձայնեց Հայր Պողոս Անանեանը:

Վենետիկից գնացքով մեկնեցինք Միլան, ուր մնացինք երկու օր, այցելեցինք նշանաւոր DUOMO-ն, եղանք Լա Սկալա օպերային թատրոնում : Հայոց եկեղեցու հոգեւոր հովիւ Սարգիսեան քահանայի ուղեկցութեամբ եղանք հայ համայնքի <<Հայ Տանը>>: (Չգիտեմ ինչ մտայնութեամբ, հայրիկս չի նկարագրել Միլանի երկու օրուայ մեր արկածալից

կեանքը, որի գլխաւոր դերակատարներն էին տաղանդաւոր երգչուիի Էլլադա Չախոյեանը և Պոլսից այդ օրերին այնտեղ եղող, իմ մտերիմ բարեկամ Մարտիրոս Բալրկճռողլիի եղբայր, գործարանատէր Օննիկը:

1978 թ. Յուլիսի 13-ին (Ողջ Երրպայում եւ այլուր 13-ը անյաջողութեան թուական է, իսկ Ամերիկայում՝ որպէս յաջողութեան թիւ-թուական, մանաւանդ, եթէ այն համընկնում է շաբաթուայ Հինգշաբթի օրուայ հետ, Հեն. Ա.) օդանաւը մեր ընտանիքին Հոռմից փոխադրեց Լու Անջելէս, ուր եւ հաստատուեցինք վերջնականապէս:

Լու Անջելէսում, առաջին իսկ Կիրակի օրը, Հենրիկը դարձաւ Հոլիվուդի Ս. Յոհաննու-Կարապէտ եկեղեցու փոքրաթիւ անդամներից կազմուած երգչախմբի ղեկավարը: Այդ երգչախմբի հիմքի վրայ էր, որ 1979 թուականին հիմնադրեց իր ՍԻՓԱՆ երգչախումբը:

Դրանից բացի, Հենրիկի ջանքերով հիմնուեց եւ նրա խմբագրութեամբ սկսեց լոյս տեսնել <<Հայարուեստ>> պարբերականը, որն իր բնոյթով առաջինն էր Լու Անջելէսում: Երկշաբաթերթի առաջին համարը լոյս տեսաւ 1978 թ. Հոկտեմբերի 1-ին: Այդ կապակցութեամբ, թերթի արտօնատէր Վարդգէս Նազարեանը Հոկտ. 6-ին կազմակերպեց համերգերեկոյ՝ <<Հայկական ժողովրդական եւ գուսանական երգի երեկոյ>> անուանումով, մասնակցութեամբ երգիչ Յարութ Փամբուկչեանի, երգչուիի Մարիետա Անասեանի եւ քանոնահար Արա Սեւանեանի: Նորակազմ նուազախումբը ղեկավարեց Հենրիկ Անասեանը:

Սկզբնական շրջանում <<Հայարուեստ>>-ի խմբագրութիւնում էր անցնում իմ օրը (Հայրիկս, այդ խոշոր գիտնականն ու հայագետը, նստում էր կողքիս, սեղանի առջեւ, եւ համեստ սրբազրի դերում ուղղում էր <<Հայարուեստ>>-ի նիւթերը, եւ յետոյ՝ թեւի տակ դրած թերթի կապոցը, զնում էր նամակատուն՝ փոքրաթիւ բաժանորդներին ուղարկելու համար թերթի նոր համարը,- Հեն. Ա.):

<<Հայարուեստ>>-ի խմբագրատանը ես ծանօթացայ Վիեննական Միսիթարեան միաբանութեան երկու անձանց հետ՝ Հայր Միքայէլ Ազեանի եւ Հայր Գրիգոր Հեպոյեանի հետ: Այս ծանօթութիւնն առիթ հանդիսացաւ, որ ես կրկին սկսեմ աշխատակցել Վիեննայի <<Հանդէս Ամսօրեայ>> ուսումնարերթին եւ Վենետիկի <<Բազմավեպ>> ամսագրին (այստեղ հայրիկս մանրամասնօրէն թուարկում է տասնեակի հասնող յօդուածների անուանումները, մատենագիտական մօտեցմամբ լուսաբանում դրանց էռոթիւնն ու այլ մանրամասնութիւններ, որոնք աւելի կամ պակաս չափով յայտնի են նախորդ էջերից, ուստի կրճատում եմ գրեթէ մէկ էջ,- ՀԵՆ. Ա.):

Այդ պարբերականներին ուղարկուած հրատարակութիւններով էր Վերսկաւում իմ գործունեութիւնը Լու Անջելէսում, ուր սկսեցի աշխատակցել տեղական մամուլին (<<Նոր օր>>, <<Նոր կեանք>>, <<Նաւասարդ>>): Վերականգնեցի կապս Երուսաղէմի <<Սիոն>>-ի եւ Փարիզի <<Revue des E'tudes Armeniennes>>-ին: Այս շրջանում ստորագրել եմ նաև ազգային-հրապարակախոսական բնոյթի որոշ յօդուածներ:

1979 թուականից սկսեալ, Լոս Անջելեսի Կալիֆորնիայի համալսարանը (UCLA) ինձ պաշտօնի էր հրաւիրել որպես գիտահետազոտական աշխատակից (Research Associate) Մերձարեւելեան Ռւսումնասիրութիւնների Կենտրոնում, եւ միաժամանակ որպես անդամ՝ Համալսարանի Հայագիտութեան ամբիոնի (Տնօրէն՝ պրոֆ. Աւետիս Սանձեան):

Այս առթիւ, իր կատարած հրապարակային հաղորդման մէջ պրոֆ. Սանձեանը գրում էր. <<Դոկտ. Անասեան պիտի վայելէ մեր համալսարանի հայագիտական ամբիոնի ընձեռած բոլոր առանձնաշնորհումները եւ դիրութիւնները, որպեսզի կարենայ դիրութեամբ շարունակել իր գիտական աշխատանքները: Մենք առանձնապես երջանիկ կը զգանք, որ իբրև պաշտօնակից մեր մէջ կ'ունենանք իրեն նման առաջնակարգ վաստակ եւ համբաւ ունեցող գիտնական մըր>>:

(Յակոբ Անասեանի աւելի քան համեստ լինելու վկայութիւններից մէկն է այն է, որ նա չի յիշատակում համալսարանի հաշուին՝ իր գիտական աշխատանքների համար երեք ամսով՝ Երուսաղեմ գործուղուելու փաստի մասին, - ՀԵՆ. Ա.):

1984 թ. Մայիսին, Լոս Անջելեսում տեղի ունեցաւ իմ ծննդեան 80-ամեակին եւ գիտական գործունեութեան 50-ամեակին նուիրուած յորելեանական հանդիսութիւն, որը կազմակերպուած էր Լա Վեռնի Համալսարանի կազմին պատկանող՝ Ամերիկահայ Միջազգային կողեզի կողմից:

Յորելեանի նախապատրաստական շրջանում որոշ տարակարծութիւններ ծագեցին իմ եւ կազմակեր-

պիշների միջեւ: Նրանք յարմար էին գտնում, որ յոբելեանի հովանաւրութիւնը դրուէր Էջմիածնական թեմակալ առաջնորդի վրայ: Սակայն դա, իմ դատողութեամբ կը լինէր տուրք տալ հատուածականութեան երեւյթներին, քանի որ ամերիկահայ իրականութեան մէջ եկեղեցական կազմակերպութիւնները երկարուած էին Էջմիածնի և Անթիլիասի Կաթողիկոսական աթոռների միջեւ, որի հետեւանքով, ազգային գործունեութեան բոլոր օղակներում, եւ ժողովրդի մէջ, բոյն էր որեւ <<Մերի>> եւ <<Ձերի>> հոգեբանութիւնը:

Այդպիսի իրավիճակի մէջ, մի հատուածի համար իրաւունք համարել իմ յոբելեանի հովանաւրութիւնը, կը նշանակէր՝ արհամարանք ունենալ միւս հատուածի հանդեպ: Ուստի՝ ես ընդդիմացայ այդ հարցին՝ քաղաքավարօրէն պնդելով, որ յոբելեանական երեւյթը մշակութային ու գիտական հաւաքոյթ է եւ ոչ թէ հոգեւոր կամ կրօնական արարողութիւն: Հետեւաբար, նրա հովանաւրման համար անտեղի կը լինէր թեմակալ առաջնորդին որպէս յոբելեանի հովանաւոր հրաւիրելը: Ի վերջոյ որոշուեց ելոյթների համար հրաւիրել քաղաքական տարբեր հոսանքների ազդեցութիւնների ենթակայ եղող հայ մշակութային երեք միութիւններին (<<Թէքէյեան>>, <<Համազգային>>, <<Նոր Մերունդ>>):

Կազմակերպիչներն յայտնեցին, որ յոբելեանի առթիւ հրատարակուելու է յատուկ յուշամատեան եւ որ, երեկոն ունենալու է գեղարուեստական բաժին, որի կազմակերպումն ու ղեկավարումը յանձնուելու էր իմ որդուն՝ Հենրիկ Անասեանին, իսկ դոկտորական աստիճանի շնորհիման արարողութիւնը կա-

տարուելու էր Լա Վեռնի համալսարանի նախագահի ձեռքով:

Յոբեկեանական հանդիսութիւնը տեղի ունեցաւ 1984 թուականի Մայիսի 6-ին՝ Պասադենայի Երիցական եկեղեցու սրահում: Օրուայ յայտագիրը ցոյց էր տալիս, որ երեկոյի խնամքով պատրաստուած պաշտօնական բաժնին զուգորդած՝ իրացուելու էր նաև գեղարուեստական ճոխ բաժն, որին իրենց մասնակցութիւնն էին բերում ՀԲԸ Միութեան <<Սարդարապատ>> երգի-պարի համոյթի երգչախումբն ու նուազախումբը՝ Հենրիկ Անասեանի ղեկավարութեամբ:

Նախատեսուած յոբեկեանական յուշամատեանը, որը կրում էր <<Յակոբ Սեղրակի Անասեան>> խորագիրը, բաղկացած 117 էջերից, փաստական նիւթերով հանրութեանն էր ներկայացւում յոբեկեարի աւելի քան 50-ամեայ գիտական գործունեութեան վաստակը, ինչպէս նաև քաղուածաբար յատուածներ՝ հայազգի եւ օտար բազմաթիւ մասնագետների կարծիքները:

Յոբեկեանի առիթով կատարուած ծրագրումների իրացման կարգով՝ 1984 թուականի Օգոստոսին Կոլէջի կողմից տպագրութեան յանձնուեց իմ <<Մանր երկեր>> հատորը, որն անիմաստ եւ հիւծիչ քաշքուկներից յետոյ լոյս տեսաւ 1987 թ. Սեպտեմբերին ( ? )՝ ԱՊՐԻԼ գրատան միջոցով: Այս հասորում հիմնականում ամփոփուել են աւելի քան 50 տարիների ընթացքում պարբերական մամուլում տպագրուած իմ յօդուածները, առաւել՝ մի քանի անտիպ նիւթեր, որոնք իրենց բովանդակութեամբ

առնչութ են իմ հրատարակուած աշխատութիւնների հետ:

(Այստեղ՝ մի կարեւոր ձշում. <<Մանր երկեր>>-ը խսկապէս լոյս տեսաւ 1987-ին, բայց 4 ամիս, կազմատան հետ կապուած, եւ նիւթական այլ խնդիրների պատճառով, այն ընթերցողներին հասաւ միայն 1988-ի Յունուար ամսուայ վերջին շաբաթուայ ընթացքում, երբ Յակոբ Անասեանը մահուան անկողնում էր: Նա մահուանից մէկ օր առաջ տեսաւ իր երեխայրիքի առաջին օրինակը եւ մահաբեր ժայխտով, ծուումուր տառերով, սրտառուչ մակագրութեամբ նուիրեց այն՝ իրեն բուժող բժիշկ Դոկտ. Յակոբ Այնթապլեանին, իսկ գրքի եկրորդ օրինակը մենք տեղադրեցինք նրա դագաղի մէջ...ՀԵՆ. Ա.):

# ՄԵՆՔ ԹՈՂՆՈՒՄ ԵՆՔ ՀԱՅԱՍՏԱՆԸ

## ՀԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ

Ինչպէս նկատեցիք, Յակոբ Անասեանի ինքնակենսագրութեան մէջ ամբողջովին բացակայում են նրա ընտանիքի հետ կապուած հետաքրքիր դէպքեր եւ մանրամասնութիւններ:

Նրա համար <<ընտանիք>>-ը անմիջականօրէն առնչում էր սերունդ, տոհմ, ցեղ պահելու հասկացողութեան հետ: Ունենալով ամուր հենարան՝ յանձինս մայրիկիս, կենցաղային, առօրեայ բոլոր հոգսերը իր ամբող կեանքում մշտապէս թողել էր մօրս եւ իմ ուսերին: Կենցաղային հարցերում տառացիօրէն ոչնչի <<ընդունակ>> չէր նա:

Հայաստանում ապրած տարիներին, նոյնիսկ մէկ անգամ խանութ չի մտել, ասենք, հաց գնելու համար: 30 տարի Մատենադարան բարձրանալ-իջնելիս երբեւէ չի օգտուել նրա հարեւանութեամբ մշտապէս փառաբանուած պոնջիկանոցից: Ինքն էր ու իր զիտական աշխատանքը, իր թուղթն ու գրիչը:

Հաց-մաց, ուտել-խմել, ծխել, խնջոյք, կերուխում՝ նրա հասկացողութիւնից դուրս էր: Երբէք թատրոն,

օպերա չի մտել: Այդ ամէնը նրա համար կորած ժամեր էին: Միակ ֆիլմը, որ նա դիտել է, այն է մեր յորդորներին տեղի տալով՝ ՏԱՐՁԱՆ կինոնկարն է, որ ամիսներ շարունակ ցուցադրում էր Երեւանի կինոթատրոններում՝ 1952-53 թ.թ.:

Քչախոս էր հայրիկս եւ զրուցասէր էլ չէր: Երբեք հիւր չէր գնում, եկած հիւրերին անզամ սրտնեղութեամբ էր ընդունում, որովհետեւ՝ դա ժամանակի կորուստ էր համարում, չէ՞ որ իր աշխատասենեակում մի թղթի պատոիկի վրայ նախապէս զրուած նախադասութիւնը վերծանմանն էր սպասում: Որեւէ նախասիրութիւն չունէր ուտելիքի կամ խմելիքի հանդէա:

Յակոր Անասեանի համար ամէն մի վայրկեանը զիտական արժեք ներկայացնող նիւթ էր, որ պէտք ունէր լուսաբանման: Նրա համար պարապ ժամանակ գոյութիւն չունէր: Մի խօսքով՝ ինքն էր ու իր զրիչը, իր զրասեղանին սփոռուած մի քանի տասնեակ զրքեր ու մատենադարեան ձեռագրեր:

Այդ փոքրամարմին մարդու մէջ հսկայական զիտական պաշար կար, որ ակամայ ակնածանք էր առաջացնում՝ նոյնիսկ իր հարազատների մօտ: Յանկացած մասնագիտութեան տէր մարդ, զիտնական կամ արհեստաւոր, իրեն հետաքրքրող զիտական եւ կամ որեւէ այլ հարցի լուսաբանման համար դիմում էր հայրիկիս: Լինելով եզակի աղբիւրագէտ, նա բացառիկ ճշգրտութեամբ կարող էր յստակ ուղղութիւն տալ իրեն դիմողին, թէ ո՞րտեղ, ի՞նչ հրատարակութեան (հայրենական կամ օտար) մէջ կարող է նոր նիւթեր գտնել իր զիտական աշխատանքի համար:

Այսպիսին էր նա՝ իմ պաշտելի հայրիկը, որն ավա-  
սու, չգնահատուեց այնպէս, որին արժանի էր նա իր  
կենդանութեան օրոք: Ես ինձ մեղաւոր չեմ համա-  
րում՝ նրան բերելով Միացեալ Նահանգներ: Նա հի-  
ւանդ էր Երեւանում արեան քաղցկեղով: Ոչ ոք  
չգիտէր այդ մասին: Նա տաս տարի ապրեց Լու  
Անջելէսում բժիշկների անվերապահ հոգածութեան  
շնորհիւ, եւ հրապարակ հանեց 3 կիլոգրամ կշռող  
1000 էջանց համեստ անուանումով <<Մանր եր-  
կեր>> աշխատութիւնը՝ երկու այլ գրքերի հետ միա-  
սին:

Դարձաւ Համալսարանի դոկտոր-պրոֆեսոր, այցե-  
լեց Երուսաղեմ՝ հայկական հին ձեռագրերի ուսում-  
նասիրման համար, եղաւ Փարիզում ու հիւրընկալ-  
ուեց իր քրոջ որդու բնակարանում: Եւ ամենակա-  
րեւորը՝ Միացեալ Նահանգներ զալու ճանապարհին  
իր ընտանիքի հետ, ճիշդ չորս ամիս վայելեց  
Իտալիան, 4 օր շարունակ իր ընտանիքի հետ միա-  
սին եղաւ հիւրը իր ուսումնառութեան կենտրոնում՝  
Վենետիկի Սուրբ Ղազար կղզում:

Իր ինքնակենսագրութեան մէջ Յակոբ Անասեանը  
գրեթէ ոչինչ չի գրում Իտալիայում Անասեան ընտա-  
նիքի անցկացրած փառաշուր օրերի, անակնկալ  
դեպքերի եւ իրողութիւնների մասին: Ինչպէս միշտ՝  
նրա հետաքրքրութեան առարկան հայագիտութիւնն  
էր ու դրա հետ կապուած տարաբնոյթ երեւոյթները:  
Ուստի, ես նպատակահարմար եմ զոնում ընթեր-  
ցողին փոքր ինչ հեռացնել ԱՆԱՍԵԱՆ-ԳԻՏԱԿԱՆ  
ԱՇԽԱՐԾ կապից ու նրան տանել մեր ընտանիքի  
կողմից Իտալիայում անցկացրած կենցաղային, առօ-

թէական կեանքի ոլորտը՝ ուր նա կգտնի հետաքրքիր բազմաթիւ դրսեւրումներ:

Դժուար չեղաւ բնակարան գտնելը կայարանի մերձակայ փողոցներից մէկում: Կամաց-կամաց վարժուեցինք առօրեայ կեանքին: Միայն թէ անհրաժեշտ էր խնայողութեամբ եւ հաշուով ծախսել դրամը: Մեր ընտանիքին յատկացրել էին ամսական 480 դոլար, որից երկու հարիւրը պիտի գնար բնակվարձին:

Պիտի ասեմ, որ իմ կեանքի ամէնաերջանիկ շրջանը եղան այն չորս ամիսները, որ մենք անցկացրինք Խտալիայում:

Պտտեցինք բոլոր քաղաքները, այդ թուրմ Ֆլորենցիա, Կապրի, Նեապոլ, Միլան, Վենետիկ: Մենք նոյնիսկ հիւր ունեցանք Ֆրանսիայից եւ Թուրքիայից:

Հոռմ հաստատուելուց մէկ շաբաթ անց, Ֆրանսիայի Վալանս քաղաքից իրենց ընտանեկան մեքենայով մեկ հիւր եկաւ նախկինում Երեւանի դրացի-հարեւան Քէմիքսիկեան՝ չորս հոգուց բաղկացած ընտանիքը:

Մէկ շաբաթ մեր հիւրը եղան նրանք: Ինչպէս նախկինում, մէկ ընտանիքի պէս ապրեցինք մենք մէկ սենեակում խմբուած, ու գիշերներն էլ, քրոջ եղբոր պէս քնում էինք կողք-կողքի, յատակին փոռուած գորգի վրայ, մինչեւ լոյս պատմելով յիշողութիւններ՝ կապուած մեր հայրենիքի ուրախ եւ դժուարին օրերի մասին:

Այդ վեց օրերի ընթացքին Անահիտն ու Գէորգը չթողեցին, որ մենք գէթ մէկ անգամ մեր ձեռքերը տանենք մեր գրպանները:

- Հենրիկ, խօսք չեմ ուզեր լսել, դուն այնքան բան ըրած ես մեզի համար, որ ինչ ալ ընենք՝ չենք կրնար քուկին ըրածիդ չափ ընել,- ասաց Անահիտը:

Հիանալիօրեն վայելեցինք Հռոմը՝ իր շքեղ, տեսարժան վայրերով ու թանգարաններով, նշանաւոր ձաշարան-ուստորաններով:

Այդ ամէնը իբր բաւարար չէր, նրանց մէկնման օրը, վերջին վայրկեանին Անահիտը ինձ մի կողմ տարատ ու ասաց.

- Մեր երթալէն ետք, բարձիդ տակը կը նայիս, իոն ծրար մը դրած եմ, առարկութիւն չեմ ուզեր, պայմանաւ, որ միայն պտըտելու վրայ ծախսես, ուսկի-մոսկի, ատոնք պարապ բաներ են: Եթէ պիտի նափոլի չ'երթաք՝ կ'երթամ ետ կ'առնեմ ծրարը: Խօսք տուր, որ պիտի ընես ուզածիս պէս: Ամէն բան սուտ է, միայն պտըտիլ, աշխարհ տեսնալը կը մնայ:

- Անահիտ, ի՞նչ պէտք կայ նման բաներու: Դուն արդէն մէկ շաբաթ չձգեցիր, որ մէկ սանրիմ ծախսեմ, հիմա ալ, ելեր դրամ կը ձգես, որ պտըտելո՞ւ յատկացնենք: Դուք ունեւոր մէկը չէք..., ո՛չ, չեմ կրնար առնել այդ ծրարը:

- Հիմա աւելի ուշադիր մտիկ ըրէ, Հենրիկ, ես քոյրդ եմ չէ՞՝, քեզմէ ալ տարիքով: Ինչ որ ըսեմ մտիկ պիտի ընես: Մեր երթալէն անմիջապէս յետոյ կ'երթաք կայարան եւ կը մեկնիք նափոլի: Խօսք տուր, որ ըսածիս պէս պիտի շարժիս:

- Մարիետան հարբուխ է, չենք կրնար տեղ մը երթալ, թէրեւս վաղը, միւս օր,- փորձեցի այս անգամ այդ ձեւով հակառակուել իմ շատ սիրելի «քրոջը»:

- Թռենի մէջ ամէն քան կ'անցնի, արդէն, երկար ըրիր, Հենրիկ, կը քարէ, խօսք տուր, որ պիտի հիմա իսկ շարժիք, ես քու խօսքիդ կը հաւատամ:

Առարկելն այլեւս անխմաստ էր, ուստի ասացի.

- Խօսք եմ տալիս, դուք հիմա ձամբայ ելէք, անկէ վերջ մենք ալ թռենը կ'առնենք եւ կ'երթանք Նափոլի:

Ես, իհարկէ, յարգեցի Անահիտին տուած խոստումս:

- Եկէք ուրեմն, ժողովուրդ,- դիմում եմ մերոնց,- մէկ շաբաթով քացակայենք Հռոմից: Կը գնանք Նէապոլ, այնուհետեւ Միլան, որտեղ, ինչպէս որ գիտեմ, Էլլադա Չախոյեանն է կատարելագործում, այնուհետեւ կը գնանք Վենետիկ, որտեղից պապան հրաւէր ունի այցելելու Սուրբ Ղազար, իսկ յետոյ կը վերադառնանք Հռոմ, «մեր տունը»:

Համաձայնութիւնը կնքուած էր:

Իտալիայի քաղաքների միջեւ հաղորդակցութիւնը շատ դիւրին է: Գրեթէ ամէն ժամ գնացքներ են մեկնում ցանկացած ուղղութեամբ: Անպատեհութիւնը միայն նրանում էր, որ վերջին վայրկեանին գնուած երթեւեկութեան տոմսերը գրեթէ երկու անգամ սուղ են սովորականից, քայլ ի՞նչ կարող ես անել, ստիպուած ես համակերպուել:

Կէսօրուան մօտ, արդէն Նէապոլում էինք: Միայն երկու ժամ տերեց գնացքով այդ ծովեպքեայ քաղաք հասնելը: Մեր առաջին նպատակը Պոմպէյ գնալն էր: Երիտասարդ տարիներին ես կարդացել էի «Պոմպէյի վերջին օրերը» գիրքը և մերոնց պատմել էի այդ կործանուած, լաւայի տակ մնացած քաղաքի մասին: Եւ լաւ էր, հենց Նէապոլի կայարանում տուրիստական աւտոբուսներ էին գնում դէպի Պոմպէյ: Էլ ժամանակ չկորցրինք: Ան-

միջապէս տեղաւորուեցինք աւտոբուսում եւ մի կէս ժամ յետոյ արդէն աւերուած քաղաքում էինք:

- Դարերի ընթացքում, պեղումների շնորհի, խտալացիները կարողացել էին «գետնի երես» հանել հազարաւոր տարիներ առաջ գոյութիւն ունեցող քաղաքից որոշ մասեր. վողոց, պալատական մի քանի սենեակներ, բաղնիք, եւ այլն: Մի սենեակի նախամուտքին յայտարարութիւն կար. «մինչեւ 16 տարեկան երեխաներին մուտքը արգելուած է»: Տղաներիս կարգադրեցի դրսում սպասել: Իրականում, եթէ իմանայի, թէ ինչի ենք ականատես լինելու, ծնողներիս եւ Մարիետային էլ թոյլ չէի տա մտնել այդ «սենեակը»:

Եւ, ի՞նչ էք կարծում, ի՞նչ կար այդ սենեակում: Սենեակի ձիշդ մէջտեղում, թող ներուի, տղամարդու առնանդամի գրեթէ մէկ մետրանոց բազալտէ քանդակ, իսկ պատերին, ուղղակի պատի վրայ, նկարուած սեռական բնոյթի բազմագոյն նկարներ, նոյնիսկ՝ միասեռականութիւնը «քարովող» քստմնելի պատկերներ: Պժգալի էր տեսնել այդ ամէնը: Մարիետան ուղղակի դուրս փախաւ այդ զկուելի «սենեակից»: Բայց ի՞նչպէս էին այդ նկարները հազարաւոր տարիներ պահել իրենց գոյնը, ուղղակի ապշել կարելի էր:

Դրսում, լուս, զլխահակ, այրող արեւի տակ քայլում ենք քար ու խճի վրայով, իսկ ես համարձակում եմ երկու խօսք փոխանակել հայրիկիս հետ.

- Պապա, ես հիմա եմ հասկանում, թէ ինչու է կործանուել Հռոմի հսկայ կայսրութիւնը:

- Ճիշդ ես, տղաս,- ուրիշ ոչինչ չասաց հայրիկս, հասկացնել տալով, որ այնքան էլ հաձելի

խօսակցութիւն չի ծաւալուի, եթէ շարունակի խօսել:

Մարիկետայի հարբուխը գնալով սաստկանում էր: Մեր նպատակը՝ մի գիշեր Նէտապողում մնալ ու յաջորդ օրը Վենէտիկ գնալը ձախողուեց: Պէտք է վերադառնայինք Հռոմ Մարիկետային «բուժելու» համար:

- Կարծում եմ, այսպէս աւելի ձիշդ է, կարեւորը՝ մենք յարգեցինք Անահիտին տուած խօստումը, եւ յետոյ, հայրիկ, չե՞ս կարծում, որ աւելի ձիշդ կը լինի, որ դու հեռաձայնես Վենետիկ եւ նրանց հետ պայմանաւորուես, թէ ե՞րբ է հարմար, որ մենք գնանք,- ասացի ես կայարանում, որտեղից բոպեներ յետոյ շարժուելու էր մեր ձեպընթացը:

- Ձիշդ է ասում տղադ, Յակոբ: Բա մարդիկ չիմանա՞ն, թէ մենք երբ ենք լինելու իրենց մօտ, հաստատեց մայրս:

- Աքքահայրն ասաց, որ երբ ցանկանանք, կարող ենք գնալ:

- Բայց, պապա, ախր մենք վեց հոգի ենք է, - խօսքի մէջ մտաւ Մարիկետան,- գուցէ նրանք կը դժուարանան բոլորիս ընդունել: Հռոմ հասնելուն պէս զանգ կը տանք ու դուք կ'ասէք, որ մենք բազմանդամ ընտանիք ենք:

Երբ Մարիկետան մի բան էր ասում հայրիկիս, նա ոչ մի առարկութիւն չէր անում: Նրանք ոչ միայն հարս ու կեսրար էին, այլև լաւ, համագործակցուած ընկերներ...

Ամէն ինչ ձիշդ էր մտածուած: Վենէտիկից պատասխանեցին, որ երկու օրից զանգահարենք, որովհետեւ գարնան այս իրաշալի եղանակին դժուար է վեց հոգու համար հիւրանոցում տեղ ապահովել:

Երկու օր յետոյ, առաւտօն կանուխ հայրիկս խօսեց Աբբահօր հետ: Վերջինս ասել էր, որ յաջորդ օրն իսկ պէտք է այնտեղ լինենք:

- Մենք չորս գիշերուայ համար տեղ ապահովեցինք, երկու օրը մեր հաշտոյն, մեր հիւրը կ'ըլլաք, իսկ միւս երկու օրը, եթէ ուզէք, կրնաք մնալու պարտիլ, առ ալ արդէն ձեր գիտնալիքն է, ասել էր Աբբահայրը:

Ուրեմն այդ օրը որեւէ տեղ չէինք կարող գնալ, ուստի որոշեցի Մարիետայի հետ գնալ մեր գրասենեակը՝ ճշգելու համար, թէ ե՞րբ ենք Ամերիկա մեկնելու:

- Դուք հապի մէկ ամիս է, որ հոս էք, ուրիշներ չորս, իինգ ամիս կ'սպասեն հլա կեցէք..., - ցինիկաբար ասում է հապի քանը բոլորած լիբանանցի երիտասարդը, իսկ նրա կողքին նստած հասակակից երիտասարդն էլ, առանց խպնելու, քթի տակ ծիծաղում է, կարծես հասկացնել տալով, որ աշխարհից անտեղեակ մէկն եմ ես:

Վենետիկը բաւական հեռու է Հռոմից: Անհրաժեշտ է վաղ առաւտեան գնացք նստել, գոնէ մուրը չընկած վերջնակէտին հասնելու համար:

Այս, բաւական երկար ժամանակ առաւ մինչեւ հասանք Վենետիկ: Հարցուփորձով, քայլելով հասանք Սուրբ Մարկոսի նշանաւոր հրապարակը, աշխարհի ամէնանշանաւոր հրապարակներից մէկը՝ Հռոմի Սուրբ Պետրոս հրապարակից յետոյ, սակայն մի քանի անգամ փոքր Վատիկանի հրապարակից:

Սակայն Վենետիկի հրապարակը յայտնի է իր Դոժերի պալատով եւ «Մահուան կամուրջ»-ով: Վենետիկի «փողոցները» ոչ այնքան մաքուր ջրով լի ջրանցքներ են, դրանց թիւը հասնում է 150-ի,

որոնք իրար հետ կապւում են 400-ից աւելի կամուրջներով: Սուրբ Մարկոսի հրապարակի հիւսիսային մասում, Սուրբ Ղազար գնացող նաւերի կայանն է:

Դէտք է անպայման իմանալ կղզի գնացողեկող նաւերի ժամատախտակը, հակառակ պարագային կը մնաս կղզում, ուր ոչ մի գիշերելու տեղ չկայ: Կղզին հայերի թագաւորութիւնն է, ուր չկան հիւրանոց, զբաղմունքի վայրեր կամ էլ ասենք՝ ձաշելու տեղ:

Մենք միայն երկու ժամ ունեինք կղզի գնալ գալու համար: Ուստի նպատակահարմար գտանք կղզի գնալը թողնել յաջորդ օրուան: Հայրիկս զանգահարեց եւ ճշդեց մեր հիւրանոցի անունն ու տեղը: Պարզուեց, որ հենց հրապարակին կպած փողոցում է, Դոժերի պալատի հարեւանութեամբ:

Իհարկէ, հիւրանոցից բացի, ամէն ինչի նման էր մեր բնակատեղին: Երկու փոքրից էլ փոքր խղձուկ սենեակներ, ողորմելի ընթրիքով: Երեւի խեղճ վարդապետները գաղափար անգամ չունեին, թէ ինչ պայմաններում են մեզ տեղաւորել: Կարեւոր՝ գիշերելու տեղ ունեինք:

Առաւոտեան, «նախաձաշից» անմիջապէս յետոյ գնացինք նաւամատոյց եւ Սուրբ Ղազար գնացող նաւը կէս ժամում մեզ հասցրեց կղզի:

Այդ կէս ժամուայ ընթացքում ես անընդհատ հայրիկիս էի նայում, չէ՞ որ կղզում, Հոգեւոր Հայրերի յսկողութեան տակ էր անցել իր պատանեկան, ուսանողական տարիները: Արդեօք ի՞նչ էր մտածում նա: Ամբողջ ձանապարհին ոչ մի խօսք չփոխանակեց: Միայն երբ ոտք դրեցինք կղզու վրայ, մէկ բոպէ կանգնեց, յետոյ ձեռքը մեկնեց

վանքապատկան շէնքի երկրորդ յարկի կողմը եւ ասաց.

- Տեսնո՞ւմ էք էն երկրորդ յարկի վարդագոյն շրջանակով պատուհանը...,- լոռութիւն, ոչ ոք չի համարձակում ձայն հանել,- դա վարժարանի իմ սենեակի պատուհանն է, իսկ նրա կողքի սենեակում, ժամանակին ապրել եւ հայերէն է սովորել Քայրոնը:

Բոլորս պապանձուել, մնացել ենք: Ամէն մէկս իրովի հասկացաւ, թէ ինչ է կատարում Յակոբ Անասեանի հետ:

Եկան, հաւաքուեցին Սուրբ Հայրերը, Աբբահայրը, որոնց մօտ հիւր էր եկել իրենց նախկին սաներից մէկը, Հայաստանի նշանաւոր պատմաբան Յակոբ Անասեանը :

- Ծիտակը, պարոն Անասեան, մենք երկու տարի առաջ կուպէինք ձեզի հոս տեսնալ, Մխիթարեան Միաբանութեան 250-ամեակի օրերուն: Մենք երեք անգամ հրաւէր դրկեցինք ձեր անունով, բայց ձեր փոխարեն կին մը դրկեցին՝ Շուշանիկ Ղազարեան անունով, որ բնաւ կապ չունէր մեր Միաբանութեան հետ:

- Այդ իմ մեղքս չէր, Աբբահայր: Ես գիտէի հրաւէրի մասին, բայց իշխանութիւնները չ'արտօնեցին զիս Խտալիա գալ:

- Գիտեմ, գիտեմ, Անասեան, գոնէ տղամարդ գիտնական մը դրկէին, ե՞րբ եղած է, որ կին մը կապ ունենայ մեր միաբանութեան հետ: Լա՞ւ, մոռնանք..., ինչպէս էք, հանգի՞ստ էք, որեւէ բանի մը պէտք ունի՞ք:

- Լաւ ենք, Աբբահայր, բանի մը պետք չունինք, շնորհակալ ենք, հիանալի հիւրանոց է:

- Ի՞նչ կըսե՞ք..., Վենետիկի մէջ հիանալի հիւրանո՞ց, չէի գիտեր...: Ինչեւէ, այսօր ամբողջ օրը միասին ենք: Հոս ալ կը ձաշենք միասին, թէեւ չէ պատահած, որ մենք մեր ձաշի սեղանին շուրջ կանայք ունենանք, բայց դուն մերինն ես, այս հաստատութիւնը քուկդ ալ է, այսպէս որ ազատ զգացէք ձեզ: Հիմա եկէք պտըտինք, այսօր ձեր բախտէն հրաշալի եղանակ է: Մենք հոս շատ անձրեւ ունինք, բայց մենք վարժուած ենք:

Բոլորս մէկտեղ, երկու երիտասարդ վարդապետների ընկերակցութեամբ, գրեթէ երկու ժամ ման եկանք կղզիով մէկ: Վարդապետները, մէկը-միւսից առաջ անցնելով՝ բացատրութիւններ էին տալիս կղզու ամէն մի անկեան մասին ու սիրայնժար պատասխանում էին մեզ հետաքրքրող ամէն մի հարցի:

Միիթար Սեբաստացու գլխաւորութեամբ, 18-րդ դարից սկսեալ Սուրբ Ղազար կղզում շինարարական լայն աշխատանքներ են ծաւալուել, բարենորոգուել է եկեղեցին, հիմնուել՝ երկյարքանի վանք, գրատուն, վարժարան, բնակելի շինութիւններ ու ծաղկանոցներ: 1810-ին, Նապոլէոն Բոնապարտի հրովարտակով Սուրբ Ղազար կղզին ձանաշուել է որպէս գիտական կենտրոն: 1833-ին Միաբանութիւնը գնել է կղզին ու դարձրել իր սեփականութիւնը, իսկ 1836-ին ամբողջ կղզին շրջափակուել է քարէ պարսպով:

Այսօր Սուրբ Ղազար են այցելում հազարաւոր զբուաշքիկներ, իսկ հայերի համար այն վաղուց է դարձել սրբատեղի: Սուրբ Ղազար կղզի են այցելել Բայրոնը, Վալտէր Սկոտը, Ալբեր Դը Միւսէն, Յովհաննէս Այվազովսկին եւ շատ-շատ ուրիշներ:

...Հայրիկս երկար կանգնեց Հայր Վահան Յովհաննիսեանի գերեզմանի առջեւ:

- Ցիշում էք, չէ՞ Հայր Վահանին,-ասաց հայրս:

- Ի՞նչպէս չէ պապիկ, ես այն ժամանակ հինգ տարեկան էի, բայց ամէն ինչ յիշում եմ: Մեր տանն էր ապրում Երեւանում: Սոսկալի ծխում էր,-ասաց Արմէնը:

- Հե՞զ մի ասա, Արմէն ջան, երեք ամիս, օրը քսանչորս ժամ նրա ետեւից էի ման գալիս, որ ծխախոտի մնացուկները հաւաքեմ: Որտեղ ասես ծխախոտ կար: Մինչեւ անգամ ննջասենեակում,-ասաց մայրիկս:

- Ես շատ աղօտ եմ յիշում,- սա էլ Արամն էր,-անդադար հավում էր:

- Ատ հավալն ալ իրեն տարաւ,- միջամտեց Աբբահայրը: Բայց մեծ գիտնական էր, հրաշալի բանաստեղծ: Ինք միշտ կը պատմէր Հայաստանի, ձեր ընտանիքի մասին, Երեւանի հիմնադրութեան 2750-ամեակի փառայեղ տօնակատարութիւններու մասին:

Աբբահօր մօտ կապմակերպուած ընթրիքը թէեւ ոչ շատ Ճոխ, բայց, ինչպէս ասում են, հոգեւորականի համար կարելի էր Ճոխ համարել:

Ընթրիքից յետոյ, թէյի սեղանի շուրջ խօսակցութիւնն ամբողջովին ծաւալուեց մեր ընտանիքի՝ Միացեալ Նահանգներ հաստատուելու շուրջ:

- Եղածը՝ եղած է: Որեւէ խրատ, կամ միջամտութիւն անխմաստ է, պարոն Անասեան,- ասաց Աբբահայրը,- զիս մեծագոյն ցաւ պատճառողը ձեզի պէս գիտնականներու դուրս ելլելն է Մայր Հայրենիքն: Ամէն պարագայի յաջողութիւն կը մաղթեմ ձեր ընտանիքին եւ փափազ է, որ այս երկու տղաքը հայ մնան Ամերիկայի պէս ամէ-

նակուլ երկրին մէջ: Դուք Մուրատ-Ռաֆայէլեան վարժարան գացի՞ք:

- Ոչ, դեռ չենք գացած, Աբբահայր: Վաղը պիտի երթանք: Այսօրն արդէն լմնցաւ: Վաղն ալ հոս կ'անցընենք, միւս օրը մտադիր ենք Սիլան երթալ: Թէրեւ տղաս եւ հարսս կարենան Լա Սկալայի մէջ ներկայացում մը դիտել,- համեստօրէն պատասխանեց հայրիկս:

- Որքա՞ն գեղեցիկ, ինչպէս կ'երեւայ լաւ ծրագիր մշակած էք...,- վարդապետ,- շրջուելով երիտասարդ վարդապետի կողմը, հարցը ուղղեց նրան,- վերջին նաւը ե՞րբ կը մեկնի մեր կղզին:

- Ժամը 7-ին-ին, Աբբահայր:

- Ըսել է շատ ժամանակ չունինք, պարոն Անասեան: Այսպիսի մեծ խումբ, որուն մէջ կանայք կան, կը ներէք, չենք կրնար հոս տեղաւորել,- կատակով, ժպտալով եպրափակեց իր խօսքը Աբբահայրը:

Վերջին նաւը, որի մէջ միայն մենք էինք, Սուրբ Ղազար կղզուց մեկ քերեց քաղաք, Սուրբ Մարկոսի հրապարակ:

Մինչ այդ օրը ես նման բազմութիւն չեի տեսել աշխարհի որեւէ հրապարակում: Այդ յետոյ էի տեսնելու, 1988-ին՝ Երեւանի Ազատութեան հրապարակում, միայն այն տարբերութեամբ, որ այս-տեղ խաղաղ մթնոլորտ էր, աւելի ուրախ, երգ ու պար, աշխարհի չորս ծագերից հաւաքուած հազարաւոր զբուաշրջիկներ եկել էին վայելելու տեղանքը, չքնաղ բնութիւնն ու գոնդուների վրայից հնչող բազմատեսակ իտալական երգերն ու մեղեդիները:

Գրեթէ շարժուելու տեղ չկար հրապարակում, մենք էլ՝ վեց հոգի: Կարող էինք կորցնել մէկս

միւսին: Մեծահասակ ծնողներս արդէն հոգնել էին ամբողջ օրուայ անցուղարձից: Մենք էլ նոյնը: Ուստի որոշեցինք գնալ հիւրանց ու քիչ-միշ հեռուստացոյց նայելուց յետոյ քնել:

Թում էր, թէ հանգիստ քուն էի մտնելու, բայց օրուայ տպաւորութիւնների ապդեցութեան տակ, հապարումի մտածումների լարիրինթոսում, իրերամերժ երազների խառնարանում իմ ըտանիքի յետագայ ծրագրերն էի մշակում:

Անտեր մնայ, հնարաւորութիւն էլ չկար վեր կենալու, գէթ սեղանի լոյսի տակ գրառումներ անելու: Մի կերպ լուսացրի:

- Դու կարծում ես՝ ես քնա՞ծ էի՝ բոլորովին, ամէն մի շարժումդ տեսել եմ, երազներիդ մէջ արտասանած «Ճառերդ» էլ իւրացրել,- առաւտեան ասաց Մարիետան:

- Այդքանը կը լինի, քուր ջան..., դաւայ, դաւայ, երեխսէքին վեր կացրու, վստահ եմ, մերոնք ոտքի վրայ են: Այսօր ձեզ լաւ ման եմ ածելու: Առաջին գործը պիտի լինի Մուրատ-Ռաֆայէլեան վարժարան գնալը:

- Պապա՝, ի՞նչ կը լինի, եթէ այսօր դրսում նախաձաշէնք,- ասաց տասներեքամեայ Արամս, որ հօր նման չափազանց «քթի մազ» էր ու ոչինչ չէր հաւանում:

- Լաւ, տղաս, արի այսօր շոայլութիւն անենք, թող հիւրանոցի նախաձաշը իրենց մնայ, թէեւ վճարուած է,- ուրախ-ուրախ ասացի ես:

- Ուռուաաա՝,- բացականչեց Արմէնը,- երեւաց, որ նրա սրտով էլ էր դրսում նախաձաշելը:

Վենետիկում ամէն քայլափոխի սնուելու տեղ կայ, միայն թէ ցանկանաս: Այդ օրուայ մեր նախաձաշը իսկական ձաշի էր նման, մի երեւոյթ, որ տարօրինակ էր մատուցողի համար, որը ամէն մի

նոր պատուիք կատարելիս, երեսուներկու ատամ-ները ցոյց տալով էր հեռանում մեր սեղանից:

Սուրատ-Ըաֆայէլեան վարժարանում գիտէին մեր մասին, թէ ո՞րտեղից՝ Աստուած գիտի: Ծրջեցինք ողջ վարժարանով մէկ, եղանք դասասենեակներում, առանձին կարինետներում: Ամէնուր մաքրութիւն, կարգապահութիւն, բոլոր սովորողների մօտ հայերէնի անթերի իմացութիւն, մաքուր արեւմտահայերէն խօսք ու վրոյց:

- Աս ի՞նչ աղուր թռոնիկներ ունիք, պարոն Անասեան,- հայրիկիս ասաց վարժարանի տնօրէն վարդապետը,- լաւ թեկնածուներ կրնան ըլլալ մեր վարժարանին համար: Զգեցէք անոնց մեզի,- միանգամայն լուրջ ասաց տնօրէնը,- իրաւ կըսեմ, ձեր վիճակը դեռ անորոշ, ի՞նչ պէտք ունիք ձեզի հետ քաշքրտելու սա տղաքը, մեղք չե՞ն:

Ես համբերութեամբ լսում էի վարդապետի բարբաջանքը, մինչ Մարիետան կամացուկ, իբր ոչ ոք չի լսում, ականջիս մէջ ասում է.- լաւ է ասում Հայր Սուրբը Հենրիկ, արի, արի, գոնէ մէկ տարի թողնենք այստեղ երեխեքին, կը սովորեն, լաւ կը լինի:

- Ի՞նչ,- արդէն բարձրաձայն, որպէսզի բոլորը լսեն,- դո՛ւ, հենց դու, կարո՞ղ ես մի օր առանց տղաներիդ տեսնելու ապրել, էդ ինչե՞ր ես ասում:

- Ո՞չ, ոչ, ամա՞ն, էդ ի՞նչ ես ասում:

- Բա ո՞ր ես նման բաներ ասում՝ Հայր Սուրբին էլ թիւրիմացութեան մէջ գցում: Մենք դեռ մեր անելիքը չգիտենք, մեր ապագան դեռ անորոշ է, ի՞նչպէս կարող ենք մեզ նման բան թոյլ տալ:

- Չէ՛, չէ, Հայր Սուրբ, տղաս ձիշդ է ասում: Մենք դեռ կէս ձանապարհին ենք: Գնանք տեղ հասնենք, տեղաւորուենք, թէրեւս ապագային

նման միտք ունենանք, այն ժամանակ մենք ձեզ  
տեղեակ կը պահենք,- ասաց մայրս:

- Թող ատանկ ըլլայ, բարեկամներս: Մեզի  
համար մեծ պատիւ է վարժարանէն ներս որպէս  
աշակերտ ունենալ Անասեանին թոռները: Կրնամ  
վստահեցնել, որ նոյնիսկ առանց վճարումի կըր-  
սանք գործը յաջողցնել:

- Մարզա՞ն..., այդ ի՞նչ պողքում էր, էդ ի՞նչ  
չմտածուած ոգեւորութիւն հանդէս բերիր,- ելքի  
դոան մօտ ասացի նրան:

- Հեն ջան, կը ներես..., ես մի վայրկեան մո-  
ռացայ, թէ որտեղ ենք գտնուում:

Վարժարանը հենց ջրանցքի բերանին է:  
Հազիւ մէկ մետր լայնութեամբ մայթ է եղած-  
չեղածը: Գինով մէկը հազիւ թէ կարողանայ քայլել  
այդ մայթով, որպէսկի ջրանցքը չընկնի:

- Հիմա գնում ենք Գոնդոլով (նաւակ) մէկ ժամ  
ջրանցքներով պտըտելու եւ գոնդոլավարների հի-  
անալի նեապոլեան երգերը լսելու, որից յետոյ կը  
շրջենք քաղաքով մէկ, կը գնանք շուկա, բազում-  
բազում, մէկը-միւսից գեղեցիկ խանութներ կան  
այնտեղ: Հարկ եղած դէպքում էլ փոքր-մոքր գը-  
նումներ կ'անենք,- բարձրագոշ ձայնով ասացի ես:

Յաջորդ օրն առաւօտեան, բաւական ուշ հա-  
ւաքուեցինք: Նախորդ օրը ահազին հոգնել էինք  
ամբողջ Վենէտիկը տակնուվրայ անելով: Բարե-  
բախտաբար, Միլանը այնքան էլ հեռու չէր Վենէ-  
տիկից: Երեք-չորս ժամում գնացքով տեղ հասանք:

Ես գիտէի, որ Միլանում Հայ Մշակոյթի Տուն  
կայ: Մեր առաջին գործը եղաւ գտնել այդ կենտ-  
րոնի հասցէն: Երկար փնտրեցինք: Բարեբախտա-  
բար հայրիկս տիրապետում էր իտալերէնին եւ  
դիւրին էր հաղորդակցուել մարդկանց հետ: Վեր-  
ջապէս մետրոյի կայարանում հանդիպեցինք մի

բարեւես տղամարդու, որը գաղափար ունէր Միլանի հայ համայնքի մասին: Վերջինս հեռաձայնի խցիկի մէջ ամրացուած տեղեկատու գրքից գտաւ Հայ Կենտրոնի հասցէն, որից յետոյ ասաց.

- Եկէք իմ ետեւից, իշնենք մետրօ:

Կուրօրէն շարժուեցինք անծանօթ, բարեհաճ տղամարդու ետեւից: Բաւական երկար քայլեցինք մինչեւ հասանք տոմսարկղին:

- Դուք այս անկիւնում ինձ սպասէք, տեղ չգնաք, ես իհմա կը վերադառնամ:

Վայրկեաններ անց, անծանօթ բարերարը մօտեցաւ մեզ ու իրաքանչիրիս տուեց մետրոյի մուտքի տոմսակները: Ես փորձեցի վճարել, սակայն անծանօթ բարերարը կարականապէս մերծեց:

- Երկու կանգառ յետոյ կ'իշնէք, ելքի մօտ կրպակներ կան: Որեւէ մէկ կրպակի աշխատող ձեզ կը բացատրի ինչպէս գնալ Հայ Մշակոյթի Տուն:

Մենք չհասցրինք անգամ շնորհակալութիւն յայտնել ակնյայտօրէն շտապող անծանօթ բարերար տղամարդուն:

Մետրոյի հրապարակում ահազին բազմութիւն կար, օրը շաբաթ էր, կրպակներում առեւտուրը եռում էր: Հնարաւոր չէր մօտենալ դրանցից որեւէ մէկին: Տեսայ, որ կրպակներից մէկի մօտ մի ծերուկ հանգիստ ծխում էր իր համար: Վստահ, որ նա տեղի բնակիչ է, իմ կոտրած-թափած անզլերէնով հասկացրի, թէ ինչ ենք փնտրում.

- Օ՛, արմենիկս սե՞նտէր..., յես, յե՞ս, այ նօ՛...

- Պապա՛, մօտեցիր, տես, թէ ի՞նչ է ասում այս ծերուկը,- շթողնելով, որ նա շարունակի իր ասելիքը դիմեցի հօրս:

Հայրիկս մօտեցաւ եւ մի երկու քառ իտալերէն փոխանակելով ծերունու հետ, ասաց.

- Նա գիտի Հայ Կենտրոնի տեղը, այստեղ մօտակայքում է, նա կարող է մեզ ուղեկցել:

Հայրս ու անծանօթ իտալացին մեր առջեւն ընկած՝ մեզ առաջնորդում են դէպի Հայ Մշակոյթի տուն (Երանի՛ չառաջնորդէին):

Ճանապարհին, մի մեծ հրապարակի միջով անցնելիս, հայրիկս մի պահ շրջուեց մեզ եւ ասաց.

- Այս հրապարակում են՝ 1945 թուականին ոտքերից կախել Մուստլինիին:

Ե՞հ, միտքս գնում է հին՝ Ֆաշիստական Գերմանիան եւ ներկայիս ծաղկուն, հարուստ Գերմանիան: Այսօրուայ Գերմանիան տեսնելու առիթն ունեցայ երկու անգամ եւ դժուար է երեւակայել, որ այն ծնուել է փլատակների վրայ:

... Իսկապէս բախտաւորութիւն էր, որ մենք շաբաթ օրն էինք յայտնուել Միլանի «Հայ» տանը, որովհետեւ, ինչպէս ասացին կենտրոնում, շաբաթուայ մնացեալ օրերին մարդ չի լինում այնտեղ:

Սրահ կոչուածը մեծ, խառնիխուոն ապրանքներով լի սենեակ է յիշեցնում, որտեղ քանի չափ հայորդիներ առանձին խմբեր կազմած, ժամանակ են սպանում: Ոչ մի ընդհանուր ծրագիր: Մեզ էլ, ինչպէս ասում են, «Չան տեղ դնող» չկայ: Միայն մի քանի հոգի մօտենում են, հետաքրքրում, թէ ով ենք, ինչ ենք, ուր ենք գնում, ինչ ենք անում Միլանում: Այդքանը միայն: Ես ասում, հասկացնում եմ, որ ոչ մէկը չունենք Միլանում, սակայն կ'ուզէինք մէկ-երկու օր ման գալ, Լա Սկալա գնալ, ներկայացում դիտել,- ո՞ւմ ես ասում ո՞չ մի արձագանգ:

Արդէն երկու ժամի չափ մի կերպ տեղաւորուել ենք սրահում, բայց մեզնով զբաղուող չկայ:

Մէկ էլ ինձ է մօտենում մի քառասունին մօտ տղամարդ եւ հարցնում.

- Ինծի լսին, որ դուք երաժիշտ էք, դաշնակ կը նուագէ՞ք: Եթէ այս, կրնա՞ք քանի մը կտորներ սորվեցնել ինծի «Անուշ» օպերայէն,- առանց իմ համաձայնութիւնն առնելու, դաշնամուրի նոտակալի վրայ դրեց օպերայի կլատիբը:

- Բայց պարոն, ես լնտանիքիս հետ եմ, ժամանակնիս շատ սուղ է, եւ մենք չենք գիտեր, թէ ուր, որ հիւրանոցը պիտի մնանք այս գիշեր, օրն ալ լմննալու վրայ է: Եթէ կը խոստանաք, որ մեզի կ'օգնէք գիշերելու տեղ մը գտնալ, սիրո՞վ, ինչո՞ւ չէ, ես հիմա իսկ կ'անցնիմ դաշնակին առջեւը, կատակով ասացի ես:

- «Ադ բան մը չէ, ձանըմ» ասելու ու «Ադքի անաստուած» բացելը մէկ եղաւ:

Մինչ մենք փորձ էինք անում, յարակից սենեակից ելումուտ էին անում մի ձեռքին սանդուիչ, իսկ միւսին կոկա կոլա բոնած, շքեղ հագուստներով ու ապարանջաններով պճնուած տիկիններնն ու պարոնները, իսկ իմ խեղձերը, սպասում էին իմ «հրահանգներին»:

Ոչ ոք, տառացիօրէն ոչ մէկը չնկատեց անգամ մեր, զոյգ տղաներիս ներկայութիւնը: «Սրա՞նք են մեր Երոպայի հայերը», - ասում եմ ինքս ինձ ու մեղադրում, որ ինքնակոչ «հիւրի» վիճակում յայտնուելով՝ ստորացրի նաեւ ծնողներիս:

Գրեթէ երկու ժամ խլեց մեզնից այդ վայերգիչը, որի անունն էլ չիմացայ: Մէկ էլ տեսանք, որ ամէն մարդ կամաց-կամաց լքում է կենտրոնը: Մնացել ենք մենք ու մի չորս-հինգ հոգի, հաւանաբար պատասխանառու անձինք:

- Դուք ո՞ւր պիտի երթաք, կեդրոնը պիտի գոցենք, արդէն ժամը եօթն է,- ասում է կարմիրից էլ կարմիր շրթունքներով տիկինը:

- Ծիտակը մենք ալ չենք գիտէր, թէ ուր պիտի երթանք, որ հիրանոցը,- ասում եմ ես,- քիչ առաջուան երգիչը, անունն ալ չենք գիտէր, իրստացաւ մեզի օգտակար ըլլալ, ո՞ւր է, մէջտեղ չկայ:

- Ի՞նչ երգիչ, ճանըմ..., խենթին մէկն է..., գնաց, քիչ առաջ դուրս ելաւ:

- Ի՞նչպէս թէ գնաց, ես երկու ժամ կորսնցուցի իրեն համար, մինչ ընտանիքս ահա քանի ժամ է հոս անօթի, ծարաւ՝ իմ որոշումին կը սպասէ:

- Ի՞նչ կրնամ ըսել, պարոն, գէշ բան է ըրածը, խօսք չ'ուզեր, սակայն ըստ օրինի պիտի գոցենք սրահը: Իսկ ինչ կը վերաբերի հիրանոց գտնալուն, շաբաթ օրով, Միլանի մէջ, անկարելի է, որ գտնաք, նախապէս պատուիրելու էիք եւ, ինչպէս կը տեսնամ, բազմանդամ ընտանիք էք..., շիտակը դժուար է ձեր վիճակը,- սա էլ մէկ ուրիշ պճնուած կին է ասողը:

- Կրնա՞նք այս գիշեր հոս, կեդրոնին մէջ մնալ, կերպով մը կը հարմարինք,- խեղճացած տոնով հարցնում եմ ես:

- Ո՞չ, ի՞նչ կ'ըսէք, ատանկ բան անկարելի է, օրէնքի խախտում է...:

- Ինչո՞ւ անկարելի է, ո՞վ պիտի գիտնայ, դուռը վրանիս գոցեցէք եւ գացէք, առտու կը բանաք, ասկէ դիրին բա՞ն,- փորձում եմ գութի զգացում արթնացնել դիմացինիս հոգում

- Կը կրկնեմ, պարոն, մենք չենք կրնար արտոնել, որ հոս մնաք:

- Եթէ լոյսէն կը վախնաք, կրնանք մութ տեղը կենալ եւ դուրսէն ոեւէ մէկը չի կրնար ենթադրել,

որ հոս մարդ կայ,- արդէն համբերութիւնից դուրս ելած, գրեթէ բղաւոցով ասում եմ ես:

Քար լոռութիւն, ոչ մի արձագանգ, նոյնիսկ կնոջ կողքին կանգնած մարդիկ էլ են լուս, ոչ մի միջամբտութիւն:

- Եւ դուք պիտի թոյլ տաք, որ աս պատիկներուն հետ փողո՞ցը մնանք,- սա էլ հայրս է ասողը, որ մինչ այդ լուս հետեւոմ էր անցուղարձին ու մեր խօսակցութեանը:

- Զգէ՛, Յակոբ, ձգէ,- արցունքն աչքերին, մէջ մտաւ մայրիկս,- ասանկ հայեր ալ կան եղէր....

Դարձեալ ոչ մի պատասխան, ոչ մի արձագանգ: Միլանահայերը կամաց-կամաց շարժուեցին դէպի ելքի դուռը, հայեացքներով հասկացնել տալով, որ իրենց հետեւենք:

Դրսում, արդէն մայթի վրայ, տեսնելով մերոնց խեղճացած, անհուսալի վիճակը, մի տեսակ ուժ իջաւ ուսերիս.- Հենրիկ, քեզ թափ տուր, ընտանիքիդ ոգին բարձրացրու, դու ես գլխաւորը....

- Հը՛, ի՞նչ էք սառած, սմբած տեսք ընդունել, կեանքը պայքար է, չէ՞, տղերք,- ուրախ, իբր որեւէ արտակարգ բան չի եղել,- ասում եմ ես,- հլա մի ձեզ թափ տուէք: Գիտեմ, անօթի էք, ծարաւ, մի քիչ էլ դիմացէք: Ես արդէն ձշդել եմ, Լա Սկալան շատ մօտ է, գնանք դիմացի մայթը, կը հարցնենք, թէ որ տրամվայն է Լա Սկալա գնում: Կը գնանք թատրոն, կը գտնենք Էլլադային, նա մեզ ամէն ինչում կ'օգնի:

Իսկապէս էլ շատ մօտ էր Լա Սկալան: Արտիստական կենտրոնական մուտքի աշխատողն ասաց, որ վերապատրաստման համար Խորիրդային Միութիւնից եկած արտիստները սովորաբար ժամը ութին են դուրս գալիս վեցերորդ մուտքից:

- Գնացէք եւ սպասէք այնտեղ,- շատ յարգալից բացատրեց դոնապանը:

Ամէն ինչ մոռացուեց: Յոյս էր ծագել..., ա՛խ, այդ ՅՈՅՍՈՂ,- ի՞նչ կարեւոր զգացում է, Աստուած իմ: Իսկապէս էլ, ձիշդ ժամը ութին խնդում-ծիծաղով վեցերորդ մուտքից դուրս ելաւ Էլլադա Չախոյեանը՝ մնացեալ չորս երիտասարդ երգիչների հետ: Մեկ տեսնելուն պէս՝

- Մարիետա՛, Հենրի՛կ, էս ո՞րտեղից, ո՞նց էք յայտնուել այստեղ, աչքերիս չեմ հաւատում: Գրկախառնութուն, քրքիջ ու անզուսպ ծիծաղ, մեր ուրախութեանը չափ ու սահման չկայ:

Ես եւ Մարիետան իրար հերթ չտալով ամէնայն մանրամասնութեամբ պատմեցինք ամբողջ օրուայ անցած-դարձածի մասին:

- Մի հարցում են դրանք ձիշդ եղել: Անհնար է հիւրանոցում տեղ գտնելը: Դավա՛յ, դաւայ, պաշլի (հայդէ, հայդէ, գնացինք), իս ձեզ փողոցում չեմ թողնելու: Մի րոպէ սպասէք այստեղ, ես տղաների հետ մի երկու խօսք փոխանակեմ ու գամ,- ասաց Էլլադան ու գնաց տղաների մօտ:

Տղաների հետ Էլլադան չգիտեմ ինչ խօսեց-չխօսեց, բայց բոլորս միասին շարժուեցինք դէպի տրամվայի կանգառ: Ընդամենը մէկ կանգառ՝ եւ մենք հիւրանոցի առջեւում ենք:

- Մտէք, մտէ՛ք, սա մեր հիւրանոցն է, բոլորը մեկ գիտեն: Երկու ամիս է մենք այստեղ ենք ապրում: Տեղաւորուէք, ինչպէս հարմար էք գտնում: Իսկ որեւէ բան կերել է՛ք, ձաշել է՛ք:

Տեսնելով, որ ոչ մի պատասխան չկայ մեր կողմից, Էլլադան ամէն ինչ հասկացաւ:

- Ես բարձրանամ իմ սենեակ, հագուստներս փոխեմ ու կ'իջնեմ, իսկ մինչ այդ կառավարիչը ձեզ կ'ասի հիւրանոցի վիճակի մասին:

Քիչ անց մեկ մօտեցաւ բարեհամբոյք մի երիտասարդ եւ փորձեց ինչ-որ բան բացատրել: Անմիջապէս հայրիկիս առաջ մղեցի, հասկացնել տալով, որ միայն նա գիտի իտալերէն:

Երիտասարդը հայրիկիս ասել էր, որ հիրանցում երկու ազատ սենեակ կայ, որոնք պահում են անսպասելի բարձրաստիճան հիրերի համար, սակայն մինչեւ ժամը տասներկուսը չեն կարող զբաղեցնել պատահական հիրերով:

- Եթէ մինչեւ այդ ժամը որեւէ մէկը չգայ, ձեզ կը տրամադրենք այդ սենեակները,- ասել էր երիտասարդը:

Ասել կ'ուզի, այսպէս կամ այնպէս, պարտաւորուած էինք սպասել մինչեւ կէսզիշեր, այն էլ յայտնի չէր որեւէ մէկը կը գար, թէ ոչ:

Քիչ անց երեւաց Էլլադան, իր նման վերապատրաստուող ուկրախնացի երգչի հետ: Երկուսն էլ բեռնաւորուած էին ուտելիքներով ու սառը խմիչքներով:

- Մարիետա ջան, այս է ամէնը ինչ-որ կար մեր սենեակներում: Այստեղ երեկոյեան ոչ մի խանութ բաց չի լինում, նոյնիսկ շաբաթ օրերին, այնպէս որ գոհացէք այն ամէնով, ինչ որ կար մեր սենեակներում:

Հենց հիրանցի նախասրահի սեղաններից մէկի վրայ «սեղան գցեցին» Էլլադան եւ Մարիետան: Մենք սոված գայլերի նման յարձակուեցինք ուտելիքների վրայ: Խեղճ երեխներս չգիտէին ինչ վերցնել. հաց, պանիր, երշիկ, վարունգ, լոլիկ: Հացը քիչ եկաւ: Իտալացի գործավարը հեռուից աչքերը յառած մեկ վրայ, ժպտուն երեսով հետեւում էր մեր հացկերոյթին, եւ, հաւանաբար նկատելով, որ հացը քչութիւն արեց, չգիտես որտեղից մի խոշոր հաց բերեց ու դրեց մեր

սեղանին: Այդ ժամին գնացող-եկող շատ չկար: Ներկաներն էլ քաջալերիչ հայեացքներով էին նայում մեզ վրայ ու թէրեւս էլ մտածում էին, թէ էս լեն ու բոլ աշխարհում, որտեղից են յայտնուել այս անօթի մարդիկ:

Մինչեւ կէս գիշեր գրեթէ երկու ժամ կար:

- Ելլադա ջան, դու գնա հանգստացիր, մեղք ես,- ասում եմ շնորհառատ երգչուիուն:

- Ի՞նչ ես ասում, Հենրիկ, ես ինչպէ՞ս կարող եմ գնալ ու հանգիստ քնել, երբ դեռ յայտնի չէ, թէ ինչ է լինելու ձեր վիճակը: Երեխաները հեն ա, հեն ա քնելու վրայ են: Մարիետա, մի կերպ տեղաւորիր բազմոցների վրայ, մեղք են, իսկ ես գնամ տեսնեմ նորութիւն չկա՞յ...

Ակամայ յիշեցի, որ օրեր առաջ, երբ հեռաձայնել էի Պոլսի իմ բարեկամ Մարտիրոս Բալզակիոլուին եւ նրան յայտնել, որ մի շաբաթով պառոյտի ենք դուրս գալու Հռոմից, նա ասել էր, որ եթէ Միլանում լինենք ու ինչ որ դժուարութիւն ունենանք, կարող ենք դիմել իր՝ Մանուկ անունով ընկերոջը, որը զբոսանաւերի առեւտրով է զբաղում եւ դիրքի տէր է: - Եթէ դրամի էլ պէտք ունենաք, կարող էք դիմել նրան, ես նրան կ'ասեմ այդ մասին,- ասել էր Մարտիրոսը ու թելադրել իր ընկերոջ հեռաձայնի թիւը:

Թէեւ շատ հարմար ժամ չէր զանգահարելու համար, բայց ես խնդրեցի Ելլադային, որ զանգահարի Մանուկին ու հեռախօսը փոխանցի ինձ:

- Հենրիկ, դո՞ւն ես. ո՞ւրտեղէն կը հեռաձայնես...

- Այո՛, այո, ես եմ Մանուկ, դուն գիտե՞ս, թէ ես ով եմ:

- Այո՞, այո՞, շատ լաւ գիտեմ: Բու բախտէդ, գիտե՞ս ով կը գտնուի հիմա հոս, Միլանի մէջ, Մարտիրոսին եղբայրը, Օննիկը, երեկ եկաւ:

- Ի՞նչ կ'ըսես..., ի՞նչ գործ ունի հոս Օննիկը:

- Ընտանիքին համար նաև գնելու եկած է պարոնը, որ Գընալըին շուրջը պարտի,- ծիծառելով ասաց նա ու աւելացրեց,- կրնամ իր հեռաձայնին թիւը տալ, Ինթէրնասիոնալ օթելին մէջ տեղաւորուած է:

- Տուր, տուր, Մանուկ, ես լաւ կը ճանչնամ Օննիկը:

Անմիջապէս կապւում եմ Օննիկի հետ: Բարեբախտաբար հիւրանոցում էր.

- Ո՞ր օթէլը իջած էք, Հենրիկ...

- Բերնա, Բերնա կը կոչուի Օննիկ:

- Ո՞ր շրջանն է, գիտե՞ս...

- Ո՞չ, Օննիկ, ո՞րկէ պիտի գիտնամ եղբայր, մենք միայն առտու հասանք Միլան: Այնքանը գիտեմ, որ Լա Սկալային շատ մօտ ենք: Դեռ սենեակ չեն տուած, ժամը տասներկուսին յստակ պիտի ըլլայ սենեակ պիտի տան, թէ ոչ:

- Տեղ մը չերթաք, ես մէկ ժամէն հոդ կ'ըլլամ:

- Այս ժամուն ո՞ր կրնանք երթալ Օննիկ: Դուն հոգ մի ընէր, վաղը առտու կը տեսնուինք, հանգիստիդ նայէ:

- Լաւ, կը նայինք,- ասաց Օննիկը եւ ընկալուչը կախեց:

Այնքան գնաց-եկաւ Էլլադան ադմինիստրատորի մօտ, որ կարողացաւ համոզել, որ տասներկուսը չեղած մեկ տրամադրեն սենեակները: Խեղձ երեխաներս արդէն ննջում էին բազմոցների վրայ:

- Հենրիկ, եղաւ, համոզեցի: Միայն թէ դուք այդքան դրամ ունե՞ք..., անհանգստացած հարցրեց Էլլադան:

- Այսինքն ո՞քան...,- ամաչելով հարցը ես:
- Իրաքանչիւր սենեակը երկու հարիւր դոլար է մէկ գիշերուայ համար:

Սարսուը պատեց մարմինս, չորս հարիւր դոլար մի գիշեր քնելու համար, մեկ համար հսկայական գումար էր:

- Իսկ թոյլ կը տա՞ն, որ մէկ սենեակում տեղաւորուենք,- ամաչելով ասացի ես:

- Սպասիր զնամ հարցնեմ:

Այս անգամ բաւական երկար մնաց Էլլադան աղմինխստրատորի մօտ, բայց վերադարձաւ բարձր տրամադրութեամբ.

- Եղաւ, հասկացան մարդիկ ձեր վիճակի լըրջութիւնը եւ երկու սենեակի համար կը վճարէք երկու հարիւր դոլար, հը՝, ի՞նչպէս է:

- Հիանալի՛ Էլլադա, մենք երբէք չենք մոռանա քո արած զոհողութիւնը մեկ համար:

Ժամը 11-ին բարձրացանք եօթերորդ յարկ: Սենեակները կողք-կողքի էին: Հրաշալի յարմարութիւններ: Այնքան հոգնած էինք, որ հրաժարուեցինք երազային լոգարանից օգտուել, թողնելով այդ հաճոյքը իրականացնել յաջորդ օրուայ առաւոտեան:

Երեխաններին տեղաւորելուց յետոյ, մենք՝ մեծերըս, նստեցինք ընտանեկան «ժողովի»:

- Ուրեմն այսպէս,- ես եմ խօսողը: Ճիշդ են ասում չէ՛, որ, երբ «Աստուած մի դուռ փակում է, մի ուրիշ, նոր դուռ է բացում»: Հիմա ճիշդ եւ ճիշդ մեր պարագան է: Հայ Մշակոյթի տան մարդկանց անխիղճ, անհոգի վերաբերմունքին յաջորդեց Էլլադայի մարդկային ապնիւ վերաբերմունքը, միացըրած նրա չորս արուեստակից ընկերների վերաբերմունքը, որոնք իրենց հացը կիսեցին մեկ հետ:

Եւ յետոյ էլ յայտնուեց իմ լաւ բարեկամ, ուղնուծուծով մեր ընտանիքին նուիրուած Մարտիրոսի եղբայրը: Ո՞վ կը մտածէր, որ Օննիկը այս օրերին այստեղ պիտի լինի: Ինչ որ անտեսանելի ուժեր չե՞ն կառավարում մեզ:

- Ի՞նչ է սա, հայրի՝կ, դու աւելի փորձառու ես քան ես, դո՞ւ ասա:

- Ճիշդ ես, տղաս, նման երեսյթները չի կարելի պատահականութեանը վերագրել: Նախախնամութիւնն է մեզ կառավարում, իսկ ՏԵՐՆ էլ վերեւից յսկում է մեր գործողութիւնները:

- Լաւ, իիմա զանք վաղուայ մեր անելիքներին,- դարձեալ ես եմ խօսողը,- եկել հասել ենք Միլա՞ն, աշխարհի բոլոր արուեստակրների, երաժիշտների, երգիչ-երգչուիինների երազների քաղաքը: Բա ի՞նչպէս մենք, ես եւ Մարիետան կարող ենք Լա Սկալա շմտնել ու մի որեւէ ներկայացում չդիտել:

Ուրեմն այսպէս, առաւօտեան Օննիկը կը գայ, ինչպէս հասկացայ, նա լաւ գիտի այս քաղաքը: Կը խնդրենք նրան մեզ մի քանի ժամ լաւ ման ածել, տանել նշանաւոր Բավիլիկան, նշանաւոր եկեղեցինները, եւ յետոյ կը դիտենք Լեռնարդօ Դա Վինչիի նշանաւոր «Վերջին ընթրիքը» իւղանկարը, որը Պատկերում է Քրիստոսի վերջին ընթրիքը տասներկու առաքեալների հետ: Երեկոյեան ես եւ Մարիետան կը գնանք Լա Սկալա, որից յետոյ կը գնանք կայարան ու կը բռնենք ետղարձի ճամբան: Կարծում եմ, չ'արծէ մէկ գիշեր եւս մնալ ու երկու հարիւր դոլլար եւս վճարել: Այն էլ հարց է, երկրորդ օրուայ համար նման բարիք կանե՞ն մեզ համար:

- Ճիշդ որոշում է, Հենրիկ, խօսք չունեմ, հիանալի: Առաւօտեան կը յանձնենք համարը ու դուրս

կը գանք: Եթէ Լա Սկալայում ներկայացում չլինի, կը խնդրենք Էլլադային գոնէ հնարաւորութիւն ստեղծել սրահը դիտելու, որից յետոյ աւելի շուտ կարող ենք գնացք նստել,- ասաց Մարիետան:

- Ճիշդ է ասում Մարիետան, իլ՝ մամա, պապա, դո՞ւք ինչ կ'ասէք:

- Ի՞նչ պիտի ասենք, տղաս, դուք էք հիմա մեր ընտանիքի ղեկավարները,- ժպտալով ասաց իմ լա՞ւ, բարի մայրիկը ու դիմելով հայրիկիս՝ աւելացրեց,- ճիշդ չե՞մ ասում, Յակոբ, մի բան էլ դու ասա...:

- Ի՞նչ ասեմ, տղաս ամէն քայլ մտածուած է անում, ես երբեք չէի կարող երազել, որ այսքան հաձելի օրեր եմ ունենալու իմ պատանեկութեան երկրում: Ես ամէն քայլափոխի վերապրում եմ իմ երիտասարդութիւնը:

Մեր ընտանեկան «ժողովն» աւարտուելու վրայ էք, մէկ էլ յայտնուեց Օննիկը՝ գիշերուայ ժամը մէկի մօտերքը:

- Աս ինչո՞ւ պառկած չէք այս ժամուն: Ես բնաւ յոյս չունէի, որ ձեզի արթուն կրնամ տեսնալ,- ասաց խնդրուերես, ատլետի կազմուածքով Օննիկը՝ փաթաթուելով իրաքանչիրիս հետ առանձին-առանձին:

- Ի՞նչ քուն, եղբայր, ամբողջ օրը ոտքի վրայ էինք, Հայ Կեդրոնին մէջ չորս-հինգ ժամ անուշադրութեան մատնուած, խենթ մը կը խաղցնէի, իբ-րեւ թէ երգ սորվեցնելով:

- Լաւ, հիմա եկուր մեծերուն հանգիստ ձգենք, մենք իշնանք բար, քիչ մը ժամանակ կ'անցունենք, իհարկէ, եթէ քունդ չի տանիր,- ասաց Օննիկը:

- Ի՞նչ քնանալ, այսքան պրկուած ջիղերով քնանալ կ'ըլլա՞յ...:

- Ել, ել, երթանք, թող մեծերը հանգչին:

Առաւոտեան ժամը երեքին բաժանուեցինք միմեանցից: Մեկնելու պահին, հենց դոների մէջ նա ասաց.

- Քանի մը ժամ քնացէք, վերջը կը հանդիպինք, ժամը տասին ինծի սպասեցէք, նախաձաշը միասին կընենք:

Տասին քառորդ մնացած, ես արդէն ներքեւում էի, որպէսզի վճարումն անեմ եւ սովետական, կարմիր անձնագրերը ետ ստանամ:

- Դուք պարտք չունէք, պարոն, աւելին. այսօրուայ համար էլ է վճարուած,- երջանիկ ժպիտով ասաց աշխատողը, նախորդ օրուայ երիտասարդը, որ տեղեակ էր մեր ընտանիքի «արկածալից» կեանքին:

Տպաւորութիւնն այնպիսին էր, որ կարելի էր կարծել, թէ իրեն են բարիք արել:

- Ի՞նչպէս թէ վճարուած է, ո՞վ է վճարել, գուցէ թիւրիմացութիւն է:

- Ո՞չ, ո՞չ, պարոն, դուք հանգիստ եղէք, ձեր բարեկամն է վճարել..., ահա, նայէք, գալիս է,- ձեռքով ցոյց տալով մուտքի կողմը,- ասաց նա:

Իսկապէս էլ, լայն ժպիտը դէմքին ինձ էր մօտենում Օննիկը:

- Ո՞ւր են ձերինները, ինչո՞ւ հոս կեցէր ես,- չհասկանալ ձեւացնելով, թէ ինչու եմ կանգնել պատասխանատու անձի առջեւ,- ասաց Օննիկը:

- Հիմա կ'իջնան: Ես եկայ, որ հաշիններս մաքրեմ, բայց..., բայց տեսայ, որ չարութիւն ըրեր ես...

- Ե՛, մէկ օր մը միասին չ'անցունե՞նք: Այսօր ամբողջ օրը կը պտըտինք, ես լաւ գիտեմ Միլանը: Գիշերն ալ, եթէ տոմսակ գտնանք, քեզի եւ տիկինիդ օպերա կը դրկենք: Յաջորդ օրը, իննդրեմ, կրնաք երթալ Հռոմ: Հա՛, ան ալ ըսեմ, որ եղ-

բայրս՝ Մարտիրոսը, ձեզի պիտի այցելէ,- ամենայն անկեղծութեամբ ասաց Օննիկը:

Մի քանի րոպէից մերոնք յայտնուեցին:

- Հիմա ձեզի անանկ աղուոր նախաճաշի տեղ մը պիտի տանիմ, որ երբեք չմոռնաք:

Այն է՝ պատրաստում էինք հիրանոցից դուրս գալ, յայտնուեց Էլլադան.

- Ես ո՞ւր, հայ ժողովուրդ: Գնում էք առանց ցտեսութիւն ասելո՞ւ,- զարմացած ասաց Էլլադան:

- Զէ՞ւ, չէ, Էլլադա ջան, մենք այս գիշեր էլ ենք մնալու, մեր բարեկամը այդպէս կամեցաւ եւ բոլոր հարցերը լուծել է, թէ ինչպէս՝ մենք էլ չգիտենք: Հիմա, ինդրեմ միացիր մեզ գնանք նախաճաշի,- ասացի ես:

- Այո՞ւ, այո, օրիորդ, միացէք մեզի,- միանգամայն սրտաբաց ասաց Օննիկը:

- Միրով կ'ուզէի միանալ ձեզ, բայց չեմ կարող, մենք ժամը 11-ին պարապմունք ունենք: Դուք էլ երեւի ամբողջ օրը դրսերում էք լինելու, պարզ է, մանաւանդ, տեսնում եմ՝ ապահով ձեռքերի մէջ էք,- զրաւիչ մի ժպիտով շրջուելով դէպի Օննիկը, ասաց Էլլադան:

- Էլլադա ջան, բա ի՞նչպէս ենք անելու Լա Սկալայի հարցը, իմացանք, որ այսօր ներկայացում կայ՝ «Մադամ Բադրբֆլայ» (Չիո-Չիո-Սան), պիտի կարողանա՞նք տոմսակ գտնել,- Մարիետան է հարցնողը:

- Մի բան կ'անենք, Մարիետա ջան: Ուրեմն դուք այս գիշեր էլ էք մնալու մեր հիրանոցում..., վա՞տ չէ, վատ չէ, ես էլ կ'ուզէի նման ընկեր-բարեկամ ունենալ, մանաւանդ՝ այս օտար երկրում,- ուրախ քչքչոցով ասաց երգչուիին՝ իր աննման ձայնի ցուցադրումով:

- Ինծի համար ամեն մէկ հայ քարեկամ է, սիրելի օրիորդ, ես ձեր տրամադրութեան տակ եմ: Դեռ քանի մը օր հոս եմ, ինչ քանի որ պէտք ունիք՝ կրնաք պատօրէն ըսել,- երոպացի ջեն-տլըմէնին վայել կեցուածքով ասաց Օննիկը:

- Ես կատակ արեցի, պարոն, մենք այստեղ հինգ Սովետական արտիստներ ենք եւ միշտ միա-սին ենք..., միանգամայն հասկանալի ձեւով արտայայտուեց երգչուիին, հասկացնել տալով, որ ինքը չի կարող առանձնանալ խմբից,- իսկ ինչ վերաբերում է օպերայի տոմսակներին՝ անկարե-լի է տոմսակ գտնել, բայց ես կը փորձեմ երկու ուսանողական տոմս հայթայթել, միայն ասեմ, որ ամէնավերին օթեակի համար կը լինի, եւ այն էլ կանգնած վիճակում օպերան լսելու համար:

- Ոչի՞նչ, Էլլադա ջան, կը կանգնենք, հարց չէ, միայն թէ ներկայ լինենք,- այս անգամ ոգեւոր-ուած խօսքի մէջ մտաւ Մարիետան:

- Ուրեմն ներկայացումից մի կէս ժամ առաջ կը մօտենաք տոմսարկղին, ձեր անունը կ'ասէք, եւ տոմսերը ձեր ձեռքում կը լինեն: Չզարմանաք, երկուսիդ համար վճարելու էք միայն չորս դոլար, ուսանողների համար այդպիսին է գինը, միայն թէ, կրկնում եմ, կանգնած էք հետեւելու ներկա-յացմանը:

- Ի՞նչ, չորս դոլլա՞ր, Էլլադա..., այն էլ երկու հոգու համա՞ր..., թող քսան լինի, թէկուզ աւելին: Նման երջանկութեան համար երկու հարիւրն էլ արժէ,- դարձեալ Մարիետան էր, որ չէր կարողա-նում զսպել իր հրձուանքը:

- Արդէն յստակ է, մենք այլեւս չենք հան-դիպելու: Գիշերն էլ ուշ էք վերադառնալու եւ, երեւի, առաւտեան էլ պիտի մեկնէք, այդպէս չէ՞-զբոյցն աւարտուած համարելով՝ ասաց Էլլադան:

- Ճիշդ ես, Ելլադա ջան, սա մեր վերջին հանդիպումն է: Մենք անչափ երախտապարտ ենք քեզ: Եթէ դու չլինեիր՝ ի՞նչ էինք անելու մենք,- գրկելով ու եղբայրաբար համբուրելով հոչակաւոր երգչուիի Գոհար Գասպարեանի սանուիուն, ասացի ես:

Ամբողջ օրը վայելեցինք ձարտարապետական աննկարագրելի կառոյցներով, հրապարակներով, եկեղեցիներով հարուստ, արուեստի այդ բացօդեայ թանգարանը՝ Խտալիայի ծաղիկը համարուող Միլան քաղաքը: Այնքան էինք հոգնել, որ, եթէ Լա Սկալայի հարցը չլիներ, մենք Էլ մերոնց հետ կը գնայինք հիրանոց:

Ինձ ու Մարիետային Լա Սկալայի մուտքին թողնելուց յետոյ, Օննիկը մերոնց առաջնորդեց դէպի հիրանոց:

- Առոտու կանուխ կու գամ ձեզի բարի ձանապարհ մաղթելու,- ասաց Օննիկը:

Իմ եւ Մարիետայի հոգնութիւնն անմիջապէս անցաւ սրահ մտնելուն պէս, մանաւանդ, երբ հնչեցին օպերայի նախանուագի առաջին հնչիւնները:

Երաժշտութիւնը՝ երաժշտութիւն է ամէն տեղ, միայն թէ նոյն երաժշտութեան մեկնաբանումն է տարբեր, մէկ էլ՝ օպերայի բեմադրութիւնը, որ բնաւ նման չէր աւանդական, մէկը-միւսից քիչ-միշ տարբեր, մեր իմացած, տեսած բեմադրութիւններին: Սակայն մեզ համար կարեւորը՝ երաժշտութեան կատարումն էր: Անթերին այն գնահատականը չէ, թերի երեւոյթներ միշտ էլ լինում են, սոյնիսկ ԱՆԹԵՐԻՆԵՐԻ ժամանակ:

\* Հմայիչ էր, խենթեցնող, զգլիսիչ,- Ի՞նչ ասեմ՝ տեսնել ու լսել էր պէտք:

Ես այստեղ Միլանի գեղատեսիլ վայրերի, կառոյցների, և Սկալա օպերային թատրոնի մասին լիուլի տեղեկութիւններ տալը աւելորդ եմ համարում, եւ իմ նպատակը չէ փորփրել պատմութեան էջերը, նոյնը՝ Իտալիայի միւս քաղաքների մասին: Ել աւելի համապարփակ տեղեկութիւններ իմանալու համար խորհուրդ եմ տալիս օգտուել համակարգչից:

Գիշերը բաւականին ուշ հասանք հիւրանոց: Մերոնք արդէն քնած էին: Առաւօտեան, երբ իջանք վար, Օննիկն արդէն սուրճ էր վայելում բազմոցին նստած:

Դարձեալ համեղ նախաճաշ, որից յետոյ՝ երկաթուղային կայարան, «տուն»՝ Հռոմ վերադառնալու համար:

- Կարծեմ ըսի, չէ՞, որ գալ շաբաթ Մարտիրոսը ձեզի հիւր պիտի գայ, յուսամ քաղաքէն չէք բացակայիր,- հրաժեշտի վերջին պահին յիշեցրեց Օննիկը,- իսկ հիմա բարի ճանապարհ: Աստուած եթէ կամենայ՝ նորէն կը հանդիպինք:

- Սիրելի եղբայր, Օննիկ պատուական, մեր հարուստ հայերէնի մէջ, հաւատայ, չեմ կրնար բառեր գտնալ մեր ամէնուն կողմէ երախտիքի եւ շնորհակալութեան զգացումները փոխանցելու քեզ: Ուստի՝ մէկ բառով գոհացիք՝ ԾՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ:

Թրջուած աչքերով վագոն բարձրացանք, իսկ կառամատոյցում կանգնած՝ Օննիկը աչքերն էր սրբում ձերմակ թաշկինակով....

Ի՞նչ իմանայի, որ ես կրկին հանդիպելու էի Օննիկին Պոլսում աւելի քան քսան տարի յետոյ ու շաբաթներ պիտի լուսացնէինք Բոսֆորի գեղատեսիլ ափին:

Գրեթէ երեք ամիսը լրանում էր, որ մենք Խտալիայում էինք, բայց դեռ լուր չկար պատկան մարմիններից: Լեւոնեան Վարժարանի տեսուչ, երիտասարդական կորովով լի Հայր Յովսէփ Վարդապետը իսկական ուղեկցողի դեր էր կատարում: Իր շուրջը հաւաքելով Ամերիկա մեկնող հայատանցիներին, իր հաշույն, ամէն շաբաթ մի տեսարժան վայր էր մեզ տանում: Երկու անգամ էլ Վատիկան տարաւ: Նրա շնորհի մենք ներկայ եղանք նաեւ Ս. Յարութեան Տօնի արարողութեանը Սուրբ Պետրոս հրապարակում: Եւ ուր էլ որ տանում էր աննման վարդապետը, չէր թողնում, որ մենք տոմսակ գնենք: Ինքն էր հոգում ամէն ինչի մասին: Եղան օրեր, որ մեզ կերակրեց նաեւ համեղ սանդուխչներով եւ աննման պիցաներով:

Այդ օրը մենք որոշել էին տեղ չգնալ: Միրտս վկայում էր, որ ուր որ է Մարտիրոսը կը գայ, կամ կը հեռաձայնի:

- Հենրիկ, արդէն կէսօր է, չեմ կարծում, որ Մարտիրոսը գայ: Հայր Յովսէփը այսօր մի լաւ տեղ է տանելու, ընդամէնը երեք ժամ է տեւելու գնալ - գալը: Արի հաւաքուենք գնանք,- իը՝, ի՞նչ ես ասում: Հօ էսօր չեկա՞ւ Մարտիրոսը,- ասաց Մարիետան:

- Պապա՞՝, գնանք էիի, մեզ կը թողնէք Լունապարկում, յետոյ մենք տուն կը գանք,- ասացին տղաները:

- Սպասէ՞ք, սպասէք, առանց մեզ ոչ մի տեղ: Եթէ գնում ենք՝ գնանք բոլորս միասին:

- Գնացի՞նք,- ոգեւորուած ասաց Մարիետան,- միայն թէ թոյլ տուէք գնամ Մարիայի մօտ (Մարիան՝ մեր դրացին է) եւ ասեմ, որ ուշադիր լինի, իսկապէս կարող է Մարտիրոսը գալ, ասեմ,

որ նրան ներս առնի, սուրճ-մուրճ տայ, մինչեւ  
մենք կը վերադառնանք:

Դու մի ասա, հենց մենք դոնից դուրս ենք  
գալիս, Մարտիրոսը յայտնում է:

Լեռնեան Վարժարանում սպասում ենք, որ  
ժողովուրդը հաւաքուի, որն ինչպէս միշտ ուշա-  
նում է: Սիրտս անհանգիստ է: Խնդրում եմ Հռոմի  
թեմի առաջնորդ Ներսէս Վարդապէտ Սէթեանին՝  
թոյլ տալ հեռաձայնել Մարիային: Եւ չեմ սխալ-  
ում:

- Եկե՛լ է, եկել է ձեր բարեկամը...,- ասում է  
Մարիան:

- Ժողովուրդ, ետ ենք գնում, շուտ, շուտ արէք,-  
ասում եմ ակնապիշ ինձ նայող Մարիետային

Հայր Սէթեանը դժկամութեամբ է ընդունում  
մեր բացակայութիւնը: Պարզում է, որ նա մտա-  
դըրուել է երեկոյեան մեկ ընթրիքի տանել Լե-  
ռնեան Վարժարանին պատկանող ամառանոցը:

- Եթէ այդքան կարեւոր է, գացէք, ի՞նչ կրնամ  
ըսել: Միայն թէ Հենրիկ, Մարիետա, այս կիրակի  
Վատիկանի ռադիոյէն մեր պատարագի օրն է:  
Չըլլայ, որ բացակայիք: Բոլոր մեներգերը Մարիե-  
տան պիտի երգէ:

Հնարաւորինս արագ մեկ զցում ենք տուն: Մարտիրոսն ու Մարիան հաձելի զրոյցով են  
բռնուած: Մարտիրոսը քիշ-միշ տիրապետում է  
իտալերէնին:

Մարտիրոսին վերջին անգամ տեսել ենք  
նախորդ տարուայ ամռանը:

Մանկական հոգու տէր անձնաւորութիւն է  
Մարտիրոսը: Զաւակներ չունի ու խելքը գնում է  
մեր տղաների համար: Կինը՝ Տիրուիին, երեխայի  
պէս է վարւում այդ յաղթանդամ տղամարդու հետ:

Նրանց «կոհիւը» Մարտիրոսի՝ օրը երեք տուփ սիզարեած ծխելն է:

Այստեղ էլ «տաքուկ» տեղ է գտել, Մարիան էլ է ծխող:

- Լաւ էլ գտել էք իրար,- առանց բարեւ-բարի լոյսի ասում եմ ես:

Մարտիրոսը մէկ առ մէկ փաթաթւում է բոլորիս հետ եւ արցունքները հոսում են աչքերից: Ընդհանրապէս շատ փխրուն սիրտ ունի այդ յիս-նամեայ տղամարդը:

- Այդպէս հա՛..., վերջը ելար Հայաստանէն: Վե՛րջ, վե՛րջ, ալ պիտի չխօսիմ այդ մասին: Հայաս-տանի մէջ շատ խօսած ենք այդ նիւթին շուրջ:

- Բայց, ինչո՞ւ լուր չտուիր գալուող օրուայ մա-սին, կու գայինք, կը դիմաւորեինք:

- Ի՞նչ պէտք կար, ձանըմ: Թաքսիի վարորդին հասցէն տուի, անմիջապէս բերաւ, տեղ հասցուց:

Մէկ շաբաթ մնաց Մարտիրոսը մեր տանը: Երանելի, իրաշալի օրեր: Գաղափարի մարդ էր Մարտիրոսը: Ինք եւ Պէրճ Գամբարոսեանը քանիցը «ծեծ կերած» են Պոլսի ոստիկանատանը՝ գաւառներից հայեր Պոլիս բերելու համար:

Նրա եւ հայրիկիս վրոյցները Երեւանի մեր բնակարանում ժամեր, օրեր էին տեսում: Մինչ մենք իր կնոշ հետ, մեր ձաշասենեակում ընթրում էինք, նա առանձնանում էր հայրիկիս հետ՝ նրա աշխատասենեակում եւ ժամեր շարունակ վրոյցի էր բռնուում գիտնական հօրս հետ:

Ես Մարտիրոսի մասին դեռ երկար եմ խօսելու այս գրքի յաջորդ՝ Ամերիկեան յիշողութիւններին վերաբերող յիշողութիւնների հատորում: Հիմա զանք այսօրուան:

Չարմանալի է, Մարտիրոսը չի եղել Բոտակայում: Ուստի, այս անգամ մենք ենք ուղեկցողի դեր կատարում:

Երեք ամիս է, քիչ չե՞: Չհաշուած Յովսէփի Վարդապետի շրջապատոյտներին, մենք էլ մեր հերթին, վեր ու վար ենք արել Հռոմը: Եղել ենք բոլոր հոյակերտ հրապարակներում, այգիներում: Իսկ երեխանների համար յատուկ կառուցուած Լունապարկ՝ մերոնք գնում-գալիս են ինքնուրոյն:

- Վաղը կիրակի է, Մարտիրոս: Հայկական պատարագի օր: Ամիսը մէկ անգամ Վատիկանը Երոպայի համար սփռում է Հայկական Պատարագի արարողութիւն, կենդանի կատարմամբ, ուղղակի խորանից, կը գա՞ս մեզ հետ, Մարիետան պիտի կատարի բոլոր մեներգերը:

- Ի՞նչ հարց կայ, Հենրիկ, անշուշտ կ'ուզեմ ես ալ մասնակից ըլլալ պատարագին:

- Քիչ մը կանուխ պիտի հոն ըլլանք, որ քու անունդ ալ արձանագրենք: Պատարագէն վերջ աղուոր տեղ մը կ'երթանք,- ասացի ես ու շարունակեցի,- արագ, արագ շարժուեցէք տղաք, մամա, պապա, Հայր Սէթեանն է այսօր պատարագիչը: Նա սիրում է պատարագից առաջ յանձնարարութիւններ տալ, եւ, որքան որ գիտեմ, այսօր ուզում է ձայնագրել եւ ապագային օգտագործել, երբ մենք այստեղ չենք լինի:

Դուրս ենք գալիս փողոց, եւ մեր ճարպիկ Մարտիրոսը մի տաքսի է կանգնեցնում, մօտենում վարորդին, ու խօսքի բոնուում հետը:

Յատակ է. փորձում է համոզել, որ ամէնիս վերցնի, չէ՞ որ եօթ հոգի ենք: Ստացուեց:

- Հայտէ՛, հայտէ՛, շուտ մը նստեցէք,- ուրախացած, որ կարողացել է համոզել վարորդին, բարձրաձայն ասում է մեր բարեկամը:

Հիանալի պատարագ էր: Մարիետան դեռ  
երբեք այդքան հոգեթով չէր երգել: Մարտիրոսը,  
որ կանգնել էր մեր ետեւում, թաշկինակը չէր  
հեռացնում աչքերից:

Պատարագից յետոյ բոլորս մէկտեղ լսեցինք  
ձայնագրութիւնը: Հիանալի էր: Բնաւ չես ասի, որ  
ձայնագրութիւնը կատարուած է ափի մեծութեան  
մի փոքրիկ ձայնագրիչով:

- Ապրիք, շատ ապրիք, տղաք, ես քասէթ ալ  
կրնամ շինել, եթէ, իհարկէ, մեր Մարիետան եւ  
Հենրիկը արտօնեն,- կատակով ասաց Հայր Սէ-  
թեանը,- իսկ իհմա, բարեկամներս, դուք այսօր իմ  
հիւրս էք: Չեզի պիտի տանիմ մեր վարժարանի  
ամառանցը: Տղաքը մասնաւոր պատրաստութիւն  
տեսած են ձեզի իհրասիրելու համար: Որեւէ  
խոսք, առարկութիւն չեմ ուզեր: Ամէնքդ ալ կը  
տեղաւորուիք օթոյիս մէջ:

Որտեղից-որտեղ, չգիտեմ ինչից դրդուած,  
Մարտիրոսը հարց տուեց վարդապետին.

- Հայր Սուրբ, դուք Կոմիտաս չ'ք երգեր...

- Բարեկամս, ես լաւ գիտեմ, որ Պոլսոյ մէջ մի-  
այն Կոմիտաս կ'երգուի: Մենք Եկմալեան կ'եր-  
գենք, քանի մը կտորներ ալ Այտընեանէն..., - շար-  
ժինք տղաք, կանուխէն տեղ հասնինք, որ տղաքը  
կարենան լողաւազան ալ մտնալ:

Փառայեղ ժամանակ անցկացրինք Լեւոնեան  
Վարժարանի ամառանցուում: Երեք մեծերը՝ իրար  
գլխի հայ ազգի ճակատագիրն էին որոշում:

Նոյն գիշերը հեռաձայն եկաւ Վալանսից, մեր  
Անահիտից: Վերջինս լսել էր Վատիկանի ռադիո-  
յից հաղորդուող մեր պատարագի երգեցողութիւնը  
եւ չափազանց ազդուել էր Մարիետայի ձայնը  
լսելով:

Եկատ Մարտիրոսին ձանապարհելու օրը: Մեր քարեկամը, ինչպէս եւ երկու ամիս առաջ Անահիտը Ֆրանսիայից, մէկ շաբաթ հոգաց մեր բոլոր ծախսերը: Իսկ եկած օրը, մեզ վերադարձրեց անցեալ ամռանը իրեն պահ տրուած մեր ոսկեղինն ու մի քանի հարիւր դոլարը:

Փխրուն հոգու տէր Մարտիրոսը մեզ էլ լացացըրեց քաժանման պահին:

Տարիներ յետոյ, միայն ինձ էր բախտ վիճակուելու կրկին հանդիպել մոլեռանդ հայ, ազնուագոյն մարդ, բարձր ինտելէկտ ունեցող պոլսահայ բիզնեսմեն, կոշիկի ֆաբրիկատէր Մարտիրոս Բալկածըօղլուին:

Մարտիրոսի մեկնելուց տաս օր անց, Անասեան ընտանիքին թոյլատրուեց մեկնել Միացեալ Նահանգներ՝ մշտական բնակութեան: Օրն էր Ուրբաթ, Յուլիս 13, 1978 թուական:

# ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԻՐԱԿԱԼԸ

## ԳԵՎՈՐԳ ԱՍԱՏՐՅԱՆ

Չկա ոչինչ առավել սարսափելի, քան Մատենադարանի կամարների տակ կյանքի մեծ մասն անցկացրած վաստակաշատ գիտնականի հոգեկան հանկարծահաս խոռվրի պահին բարձրածայն արված խոստովանությունը. <<Շուրջ ես նայում և չես գտնում մեկին, որ մի բան հարցնես... Եվ ստիպված գլուխող կախում ես...>>:

- Կա արդյոք առավել դառը ինքնախոստովանություն հայ գիտնականի համար... Իսկ ահա մենք խոսում էինք մեր երկրի և ժողովրդի ուժի ու քուլության, զիտության երեկվա ու, մանավանդ՝ վաղվա օրվա մասին, մեր մշակույթի, գիտության երախտավորների, երախտագիտության ու երախտամոռության մասին...

Մենք խոսում էինք Հակոբ Անասյանի մասին:

Հակոբ Անասյան: Համոզված եմ՝ այս անունը շատ շատերն առաջին անգամ են լսում և, ինչ խոսք, այս անունը նրանց ոչինչ չի ասի, բացառապես ոչինչ: Սակայն նրան ճանաչողների (ավա~դ, սակավաթիվ մարդկանց) աչքերի առջև նախ կհառնի հայ խոշոր գիտնականի առինքնող կերպարը, ապա և, ինչպես արևմտահայերը կասեն՝ <<Հայու ճակատագիրը>>...

Անասյանի պարագայում, սակայն, <<Հայու ճակատագիր>> ասվածը բոլորովին էլ չենք ուզում գործածել <<դասական>>, այն է՝ Մեծ եղեռնից մազապուրծ փրկվածի, աշխարհով մեկ թափառական հայի ճակատագրի իմաստով (թեև, ինչ խոսք, Անասյանը ծնված լինելով Թուրքիայում, տեսել ու վերապրել էր մեր ժողովրդի այդ մեծ արհավիրքը), այլ հայ զիտնականի որչափ տաղանդավոր, նույնչափ էլ արհամարված ու անտեսված՝ մեզ այնքան ծանոթ ճակատագրի իմաստով:

Հայ նշանավոր մատենագետի, աղբյուրագետի, պատմաբանի մասին պատմությունները հիմնականում գրուեսկային բնույթի են, անհավատալի, ասես առասպելաբանության ոլորտից կամ ժողովրդական բանահյուսությունից են քաղված:

Ահա՝ ասում են, որ բոլոր նրանք, ովքեր հայագիտության գրանիտը <<կրծել>> և իրենց <<ատամների գորությունը>> փորձել են Անասյանի աշխատություններով, երբ առաջին անգամ տեսել են նրան, կարկամել, շփոթվել են՝ ոչ մի կերպ չկարողանալով նույնացնել իրենց առջև կանգնած ժպտուն, փոքրամարմին ու ճաղատ մարդու իրական և խստահայաց ու խոշոր զիտնականի երևակայական կերպարները:

Ասում են՝ Անասյանի հրատարակած գրքերից յուրաքանչյուրը շատ ավելի ծանր է կշռել, քան ինքը՝ այդ հսկայածավալ գրքերի հեղինակը... Ասում են՝ երեսուն տարի շարունակ, նա առաջինն է Մատենադարան մտել և վերջինը դուրս եկել այնտեղից...

Ասում են՝ երեսուն տարի շարունակ նա Մատենադարանից տուն և տնից Մատենադարան է քարշ

տվել այլազան գրքերով և փաստաթղթերով իսցկված իր ծանր ու մեծ կաշվե պայուսակը՝ ճիշտ այն մըրցյունի հանգույն, որ իր բույնն է զլորում սեփական քաշը մի քանի անգամ գերազանցող ձմեռվա պաշարը...

Ասում են նաև, որ այդ պայուսակի մեծությունն ու հատկապես՝ նրա ծանրությունը խիստ կասկածելի է թվացել խորհրդային ֆինանսական, հսկիչ ու վերահսկիչ բաժիններին, մանավանդ, երբ հետամտում ու պարզում են, որ նրա տան լույսը մինչև ուշ գիշեր չի մարում:

«Ք՞նչ է անում այս <<ախապարը>> մինչև լույս, պէտության աչքից թարուն՝ գիշերով. Բաստուրմա է սարքում, կոշի կ է կարում, թէ ...>>:

Եւ մի գիշեր, անակնկալ տուն են խուժում..., բայց լամպի լույսի տակ գրքերին հակված տեսնելով գիտնականին՝ թևաթափ, մանավանդ ամորթահար ու գլխիկոր, հեռանում են...:

Ասում են՝ Անասյանը անգիր գիտեր Մատենադարանի հսկայական գրապահոցի յուրաքանչյուր գրքի տեղը և կարող էր առանց փնտրելու՝ ոչ գիտակ մարդուն անսխալ հուշել անհրաժեշտ գրականության տեղը՝ անթիվ-անհամար գրքերի շարքում:

Ծանոթ էր, ճանաչում էր Մատենադարանում պահվող ձեռագրերն ու տպագիր բոլոր գրքերը՝ անգամ ձեռագրերի ու գրքերի հինավուրց պատառիկները... Եվ ոչ միայն Մատենադարանի, այլ նաև Վենետիկի, Երուսաղեմի մատենադարաններինը:

Անասյանը երբեք չգնաց գիտության տրորված արահետներով, չգրեց հայտնի, հանրածանոթ թէ-

մաներով: Նա անընդհատ որոնում էր նորը, անհայտը, այն՝ առերևույթ անտեսանելի գանձերը, որոնք դարեր շարունակ անթեղված էին մնում հնագույն գրքերի ու ձեռագիր մատյանների էջերում:

Եւ, երկարամյա տքնանքի ու պրայտումների շնորհիվ նա հայտնաբերում է մատենագիտական բացառիկ բնագրեր... Ասում են՝ նրան՝ այդ փոքրամարմին մարդուն ենք պարտական հայ ազատազրական շարժման արևմտահայ թեր հայտնաբերելու համար:

Ասում են նաև՝ ֆանտաստիկ (առասպելական) են եղել նրա գիտական ծրագրերը: Նա իր կյանքի զործն է համարել հայ մատենագիտության կազմումը, որի երեսուն հասորներում պետք է ամփոփվեր, ի մի բերվեր հայերենով երբևէ գրված, հրատարակված ձեռագիր ու տպագիր գրականությունը, մի խոսքով՝ մեր ժողովրդի բազմադարյա մտավոր հարստությունը...

Ասում են՝ նման ծրագիրը անասելի համարձակություն կարող էր դիտվել անգամ ցանկացած խոշորագույն ու հզոր երկրի ու ժողովրդի համար: Եվ երբ, 1959 թ. Երևանում լույս է տեսնում <<Հայկական Մատենագիտության>> առաջին հատորը (1300 էջ), իսկ 1976 թ.՝ երկրորդ՝ դարձյալ ստվարածավալ հատորը, ավելի ուշ, բայց արդեն Լոս Անջելեսում երրորդ՝ նույնապես հաստափոր հատորը՝ <<Մանր երկեր>> վերտառությամբ...(<<ՄԱՆՐ ԵՐԿԵՐ>>-ը կապ չունի <<Մատենագիտության>> հետ, <<Հայկական Մատենագիտության>> 3-րդ հատորը լույս է տեսել Երևանում, 2004 թվականին՝ Յակոբ Անասեանի ծննդյան 100-ամյակի առթիվ,- ՀԵՆ. Ա.):

Բոլորը տեսնում են, որ այդ հատորները չեն սպառում անգամ հայոց այբուբենի առաջին երեք տառերը, նոր միայն հասկանում են, թէ ո՞ւր էր այդպէս օրնիբուն, զիշեր թէ ցերեկ, տարիներ շարունակ շտապում այդ անսաելի համեստ մարդն ու անխոնց զիտնականը, և թէ ի՞նչ ահոելի հոգևոր հարստութեան տեր ենք:

Իրավամբ է ասված՝ Անասյանի հրատարակած յուրաքանչյուր զրքի վերջում զետեղված զրականության ցանկն իսկ՝ արդեն մի-մի մենազրություն կարելի է համարել, որոնցից ամեն մեկը կբավեր ակադեմիկոսի կոչմանն արժանանալու...

Եվ, երբ քննարկվել է արդեն բազմավաստակ զիտնականին ոչ թէ թեկնածուի, այլ միանգամից դոկտորի զիտական աստիճան շնորհելու հարցը, հայրենի հայտնի պատմաբաններից մեկը զարմացած և զայրացած առարկել է. <<Խնչպէ՞ս թէ, չէ՞ որ Անասյանը մարքսիզմի աջն ու ահյակը չգիտի>>...

Ասում են՝ Անասյանը իր իսկ հեղինակած զրքերի ե՛ ի խմբագիրն էր, ե՛ սրբազրիչը, որովհետև չկային ե՛ ի հունարենին, ե՛ լատիներենին, ե՛ զրաբարին միաժամանակ տիրապետող մասնագետներ:

Եվ որ, տարիներ շարունակ նախ լաբորանտի, ապա և՝ զիտաշխատողի իր համեստ աշխատավարձից, նաև խմբազրելու և սրբազրելու համար ստացած կոպեկներից Անասյանը բաժին է հանել տպարանի բանվորներին և զրաշարներին՝ օտար ու

անծանոթ լեզուներով տառեր ձուլելու՝ նրանց պատճառած չարշարանքն ու նեղությունը գոնե ինչ-որ կերպ փոխհատուցելու համար...:

Եվ ասում են նաև, որ բծախնդիր գիտնականի անվերջանալի խնդրանքներից հոգնած ու զայրացած տպարանի աշխատողները մի օր, Անապանի թևի տակ են դրել նրա գրքի պատրաստի մամուլներն ու տպարանից...վոնդել:

Ահա այսպիսին է կյանքը, սովորաբար այսպես են մեծերը ճանապարհ հարթում դեպի անմահություն: Եվ, այնուամենայնիվ, ճակատագրի բերումով, հայ գիտնական Հակոբ Անապանը հանգրվանում է Ամերիկայի Կալիֆորնիա նահանգում: Անկասկած՝ ո՞չ իր կամքով և ո՞չ էլ, մանավանդ, վերը նշած պատճառներից կամ հանգամանքներից դրդված:

Անապան գիտնականը, առավել քան այլ ոք, գիտակցում էր իր գործի կարևորությունը և ըմբռում իր կատարելիք աշխատանքի անհրաժեշտությունը...,- մեկնարբանում է պրոֆեսոր Պարույր Մուրադյանը, որ երկար տարիներ բախտ է ունեցել Անապանի հետ աշխատելու,- կայարանում, բացի նրա ընտանիքի անդամներից, մենք էինք՝ երեք հոգի: Երբ գնացքը շարժվեց, Անապանը շփոթահար կանգնել էր կառամատուցին և տեղից չեր շարժվում...չեր ուզում գնալ: Վերջին պահին միայն

թևատակից նրան բարձրացրինք (թեթև էր) և հրեցինք վագոնի դռնից ներս...

- Այնուամենայնիվ, ինչո՞ւ հայագետը թողեց հայրենիքը, ինչո՞ւ, ի վերջո, համաձայնեց մեկնել, - համառորեն փորձում եմ հասու լինել ճշմարտությանը:

- Համենայն դեպս, ոչ հայրենիքից նեղացած լինելու պատճառով: Նա, որպես ճշմարիտ գիտնական և հայագետ, որպես պետականությունից զրկված ժողովրդի ներկայացուցիչ, որպես սփյուռքահայ, հրաշալիորեն գիտակցում էր, որ ամենավատ պետությունն անզամ շատ ավելին է, քան պետականություն չունենալը:

Նա գնում էր, որովհետև, առանց իր ընտանիքի, պարզապես չէր կարող ապրել: Նա, բացի Մատենադարանից, գնալիք տեղ չուներ, անզամ խանութների տեղը չզիտեր: Առանց ընտանիքի, նա պարզապես սովոր կմատնվեր: Նա գնաց իր կյանքի երազանքը իրականացնելու, և դա հայրենալքություն չէր: Նրա մեկնումը հիրավի մի քանի հայրենադարձություն արժեր:

Ավելին ասեմ՝ Անասյանի ԱՄՆ-ում հայտնվելը՝ նոր խթան էր հայագիտության զարգացման համար: Մի կողմ թողնենք այն նոր՝ արժանապատիվ կենսապայմանները, որում վերջապես սկսում է ապրել նշանավոր հայագետը (նյութական ապահովածություն, գիտության դոկտորի, պրոֆեսորի կոչումներ՝ շնորհված Լու Անջելեսի համալսարանի կող-

մից...): Այնտեղից նա շուտով հնարավորություն է ստանում գործուղվել (Երեք ամսով,- Հեն. Ա.) Վենետիկ, Երուսաղեմ՝ շարունակելու իր գիտական պրադտումներն ու որոնումները, մի բան, ինչը հայրենիքում համառորեն մեժվում էր:

Այնտեղ՝ դրսում, նա հնարավորություն է ստանում գտնելու, հավաքելու, փոշիացումից փոկելու տարիներ շարունակ սփյուռքահայ մասուլում աշխարհով մեկ տարբեր պարբերականների էջերում ցրված իր հայագիտական բազում հոդվածներն ու աշխատությունները և, ի վերջո, հրատարակել իր կյանքի գիրքը՝ <<Մանր երկեր>>՝ ավելի քան համեստ վերնագրով մնայուն այդ աշխատանքը:

Մի աշխատություն, որ այսօր և վաղը և դեռ երկա՞ր տարիներ լինելու է հայագիտությամբ զբաղվողների սեղանի գիրքը:

Մտածում եմ՝ հիրավի տեղին է ասված. <<Մարզարեն իր գավառում պատիվ չունի>>: Բայց, չգիտես ինչու, պրոֆեսոր Մուրադյանի խոսքերն ինձ շատ ավելի դիպուկ, մանավանդ պարզ ու հասկանալի են թվում. <<Ծառի բնի հաստությունը կտրելուց հետո է միայն երևում... Մարդը մեր կողքին էր, մեզ հետ, բայց մենք նրա արժեքը չիմացանք: Անփոխարինելի մարդ էր>>:

Եվ այս խոսքերին հաջորդում է երկարատև ու մի ծանր լոռություն, սակայն ոքքա՞ն աղաղակող: Եվ իմ՝ <<երախտապարտ ժողովուրդ չենք>> բարձրածայն

մտորումը, ավելի քան անտեղի ու ավելի քան անհեթեթ է հնչում:

Հանուն արդարության, սակայն, ասենք, որ Հակոբ Անասյանի՝ ընդամենը գիտության թեկնածուի անունը զարմանալիորեն, այնուամենայնիվ տեղ է գտել Հայկական սովետական հանրագիտարանում: Գիտության անխոնջ մշակի, մեծ հայրենասերի ու նվիրյալի ստեղծագործական սիրանքն ամփոփվել է ընդամենը հետևյալ եռատողում. <<Ուսումնասիրել է հայ ազգային շարժումները, գիտական շրջանառության մեջ է դրել <<Գիտական աղբյուրները Բյուզանդիայի անկման մասին>>, <<17-րդ դարի լեհաբուրք հարաբերությունների վերաբերյալ հայկական աղբյուրները>> եւ Վարդան Այգեկցու <<Արմատ հավատո>> երկը>>; Այսքան նը:

<<Ծառի բնի հաստությունը կտրելուց հետո է միայն երևում...>>; Մինչդեռ այդ երկնուղեց <<ծառի>> հզոր բնով ու փարթամ սաղարթներով դեռ անցյալ դարասկզբին հիացել էր խոշոր հայագետ Արշակ Չոպանյանը, հայագիտության՝ տակավին նորանոր բացահայտումների կարոտ անդաստանում նրա վաղվա առատ ու քաղցր հունձքն էր տեսնում Վարպետը՝ Ավետիք Իսահակյանը...

Ասում են..., դարձյալ <<ասում են>>, որովհետև խիստ դժվար է, եթե ոչ անհնարին, մեծագույն գիտնականի, նրա փոքրկահույզ ստեղծագործական կյանքի, մաքառումների, պայքարի և ըստ ամենայ-

նի՝ դրամատիկ ու ողբերգական ճակատագրի մասին գրավոր տեղեկություն ձեռք բերելը։ Եղածն ընդամենը հուշերի պատառիկներ են՝ անթեղված ազնիվ ու բարեխիղճ մարդկանց սրտերում...

Ասում են՝ անցյալ դարի 30-ականների վերջերին (**Ճիշտը՝ 1935 թվականին,- Հեն. Ա.**) երկրորդ անգամ և արդեն վերջնականապես հայրենիք վերադարձող Ավետիք Իսահակյանը Փարիզի հանրային գրադարաններից մեկում (**Ճիշտը՝ ՆՈՒՊԱՐՅԱՆ ԳՐԱԾՈՒՆ-ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ,- Հեն. Ա.**) նկատում է գրքերի հսկայական կույտի մեջ կորած մի մարդու։ Մոտենում է, տեսնում լատիներեն, հունարեն, գրաբար հնատիպ գրքեր են...<<Ո՞վ է>>,- հետաքրքրվում է բանաստեղծը։ Գրադարանի աշխատակիցները, որոնք շատ լավ էին ճանաչում Անապյանին, միմյանց են ծանոթացնում բանաստեղծին ու երիտասարդ գիտնականին։

Ծանոթանալով՝ վարպետն ասում է. <<Որդի ս, մենք բոլորս մի հանգրվան ունենք՝ հայրենիքը, և մեր տեղը՝ իմ, քո, բոլորիս, այնտեղ է՝ Հայաստանում։ Այստեղ մենք անելիք չունենք, հայրենիքը մեզ է սպասում>>։

Այսպէս, նախախնամության կամոք, իրար են խաչվում մեծ բանաստեղծի եւ մեծ հայագետի կյանքի ճանապարհները։ Եվ նրանք՝ համաժողովրդական փառքի գագաթին գտնվող բանաստեղծն ու Վիեննայի (**Ճիշտը՝ Վենետիկի Սիփրարյան Միարա-**

նության,- Հեն. Ա.) նախկին սանն ու արդեն ճանաշված մատենագետը, հայրենիք են վերադառնում... Իսկ հայրենիքում մոլեգնում էր ստալինյան բռնապետությունը:

Հակոբ Անասյանը հայրենիքում է, սակայն նրա կյանքի նավը դեռ հեռու էր խաղաղ հանգրվանից: Հազիվ հայրենի հողին ոտք դրած, պայթում է Հայրենական Մեծ պատերազմը: Եվ զիտնականը, որ խաղաղ պայմաններում կարճ հասակի և նաև թեթև քաշի պատճառով թերևս բանակ չզորակոչվեր, շուտով կարմիր բանակային զորքերի շարքում, զենքը ձեռքին, մեկնում է ռազմաճակատ, մարտնչելու ֆաշիզմի դեմ:

Ափսո՞ս, Անասյանի պարագայում մենք չենք կարող օգտագործել այնքան հայտնի և այնքան սիրված <<զրիչը զենքով փոխարինեց>> կամ՝ <<երբ խոսում են թնդանոթները, մուսաները լուս են>> թևավոր խոսքերը... Անասյանը շատ կարճ էր ապրել խորհրդային երկրում և վերոհիշյալ արտահայտությունները նրան թերևս անծանոթ էին, քանզի ճակատ է մեկնում ուսապարկում ունենալով Խորենացի, հունարեն, լատիներեն, գրաբար զրքեր և ամենակարևորը՝ հայտնի բյուզանդագետ Մինի <<Հայրաբանություն>> 167 զրքից բաղկացած աշխատության ստվարածավալ հատորներից մեկը՝ <<պատերազմից ազատ ժամերին կարդալու համար>>:

Այնինչ Հակոբ Անասյանի <<պատերազմը>> շատ կարծ է տևում. Շուտով խորհրդային հազարավոր զինվորների հետ նա ևս գերեվարվում և տարվում է Ռումինիա՝ ֆաշիստական զաղափարախոսության ամենամոլեռանդ հետևորդների երկիրը:

Ասում են... (և դարձյալ ասվածը անհավատալի է, ինչպես հեքիաթը, առասպելը) գերմանացի և ռումին բարձրաստիճան սպաները զարմանքից քարանում են, երբ խորհրդային գերու ուսապարկում ծխախոտի, կամ ուտելիքի փոխարեն հայտնաբերում են հունարեն և լատիներեն գրքեր՝ մանավանդ, երբ տեսնում են, որ նա խոսում է ընտրագույն ֆրանսերենով:

- Ո՞վ է,- շատ ավելի են զարմանում հիտլերականները: Անասյանի անձով հետաքրքրվում է Գետապոն: Քրքրում են գերու <<ունեցվածքը>>, գրքերը և հանկարծ, ով զարմանք, գրքերի միջից հատակին է ընկնում Անասյանի մոր (Հակոբ Անասյանը հինգ տարեկանում կորցրել է մօրը, նամակը կնոշից է եղել,- Հեն. Ա.) գրած նամակը:

Հայերենով գրված նամակը...<<Ի՞նչ հանձնարարական է պարունակում այդ նամակը>>: Թարգմանիչ է կանչվում... Եվ ասում են՝ երբ թարգմանիչը բառ առ բառ կարդում և թարգմանում է նամակը, գետապոյական բարձրաստիճան սպաները մեկ նայում են փոքրամարմին, հսկայական շինելի մեջ կորած գերուն, մեկ թարգմանչին և... ծիծաղից

ուշաթափում են: Անասյանի կինը ամուսնուն հորդորում էր. <<Ճակոք ջան, մինչև վերջին գերմանացուն չոչնչացնես, մինչև Բեռլինը չքանդես, հողին չհավասարեցնես՝ տուն չվերադառնաս...>>:

Եվ ինչպես չհավատաս ճակատազրին, խորհրդային ռազմագերի Անասյանը Բուխարեստի հայ զառութի օժանդակությամբ տեղափոխվում է հայկական գրադարան և զերության մնացած տարիները գրադվում է այն գործով, ինչի համար ծնվել, աշխարհ էր եկել՝ հայագիտությամբ: Իսկ հայագիտությունը Անասյանի խաչն էր, որ նա տանում էր անխոս ու լուս, անտրտունջ՝ զիշեր թէ ցերեկ, կուշտ կամ քաղցած, օտարության մեջ թէ հայրենիքում, տանում էր առաջին քրիստոնյայի զերմեռանդությամբ և իսկական առաջամարտիկի նվիրվածությամբ:

Մատենադարանում, ամենայն հավանականությամբ, դեռ պահվում է, կա այն սեղանը, որը նշանավոր զիտնականի 30 տարվա տառապանքի ու տքնանքի, ստեղծագործ մտքի թոփքների լուս ու համր վկան է, սակայն քանի դեռ այն, իբրև հիշեցում-պատգամ, իր վրա փակցված չունի <<այս սեղանի վրա աշխատել է նշանավոր մատենագետ Ճակոք Անասյանը>> փորագրությամբ պղնձի փոքրիկ կտորը՝ կմնա որպես անշունչ առարկա, որպես ընթերցարակի կահույքի մի մաս՝ գուրկ հոգևոր արժեքից ու բովանդակությունից:

Հիշում է պատմաբան, պրոֆեսոր Հայրապետ Մարգարյանը.

<<Ամառային մի օր անակնկալ իրարանցում է սկսվում Մատենադարանի ամենօրյա՝ այնքան խաղաղ ու սովորական կյանքում... Հանկարծ սենյակից-սենյակ, սրահից-սրահ շշուկ է տարածվում, թէ Անասյանը չկա: Դա նույնն էր, եթէ ասենք, առավոտ կանուխ Մատենադարանի աստիճաններով բարձրացողը հանկարծ դատարկ տեսներ մուտքի աջ և ձախ կողմերում տեղադրված արձանների պատվանդաններից մեկը... Եվ երբ պարզվում է, որ Անասյանը մեկնել է Սոչի՝ հանգստի, անհանգստությունը վերածվում է խուլ աղմուկի. <<Ի՞նչպես թէ՝ Անասյանն էլ, հանգըստանա՝, այն էլ՝ ծովափո՞ւմ... Հանգստանա մեզ պես, սովորական մահկանացուներիս նմա՞ն...>>:

Ահա ով էր Հակոբ Անասյանը...

Սեղանիս հայրենանվեր գիտնականի տողերն են հայ ազգային-ազատագրական շարժման հերոս Զորավար Անդրանիկի մասին. <<Աշխարհում չկա մի հայ, որի սիրտը չդողա՝ արտասանելով այդ պաշտելի անունը՝ Զորավար Անդրանիկ: Նա մեր պատմության ամենաթանկագին գոհարներից մեկն է>>:

Այս, եթե մենք էլ կարողանայինք որդիական նույնպիսի պատկառանքով զլուխ խոնարհել ականավոր գիտնականի, նրա մեծ վաստակի առջև և, նրա խոկ խօսքերը իրեն վերադարձնելով, զոնե

ասեինք. <<Ամեն հայ պետք է իմանա և հպարտորեն արտասանի Հակոբ Անապյան անունը: Նա մեր գիտության թանկագին գոհարներից մեկն է>>: Եթե ասեինք ..., ավա՞ղ՝ չասացինք:

Ի դեպ, ինչպես տեսնում ենք, Անապյանի կյանքում ամեն ինչ ենթարկվել է նախախնամության վերին կամքին: Նրա բուն ազգանունը Սոյլամազյան է եղել (սխալ է, ճիշտն է՝ ՍՈՅԼԵՄԱԶՅԱՆ-ՍՈՅԼԵՄԵԶՅԱՆ,- Հեն. Ա.), որը թուրքերենից թարգմանվում է Չիտուկանյան, Սակավախոսյան: Վիեննայի Միսիթարյան միաբանությունում սովորելու տարիներին, սուրբ հայրերն են իրենց շնորհալի սանի ազգանունը թարգմանել՝ դարձրել են Ան-աս-յան: (Սխալ է, ինչպես վերեվում եմ նշել, հայրս Վիեննայի Միսիթարյանների մոտ երբեք չի սովորել: Նա ուսանել է Վենետիկի Միսիթարյանների մոտ՝ 1919-23 թ.թ.: Եվ հետո, Հակոբ Անապյանը՝ ինքը, առանց որևէ մեկի խորհրդով կամ թելադրանքով է փոխել իր մականունը՝ 1930 թվականին՝ Փարիզում, թերթի խմբագիր եղած ժամանակ,- Հեն. Ա.):

Անապյանի հետաքրքրությունների աշխարհը միջնադարն էր, իին, վաղնջական ժամանակները: Եվ աշխարհի ու կյանքի հետ հարաբերվելու նրա լեզուն ասես գրաբարն էր,- իիշում է պրոֆեսոր Մարգարյանը,- նրա լեզուն գիտության լեզուն էր՝ չոր, փաստարկված, ճշգրիտ, և Անապյանը, որ մի ամբողջ կյանք հավատարիմ մնաց գիտնականի իր այդ

սկզբունքին, այնուամենայնիվ, մի անգամ ազատություն է տալիս իր զգացմունքին...

1982թ. (Ճիշտը՝ 1987թ.- Հեն. Ա.) Լու Անջելեսում լույս տեսած <<Մանր երկերի>> վերջին էջում գետեղում է <<Մեսրոպ Մաշտոցն ու թռոնիկս>> մանրապատումը... Այնտեղ բազմավաստակ գիտնականը պատմում է, թէ ինչպես իր թռոնիկը առաջին անգամ իր փոքրիկ թաթիկներով գրել է մեսրոպյան տառերը... Սա ականավոր գիտնականի թերևս միակ զգացմունքային պոռթկումն էր ստեղծագործական երկարամյա տքնանքի ընթացքում:

Հանկարծ բոլորս մեզ համար պարզում ենք, որ Անասյանը միայն առաջին հայացքից էր անհաղորդ, ծանրաբարո ու անմարդամոտ, մինչդեռ խորքում ուներ անսահման բարի, քնքուշ ու ջերմ մի սիրտ...

Ահա ով էր Հակոբ Անասյանը և ինչպիսին էր նրա, ըստ ամենայնի, ողբերգական ձակատագիրը:

Այս ձակատագիրը թերևս տխուր մտորումների առիթ տա բոլոր-բոլոր նրանց, ովքեր <<Գլուխները բարձին>> դնելուց առաջ մի պահ կխորհեն իրենց ազգի մասին (դարձյալ հանրահայտ մի կաղապար, որ հաճախակի, մանավանդ անտեղի օգտագործելուց վաղուց մաշվել, արժեզրկվել է), կփորձեն հասկանալ, գտնել բազմաթիվ ու բազմազան այն հարցերի պատասխանները, թե... թե ինչո՞ւ ենք դեռ Խորենացու ժամանակներից այսպես սակավաթիվ ու փոքր, ինչո՞ւ չենք կարողանում համաքայլ ընթա-

նալ առաջադեմ ազգերի հետ, ինչո՞ւ մշտապես այն չենք, ինչ երազել ու երազում ենք, ինչո՞ւ ենք ապրում այնպիսի կյանքով, որին մեզ արժանի չենք համարում և ինչո՞ւ համառորեն չենք դառնում այն երկիրը՝ Ավետյա~ց, որին ձգտել ենք երկար-երկար դարեր...

Մտահոգող հարցեր, մտատանջող հարցեր, մարդու հոգուն ցավ բերող, մարդու միտքը լկող, հոշոտող, կաթվածահար անող հարցեր, անվերջանալի հարցեր...

Անասյան գիտնականի ճակատագիրը, թերևս, դառը մտորումներ արթնացնի բոլոր նրանց սրտերում, ովքեր սեփական վրիպումների, բացքողումների, թերացումների, անկումների պատճառը չեն փնտրի հեռուներում, ուրիշ տեղերում և չեն վերագրի <<Չարադետ ժամանակներին>>...

# ՅԱԿՈԲ ԱՆԱՍԵԱՆԻ <<ԱՐՄԱՏ ՀԱՒՏՈՅ>>-Ի ԿՈՐՍՏԵԱՆ ԱՌԵԴԾՈՒԱԾԸ

ՀԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ

## Ա. ՄԱՍ

Վարդան Այգեկցու <<Գիրք հաստատութեան և Արմատ Հաւատոյ>> դաւանաբանական աշխատութեան (կրծատ՝ <<Արմատ Հաւատոյ>>) վրայ Յակոբ Անասեանը աշխատել է զրեթե 20 տարի, 1968 թուականից սկսեալ՝ մինչեւ իր կեանքի վերջը (1988 թ. Յունուար 28), թէեւ Այգեկցու աշխատութեանն անդրադառնալու գաղափարը նրա մօտ յղացել է դեռեւս 1950-ական թ.թ.: Ըստ պատմաբան Յակոբ Քեռուեանի (Վարդան Այգեկցի-<<Գիրք հաստատութեան և Արմատ Հաւատոյ>>, Երեւանի Պետական Համալսարանի Հրատարակութիւն, Երեւան, 1998) <<Երջանկայիշատակ զիտնականին է պատկանում 12-13 դ.դ. Երեւելի մատենագիր Վարդան Այգեկցու <<Արմատ Հաւատոյ>> դաւանաբանական աշխատութեան յայտնաբերման, հեղինակային պատկանելութեան ճշդման և գնահատման Պատիւր>>.- գրում է նա Այգեկցու զրքի ներածականում:

Սակայն՝ ի՞նչն է եղել հիմնական շարժառիթը, որ երկար տարիներ շարունակ, Յակոբ Անասեանը մտահան չի արել այդ թեման եւ իր այլ աշխատութիւններին զուգահեռ, պարբերաբար գրել է <<Արմատ Հաւատոյ>>-ին վերաբերող տասնեակի հասնող մատենագիտական մօտեցմամբ լուրջ յօդուածներ: Ահա թէ ինչ է գրում նա Վարդան Այգեկցու <<Արմատ Հաւատոյ>>-ի մասին.

- <<Վարդան Այգեկցու այս աշխատութեան նպատակն է պաշտպանել հայ եկեղեցու աւանդական ուղղափառ դաւանանքը՝ հակաքաղկեդոնական ուղղութեամբ>>:

Պատմութիւնից յայտնի է, որ 12-րդ դարի սկզբին հայ իրականութեան մեջ ստեղծուել էր քաղկեդոնական (հռոմեական, յունական) մտայնութեան միջավայր, ուր զարգանում էին լատինական եւ յունական եկեղեցիները, ու նրանց կարգուսարքը զովաբանող եւ հայ եկեղեցու դաւանական (Ազգային կրօն, հաւատամբ,- ՀԵՆ Ա) դրոյթներն ու ծիսական կարգերը քննադատող տրամադրութիւններ:

Ինչպէս նշում է Յակոբ Անասեանը՝ <<Ահա այսպիսի մի ժամանակաշրջանում է հանդէս գալիս Վարդան Այգեկցին՝ գրչով պայքարելու կրօնական օտարամուծութեան դէմ, ի պաշտպանութիւն հայքիստոնէական դարաւոր աւանդոյթների: Վ. Այգեկցին պայքարի մեջ էր մտել այն հայերի դէմ, որոնք ներշնչուած էին քաղկեդոնական տրամա-

*դրութիւններով, ըստ այնմ էլ նրանցից ումանք հայերին համարում էին տգետ եւ հետամնաց ազգ>>:*

Վերի եւ յետազայ մեջբերումները վերցուած են Յակոբ Անասեանի <<Նամականի>> գրքից, հրատարակուած 2004 թ.<sup>1</sup> Յակոբ Անասեանի ծննդեան 100-ամեակի առթիւ (կազմող՝ Հեն. Անասեան):

Ինքնին հասկանալի է, որ Յակոբ Անասեանը 50-60-ական թ.թ. չէր կարող անդրադառնալ խորհրդային իրաւակարգում կրօնը մերժող. Հայ Քրիստոնէական կրօնը պաշտպանող մի աշխատութեան, մինչեւ չգային քիչ թէ շատ “Լուսաւոր” օրեր, որպիսիք եղան անցեալ դարի 70-ական թուականները:

Այնուամենայնիւ, 1972 թուականին հայրիկս որոշում է ոիսկի դիմել (հանդգնել) եւ Վարդան Այգեկցու շափականց կարեւոր եւ այժմէական աշխատութիւնը հրատարակութեան պատրաստելու եւ Էջմիածնի հրատարակութեան խողովակով տպագրելու խընդրանքով դիմել Ամենայն Հայոց Հայրապետ Վազգէն Առաջինին:

Որպէս մեջբերում ասեմ, որ Յակոբ Անասեանի եւ Վազգէն Վեհափառի մտերմութիւնն սկսուել էր դեռևս 1944 թուականին, Ռումինիայում, երբ հայրիկս գերութեան մէջ էր, իսկ Վեհափառը Վարդապետի կարգավիճակով ծառայում էր հայ համայնքին:

Վազգէն Վեհափառը ոգեւորութեամբ է ընդունում Յակոբ Անասեանի խնդրանք-առաջարկը եւ Էջմի-

ածնի Հոգեւոր Խորհրդի միաձայն որոշումով յանձնաբարաւում է անխոնջ զիտնականին՝ որոշակի ժամկետում հրատարակութեան յանձնել Վարդան Այգեկցու <<Արմատ հաւատոյ>> դաւանաբանական Կրօնական հաւատալիք, պաշտամունք,- ՀԵՆ. Ա.) աշխատութիւնը:

Պայմանագրի կնքման օրից (1972 թ. Նոյեմբեր) <<Հայկական Մատենագիտութեան>> երրորդ հատորի հետ մեկտեղ, Յակոբ Անասեանը տենդագինս աշխատում է <<Արմատ հաւատոյ>>-ի վրայ:

1978 թ. Վաղորդայնին, երբ մեր ընտանիքը պատրաստում էր Միացեալ Նահանգներ մեկնել, 1977 թ. Նոյեմբերին հայրիկս մի երկարաշունչ նամակ է յղում Վազգեն Վեհափառին՝ տրամաբանօրէն բացատրելով, որ ենելով <<Արմատ հաւատոյ>> աշխատութեան բարդ կառոյցից, չի կարողանալու պայմանագրային կարգով իրականացնել իր յանձնառութիւնը:

Մէկ հատուած այդ նամակից.

### - Վեհափառ Տէր,

Ինչպէս Ձեզ յայտնի է՝ <<Արմատ հաւատոյ>>-ի քննական հրատարակութեան համար օգտագործում են 16 ձեռագիր օրինակներ՝ Երեւանի, Փարիզի, Վենետիկի, Հռոմի եւ այլ վայրերի մատենադարաններից: Նրա քնագրի համեմատական ուսումնասիրութիւնը, հայ եւ օտար աղբիւրների հետազոտու-

թիւնը, աշխատանքի բնդացքում ծագող պատմաբանախրական նորանոր հարցերի քննումն ու լուծումը, գիտական ներածութեան պատրաստումը, պատմական, մատենագրական ու տէրմինարանական ծանօթագրութիւնների կազմումը մի հսկայական բարդ գործ է: Այդ պատճառով, անցեալ Սեպտեմբերի վերջերին ես Զեզ Ռիմեցի՝ խնդրելով վերացնել պայմանագրի ժամկետը:...Հնարաւոր չեմ համարում <<Արմատ հաւատոյ>>-ի համար նոր ժամկետ խնդրել Զերդ Վեհափառութիւնից: Միայն կարող եմ վճռականութեամբ հաւաստել, որ թէ բնտանիքի հետ այստեղ մնալու եւ թէ՝ նրա հետ մեկնելու դէպքում այդ աշխատութիւնը ես աւարտելու եմ եւ՝ հրատարակելու՝ ի փառ Հայաստանեայց Եկեղեցու: Դա իմ բարոյական պարտքն է հանդէպ մեր մայրենի եկեղեցու, դա նաեւ հայրենի գիտութեան համեստ մշակի պատիւն է ինձ հասար:

Այժմ ես խնդրում եմ <<Արմատ հաւատոյ>>-ի յանձնման ժամկետը համարել վերացուած, պայմանագիրը համարել ուժի մէջ եւ ինձ հնարաւորութիւն տալ այդ ծանր գործը կատարելու՝ անշտապ աշխատանքով ու անհրաժեշտ լրջութեամբ:

Ամենախորին ակնածանքով եւ անձնուելով զգացումներով՝

Յ. ԱՆԱՍԵԱՆ

Երևան, 10 Նոյեմբեր, 1977 թ.

... 1978 թուականի Յովիսից մենք արդէն Լու Անգելէսում ենք: Ծնողներս առանձին բնակարանում են ապրում: Ես՝ զրեթէ անտեղեակ նրա գործունեութիւնից, ընտանիք պահելու հոգսերով ծանրաբեռ, շաբաթը երկու-երեք անգամ այցելում եմ նրանց ու անհրաժեշտ օգնութիւն ցոյց տալիս:

Հիմնականում քչախօս, իր աշխատանքների մասին բնաւ չարտայայտուող հայրիկս մի օր յայտնեց, որ պրոֆեսոր Աւետիս Սանձեանի դեկավարութեամբ գործող, Հարաւային Կալիֆորնիայի Համալսարանի Հայագիտական խոշոր բաժանմունքը իրեն շնորհել է Դոկտորի կոչում եւ հրաւիրել աշխատանքի՝ իր հայագիտական գործունեութիւնը աշխուժացնելու համար:

Աւելին. 1980 թուականին, Համալսարանի եւ ՀԲԸ Միութեան նիւթական աջակցութեամբ, Յակոբ Անասեանը Երուսաղեմի պատրիարք Շահէ Արք. Աճեմեանի հրաւերով գործուղուում է Երուսաղեմ՝ իր աշխատանքների, այդ թուում եւ <<Արմատ հաւատոյ>>-ի համար հնագոյն ձեռագրեր ուսումնասիրելու:

Երուսաղեմից վերադառնալուց յետոյ, Յակոբ Անասեանը իր գրասեղանին է տեսնում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից իրեն ուղղուած մի նամակ, որի բովանդակութիւնը ապշահար վիճակ է ստեղծում իր համար: Ահա այդ նամակի համառօտ բովանդակութիւնը.

**ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՉՄԻԱԾԻՆ  
ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ**

*Ս. Էջմիածին, 26 Ապրիլ, 1982 թ.*

**ՀԱՐԳԱՐԺԱՆ ՏԻԱՐ  
ՀԱԿՈԲ ԱՆԱՍՅԱՆ  
Լու Անջելես  
Հարգելի Տիար,**

Մայր Աթոռիս Գերագույն Հոգեւոր Խորհուրդը իր վերջին երկու նիստերում զբաղվելով <<Արմատ հաւատոյ>>-ի խնդրով, որոշեց Ձեզ խնդրել, որ աշխատանքը բարի լինեք վերջացնել և հանձնել Մայր Աթոռիս ամենաուշը մինչև 1982 թվականի Դեկտեմբերի 31-ը, հակառակ ստիպված պիտի լինենք չեղյալ համարել Ձեր պայմանագիրը և գործը հանձնել մեկ ուրիշ գիտնականի: Բնականաբար, Վեհափառ Հայրապետը ցանկանում է, որ <<Արմատ հաւատոյ>> գործը իր վերջակետին հասնի Ձեր հեղինակավոր աշխատակցությամբ, սակայն, եթե ինչ-ինչ հարգելի պատճառներով մինչև այս տարվա վերջ այդ հնարավորությունը պիտի չունենաք, հաձեցեք մեզ զրել հստակ կերպով:

Մայասելով Ձեր բարի լուրերին, Ձեզ ենք փոխանցում Վեհափառ Հայրապետի օրինությունը և զերմագին մաղթանքները քաջառողության:

*Աղոթարար,*

*ԱՏԵՆԱՊԵՏ*

*ՄԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱՆՈՒԿՅԱՆ*

Ի պատասխան այս նամակի, Յակոբ Անասեանը գրում է մի նամակ՝ ուղղուած Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հոգեւոր Խորհրդի Ատենապետ Սիրոն Արքեպիսկոպոս Մանուկեանին: Պարզապէս մի քանի պարբերութիւն այդ նամակից, որոնցից դժուար չէ հասկանալ, թէ ինչպիսի հոգեկան տառապանքների միջով է անցել հայրիկս՝ կապուած <<Արմատ հաւատոյ>>-ի հետ.

### *Սրբազն Հայր,*

*Տրուած որոշումը միանգամայն իրաւացի է, բայց գտնում եմ, որ այդ որոշման կից տեղ է գտել մի փոքրիկ վրիպում, այն է՝ <<Գործը յանձնել մէկ ուրիշ զիտնականի>>: <<Արմատ հաւատոյ>>-ն իմ անձեռնամիսելի սեփականութիւնն է, իմ զիտական յայտնագործութիւնը, իմ անձնական թեման (նիւթ), որ աւելի քան տաս տարիներ ուսումնասիրել եմ Հայաստանում եւ այլուր գտնուող բազմաթիւ ձեռագրեր, որոնց հիման վրայ պատմական, տեքստաբանական եւ աղբիւրազիտական հետազօտութիւնների ենթարկել, յայտնաբերել նրա հեղինակին, պարզել՝ սկզբում անյայտ եւ անորոշ տեսք ունեցող եւ անձնաշելի մնացած մատենագրական այդ երկի դիմագիծն ու էութիւնը:*

*<<Արմատ հաւատոյ>>-ն իմ անհատական սեփականութիւնը եղող զիտական նիւթ է: Սակայն Գերա-*

գոյն Խորհուրդը լիովին իրաւացի է իր որոշման մէջ՝  
այս տարուայ Դեկտեմբերի 31-ի վաղորդայնին  
չեղեալ համարելու պայմանագիրը, բայց ոչ բռնա-  
գրաւելու իմ գիտական թեման ու նիւթը (իմ հրատա-  
րակութիւնների հիման վրայ) եւ ուրիշ մէկին յանձ-  
նելու: Ուստի կը խնդրէի, որ Գերագոյն Հոգեւոր  
Խորհրդի առաջիկայ ժողովին ներկայացնել իմ  
խիստ կենսական պահանջը, այն է՝ փոխել ընդուն-  
ուած որոշման բանաձեւումը՝ այնտեղից դուրս  
թռղնելով <<գործը յանձնել մէկ ուրիշ գիտնականի>>  
բառերը:

Ո՞վ զիտէ, թէ ինչի՝ արդիւնքում հոգեկան, մտային  
ի՞նչ ապրումների պատճառով՝ Յակոբ Անասեանը  
վերի նամակը գրելուց մի քանի օր անց, 1982 թուա-  
կանի Դեկտեմբեր 26-ին (պայմանագրի լրացման  
օրից չորս օր առաջ) նամակ է յդում Ամենայն Հայոց  
Կաթողիկոս Վազգէն Առաջինին՝ այս անգամ արդէն  
բոլորովին նոր տրամադրութեան ու նոր տրամաբա-  
նութեան յանգոյն. Ահա մի հատուած այդ նամակից.

### Վեհապետ Տէր,

Ամանորի եւ Ս. Ծննդեան տօների առթի,  
ընդունեցէք իմ սրտագին շնորհաւորանքները: Մաղ-  
թում եմ Ձեզ յարատել երջանկութիւն եւ շատ երկար  
կեանք, որպէսզի հայ ժողովուրդը Հայրենիքում եւ

Սփիտքս աշխարհի, կարողանայ լիովին վայելել իր Հովուապէտի անձնուէր հոգատարութիւնը:

Միոն Արքազանի կողմից վերջերս յայտնի դարձաւ, որ Զեր դեկավարած Գերազոյն Հոգեւոր Խորհուրդը որոշել է մէկ տարով աւելացնել պայմանագրի ժամկէտը, այսինքն առաջիկայ տարուայ՝ 1983-ի աւարտը, միայն թէ ես լինեմ իմ գործը աւարտին հասցնողը, ինչպէս Արքազանն է գրել՝ <<իմ հեղինակաւոր գրչով>>:

Վեհափառ Տէր, ես, իհարկէ, ջերմօրէն շնորհակալ եմ իմ հանդէպ եւ իմ աշխատանքային ձեռնիասութեան վերաբերմամբ ցուցաբերուած վստահութեան համար:

Եւ գոնում եմ, որ եթէ ես չեմ կարողանում հնարաւոր համարել այդ գործի աւարտումը մօտիկ ժամանակներում, յամենայն դէպս պէտք է մտածեմ նաեւ Մայր Աթոռի հեղինակութեան եւ բարոյական շահերն ապահովելու ուղղութեամբ, ինձ համար պատի համարելով հաշուի առնել Զեր ցանկութիւնը՝ արագօրէն հրապարակ հանելու այդ կարեւոր ժողովածուն:

Հետեւաբար՝ ՄԻՐԱՅՕԾԱՐ կերպով Զեր եւ Մայր Աթոռի տրամադրութեան տակ եմ դնում գիտական իմ սեփական գիւտը եւ թեման: <<Արմատ հաւատոյ>>-ի հրատարակման գործը, ինդրեմ, տնօրինէք կատարել ըստ Զեր հայեցողութեան...

Ես պատրաստ եմ նաեւ Ձեզ ուղարկելու <<Արմատ հաւատոյ>>-ի պատրաստման համար ձեռագրական եւ տպագիր աղբիւրներից տարիների ընթացքում իմ հաւաքած նիւթերի պատճենները (կրկնօրինակներ), ինչպէս եւ <<Արմատ հաւատոյ>>-ի ընդարձակ եւ համառու խմբագրութիւնները ներկայացնող բնագրերի՝ իմ կողմից վերծանուած ու մեքենագրուած օրինակները...

Այս բոլորի մէջ, Վեհափառ Տէր, ես ոչ մի նիւթական ակնկալութիւն չունեմ, նկատի ունենալով, որ այսպիսի գոհողութիւններ՝ մենք բոլորս ենք պատրաստ անել մեր եկեղեցու պահպանման ու բարգաւաճման համար:

Միայն հարկ կը կինի, որ <<Արմատ հաւատոյ>>-ի երատարակման գործին լծուողը իւրաքանչիւր առիթով նշի, թէ սուեալ կէտի կամ հարցի լուսարանման համար պատմական, բնագրագիտական, աղբիւրագիտական կամ լեզուական առումով ի՞նչ են եղել Անասեանի ունեցած կարծիքներն ու եղրակացութիւնները, քննադատելով հանդերձ՝ եթէ կարիք լինի:

Ամենախորին յարգանքներով՝  
Յ. Ս. ԱՆԱՍԵԱՆ

Լու Անգելես, 26 Դեկտ. 1982 թ.

## Բ. ԱՍՍ

Այս յօդուածի առաջին մասի աւարտին, կարծում եմ, յստակ դարձաւ, թէ ինչպէս, ինչ պայմանների առկայութեամբ է Յակոբ Անասեանը սիրայօժար, իր՝ շափազանց արժեքաւոր <<Արմատ հաւատոյ>> աշխատութիւնը <<նուիրել>> եւ այն տպագրելու իրաւունքը տալ Ս. Էջմիածնի Գերագոյն Հոգեւոր Խորհրդին:

Եւ այս ամբողջ պատմութիւնը ինձ յայտնի դարձաւ միայն նրա մահից յետոյ, 1988-ի աշնանը, երբ ճանաշուած պատմաբան, հայրիկիս երկար տարիների մտերիմ-բարեկամ Սուրեն Քոլանձեանը եկաւ Լոս Անջելես՝ եղբորն այցելութեան:

Լոս Անջելեսում իր կեցութեան երկու ամիսներից մէկը, իմ խնդրանքին ընդառաջելով, Սուրեն Քոլանձեանը տրամադրեց Յակոբ Անասեանի արխիւր (պահոց,- Արտ. Մարգսեան) կարգի բերելու գործին: Լրջամիտ զիտնականը հայրիկիս հսկայական պահոցի միջից կարողացաւ առանձնացնել երեք աւարտուն աշխատութիւն, երեքն էլ՝ մերենագրուած: Առաջինը՝ <<Հայկական Մատենագիտութեան>> Յրդ հատորն էր, ըստ որում՝ երկրորդ օրինակը, որը մեզ երկմտանքի մէջ զցեց՝ ո՞ւր էր առաջին օրինակը: Երկրորդը՝ <<Արմատ հաւատոյ>>-ն էր, իսկ երրորդը՝ <<Սայաթ Նովա>> ծաւալուն մենագրութիւնը՝

բազմալեզու մատենագիտական երկարաւուն ծանօթագրութիւններով համալրուած:

Յակոր Անսասեանի արխիտ-պահոցի մեծաքանակ նամակների մէջ մեծ թիւ էր կազմում հարիւրաւոր գիտական արժեք ներկայացնող նամակներ, որոնցից լաւագոյնները զատելու եւ տպագրելու պարտականութիւնը վերցրի իմ ուսերին՝ հետազայում, 2004 թուականին, հայրիկիս ծննդեան 100-ամեակի օրերին հանրութեանը ներկայացնելու համար, ինչը, որ իրականացաւ Հայաստանի Գիտութիւնների Ակադեմիայի հրատարակութեամբ, հենց նոյն՝ 2004 թուին:

Հայրիկիս մահից յետոյ, 1989թ. գարնանը Յակոր Անսասեանի տպագրութեան պատրաստ երեք գրքերը տարայ Երեւան: Երեքն էլ յանձնեցի Մատենադարանի տնօրէն Սեն Արեւատեանին, խնդրելով որ <<Արմատ հաւատոյ>>-ն փոխանցի Կաթողիկոս Վազգէն Առաջինին: Նա խօստացաւ նոյն տարուայ ընթացքում տպագրութեան յանձնել <<Հայկական Մատենագիտութեան>> 3-րդ հատորը:

Ես նոյնիսկ խօստացայ նիւթական աջակցութեամբ արագացնել եւ օժանդակել տպագրութեանը: Մակայն անցաւ տասնըհինգ տարի, բայց պարոնը իր խօսքը չյարգեց, գուցէ չկարողացա՞ւ, ի՞նչ իմանաս՝ խառն օրե՞ր, անկախութի՞ւն, ինչպէս ասում են՝ <<սայլը տեղից չշարժուեց>>: Մի քանի տարի շարունակ հեռաձայնեցի, նոյնիսկ խօստացայ ամբող-

շովին հոգալ տպագրութեան ծախսը, սակայն՝ անօգուտ:

Այժմ անցնենք Յակոբ Անասեանի երեք գրքերից իրաքանչիւրի ողիսականին:

Նախ՝ <<Հայկական Մատենագիտութեան>> 3-րդ հատորի մասին:

2003 թուականին որոշեցի Յակոբ Անասեանի ծընընդեան 100-ամեակի առթիւ տպագրել նրա գիտական մեծ արժեք ներկայացնող նամականին:

Յակոբ Անասեանի մեծաթիւ նամակներն ուշադրութեամբ ուսումնասիրելիս, աչք ընկաւ Երեւանի Մաշտոցի անուան իին ձեռագրերի (Մատենադարան) ինստիտուտի տնօրէն Սեն Արեւշատեանի 1987թ. Դեկտեմբերի 4-ին հայրիկիս ուղղուած նամակը: Այդ նամակը, վստահաբար, հայրիկս ստացած պիտի լիներ արդէն մահուան անկողնում: Նա մահացաւ 1988թ. Յունուարի 28-ին: Ահա մի հասուած այդ նամակից.

#### 4 Դեկտեմբերի 1987թ.

*Պրոֆ. Հակոբ Անասեանին,*

*Լու Անջելես, ԱՄՆ*

*Մեծարգու Պրոֆեսոր Հակոբ Անասեան*

*Հարգելի բարեկամ,*

*Ստացել ենք Ձեր արխիվը, որի համար հայտում ենք  
մեր խորին շնորհակալությունները: Մատենադարանի ախիվում Ձեր անվամբ ստեղծուել է առանձին*

**Քոնդ:** Ուրախ ենք, որ <<Հայկական Մատենագիտությունը>>, որը հայագիտութեան կոթողային գործերից է, կիսասոլ չի մնա: Գ հասորի (Յ-րդ հասորի) խմբագրի հարցը, հուտով եմ, մոտ ժամանակներս կլուծվի եւ զիրքը ընթացք կատանա:

**Պատմության ինստիտուտի տնօրինությունը,** որին ես տեղյակ պահեցի Ձեր արխիվի ստացման մասին, հանձն առավ տպագրության գործը: Գ հասորը լույս կընծայվի մեր երկու ինստիտուտների համագործակցությամբ:

Կարծում եմ՝ անիմաստ է զրի առնել Սեն Արեւատեանի՝ ինքն իրեն վարկաբեկող նամակի շարունակութիւնը: Այ քեզ բա՞ն. Մարդը երկու տարի առաջ է ստացել հայրիկիս արխիվը, որի մէջ նաև <<Հայկական Մատենագիտութեան>> երրորդ հատորը եւ ինձ ոչինչ չի ասում այդ մասին: Ես ել միամիտմիամիտ, բանից անտեղեակ, երկու տարի անց, իրեն եմ յանձնում <<Հայկական Մատենագիտութեան>> երրորդ հատորի երկրորդ օրինակը եւ միւս երկու զրերը:

Ինձ համար առ այսօր հանելուկ է մնացել, թէ Արեւատեանը ո՞րտեղից գիտէր, որ ես տեղեակ չեմ հայրիկիս կողմից իրեն ուղարկուած արխիվի մասին, որ այդպէս վարպետօրէն խաղաղով, առանց աչքը թարթելու, ուղիղ աչքերիս մէջ նայելով, նոր երեւյթի առջեւ կանգնել ձեւացրեց:

Ճիշդ է, որ ես չեմ կարող իմանալ, որ հայրիկս իր ախիւն ուղարկել է Հայաստան, որովհետեւ նոյն տարուայ Սեպտեմբերից մինչեւ Դեկտեմբերի 5-ը գտնուում էի Աւստրալիայում, ուր պայմանագրային կարգով աշխատուում էի Սիդնեյ՝ իմ կողմից հիմնադրուած ԿՈՄԻՏԱՍ երգչախմբի հետ:

Վերադարձիս հայրիկիս զտայ անկողնային վիճակում: Աւստրալիա մեկնելուց առաջ ես զիտէի, որ անխուսափելին կարող էր եւ զալ իմ բացակայութեան ժամանակ: Նա հիւանդ էր դեռ Երեւանում եղած ժամանակ, իսկ լու Անգելէսում տասը տարի ապրելն ու աշխատելը, եւ երեք ամիս էլ Երուսաղէմում՝ հին ձեռագրեր ուսումնասիրելը հրաշքի համազոր երեւոյթ էր: Տեղի բժիշկների ամէնօրեայ հոգատարութեան շնորհիւ, ինչպէս ժողովուրդն է ասում՝ այդ տարիները <<զտած տարիներ էին>> հայրիկիս համար:

Բնշեւէ. Բան չեղածի պէս, 2004 թուականի Մարտին մեկնում եմ Երեւան՝ Յակոբ Անասեանի ծննդեան 100-ամեակը նշելու մտադրութեամբ: Մինչ այդ, պայմանաւորուած լինելով Ակադեմիայի փոխնախագահ, Ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարեանի հետ: Երեւան հասնելուս յաջորդ օրն իսկ ակադեմիկոսի հետ միասին գնում ենք Մատենադարան՝ հանդիպելու Սեն Արեւածառեանի հետ:

Ես նախապէս տեղեակ եմ պահել Բարխուդարեանին՝ <<Հայկական Մատենագիտութեան>> հետ կա-

պուած պատմութեան հետ: Որոշել եմ որեւէ ձեւով չանդրադառնալ 15 տարուայ վաղեմութիւն ունեցող դեպքերին, որպէսզի որեւէ ձեւով խանգարած չլինեմ հայրիկիս յոբելեանի ձոռնարկին:

- Ծանօթացէք Պարոն Արեւատեան, Յակոբ Անասեանի որդին է, Հենրիկ Անասեան,- բաւական խիստ տօնով ինձ է ներկայացնում Բարիտոնարեանը, - միայն երեկ է ժամանել Ամերիկայից:

Օ~..., ի՞նչ էք ասում..., շատ ուրախ եմ..., Պարոն Անասեան, իսկ դուք զիտէ՞ք, որ ձեր հայրիկը իր կեանքի 30 տարին այս պատերի ներսում է անցկացրել..., հաւատացէք՝ նրա մէկնելուց անցել է աւելի քան 25 տարի, բայց մինչեւ օրս կ դգում ենք նրա բացակայութիւնը:

- Մենք այսօր եկել ենք՝ Ձեր մօսոց վերցնելու Յակոբ Անասեանի <<Հայկական Մատենագիտութեան>> երրորդ հատորը, - ակնյատօրէն խօսակցութիւնը կարծ կապելու դիտաւորութեամբ ասաց ակադեմիկոսը եւ շարունակեց, - Յունիսին նշելու ենք Անասեանի ծննդեան 100-ամեակը, ուստի, ժամանակը շատ կարծ է եւ պէտք է հասցնել <<Հայկական Մատենագիտութեան>> 3-րդ հատորը տպագրել:

- Աքանչելի~..., հիմա, հիմա կը բերեմ, - այս ասելուց յետոյ, զիտնականը հեռացաւ սենեակից եւ քիչ անց վերադարձաւ լաւագոյնս փաթաթուած փաթեթը ձեռքին:

- Խնդրեմ Պարոն Բարիտողարեան, համեցեք,- ինչպէս տեսնում եք լաւ պահպանուած է,- այս ասելն ու երկու քայլ ետ գնալը մէկ եղաւ:

Ինձ համար պարզ էր ամէն ինչ: Դա իմ՝ 1989-ին յանձնած փաթեթը չէր, Յակոբ Անասեանի արխիտի փաթեթն էր՝ ուղարկուած 1987-ի աշնանը՝ իր մահից առաջ:

- Իսկ հայրիկիս միւս երկու զրքերը ո՞րտեղ են, անփափկանկատ միջամտութեամբ չթողեցի, որ Ակադեմիկոսը ինչ որ քան ասի:

- Ո՞ր զրքերը Հենրիկ,- արդէն մտերմիկ շեշտ դնելով խօսքի մէջ, կեղծ ժպիտը դկմքին ասաց Պարոն Սենը, յետոյ, ձեռքը տանելով քունքին՝ իբր յիշել ձեւացնելով, մի քանի վայրկեան մտածելուց յետոյ ասաց,

- Հա՞..., յիշեցի..., խօսքը <<Արմատ Հաւատոյ>>-ի եւ <<Սայաթ Նովա>> մենագրութեան մասին է, չէ՞...

- Այո՛, այո՛, հենց դրանց մասին, Պարոն Արեւատեան:

- Ասեմ սիրելիս, ինչպէս դուք ասել էիք...

- Այո՛..., ասել եմ, Ճիշդ տասնըհինգ տարի առաջ, չթողնելով, որ միտքը շարունակի,- ընդհատեցի պարոնի խօսքը:

- Դէ՞..., դէ զիտես եի Հենրիկ թէ ինչ օրեր ենք անցկացրել..., ասեմ, հիմա ասեմ. <<Արմատ Հաւատոյ>>-ն, ինչպէս դուք պատուիրել էիք՝ յանձնել եմ Վեհափառ Հայրապետին, իսկ <<Սայաթ Նովա>> մե-

նագրութիւնը՝..., չէ, չեմ չեմ յիշում թէ որտեղ եմ դրել, այս մի քանի օրը կը գտնեմ եւ ձեզ տեղեակ կը պահեմ Պարոն Բարխուդարեանի միջոցով:

Այս ամբողջ երկխօսութեան ընթացքին Ակադեմիկոսը լուր հետեւում էր մեր խօսակցութեանը:

- Հիմա անմիջապէս գնում ենք Համալսարան, Աստուածաբանութեան ֆակուլտետի դեկան՝ Դոկտոր, պրոֆեսոր Շահէ Արքէպիսկոպոս Աճեմեանի մօտ: Միայն նա կարող է երկու-երեք ամսում յաջողացնել հայրիկիդ Մատենագիտութեան երրորդ հատորի տպագրութիւնը, որովհետեւ ձեռքի տակ ունի համակարգչի վրայ աշխատող մօտ 8-10 երիտասարդ կանայք,- Մատենադարանից դեպի Համալսարան քայլելու ճանապարհին ասաց Ակադեմիկոսը:

- Իսկ վճարման հարցը ո՞նց ենք լուծելու,- վախվըխելով հարցրի ես,- ի վերջոյ մեծածաւալ գիրք է:

- Այնպէս կանեմ, որ ինքը հովանաւորի, դու ոքամասին մի մտածի:

- Իսկ ինչո՞ւ Ակադեմիայի հրատարակութեամբ չենք հրատարակում Պարոն Բարխուդարեան:

- Եթէ Ակադեմիայի հրատարակութեամբ տպագրենք՝ շատ երկար կը տեսի, երկար-բարակ քաշքշուկ կառաջանայ, մանաւանդ որ շատ ծախսալից է ու հարցը կը բարձրանայ մինչեւ վերեւները..., գործ չունես:

Մատենագիտութեան հարցը <<լուծուած>> համարելով, անցայ՝ ոչ պակաս ինձ յուզող հարցին.

- Իսկ Դուք, Պարոն Բարխուդարեան որեւէ լուր չունէ՞ք <<Արմատ Հաւատոյ>>-ի մասին, չէ՞ որ Դուք Էջմիածնի Գերագոյն Հոգեւոր Խորհրդի անդամ եք:

- Դէ՞..., դէ ի՞նչ ասեմ Հենրիկ, ես միշտ չէ, որ ներկայ եմ լինում Հոգեւոր Խորհրդի նիստերին, բնաւ տեղեկութիւն չունեմ բարեկամս: Հիմա մոռացիր այդ մասին: Հիմա կարեւորը՝ Մատենազիստութիւնն է եւ մէկ կ` քո նախաձեռնած հայրիկիդ Նամականու ընտրանին..., եկ, եկ, մի քիչ արագ քայլենք, ընդմիջման ժամը մօտենում է, մէկ կ տեսար Սրբազնը մի տեղ չըուեց:

Դժուար չէր հասկանալ, որ Ակադեմիկոսի համար այնքան կ հաճելի նիւթ չէր <<Արմատ Հաւատոյ>>-ի մասին խօսելը:

Շահէ Արքեպիսկոպոսը ցնծութեամբ ընդունեց մեզ, մանաւանդ, երբ իմացաւ որ ես Յակոբ Անասեանի որդին եմ: Սրբազնը տեսնելով իմ թեւատակի ծանրոցը՝ անհամբերութեամբ հարցրեց.

- Աղ ի՞նչ ծանրոց է զաւակն, հայրիկիդ գործերէն չըլլա՞յ,- Տո՞ւր, տո՞ւր տղաս, մէջ մը նայիմ, թերթատեմ,- առանց իմ պատասխանին սպասելու՝ համարեայ ձեռքից խլեց սրբազնը...

- Հենրիկ ջան, դու մի 10-15 րոպէ զբաղուիր դրսում յետոյ ներս կգաս, ես եւ Սրբազնը մի փոքր զրուցենք առանձինն...,-լա՞ւ,- ասաց Բարխուդարեանը:

Ես լոելեայն, կամացուկ դուրը բացեցի եւ ելայ միջանցք: Աղմուկ-աղաղակ, իրարանցում, իսկապէս

Է՛լ՝ ընդմիջման պահն էր, բոլոր լսարաններից ուսանողները մժեղի նման թափառում էին միջանցք: Լաւագոյն միջոցը դուրս եկնելն էր ու մի սիզարետ ծխելը:

- Եկո՞ւր, եկուր տղաս, ճիշդ ժամանակին: Ի՞նչպէս կրնամ ես հայրիկիդ, իմ լաւագոյն բարեկամներէս մէկուն այս կոթողային գործին քովէն անտարբեր անցնիլ..., հայրիկդ՝ զրեթէ երեք ամիս մեր հիւրը եղած է Երուսաղէմի մէջ..., ի՞նչ փառայեղ մարդ էր ան, անոր այդ պզսիկ մարմնին մէջ որքա՞ն գիտական պաշար կար Աստուած իմ...

- Շնորհակալ եմ Սրբազն հայր, շնորհակալ՝ Զերազնիւ գնահատականներուն համար:

- Կեցի՞ր, կեցիր բարեկամս, այդ մենք պիտի շնորհակալ ըլլանք քեզի, որ, որպէս զաւակը մեծանուն գիտնականին, կը ջանաս ոչ միայն վառ պահել անոր յիշատակը, այլեւ անոր փառայեղ գիտական աշխատութիւններով հարստացնել մեր մշակոյթի գանձարանը:

- Հիմա ինծի մտիկ ըրէ, բարեկամս: Ես յանձն կառնեմ իմ ծախքովս տպագրութեան պատրաստել հայրիկիդ Մատենագիտութեան երրորդ հատորը: Քուկին ընելիքդ հարմար գինով տպարան գտնալն է:

- Բայց Սրբազն հայր, դուք պիտի կարենա՞ք երկու, երկուքուկէս ամսուան ընթացքին շարել, էջադրել գիրքը, հսկայական գործ է,- հարցրի ես:

- Դուն այդ մասին եռգ մի ընէր, ես ութը-տաս աշխատող ունիմ քոմիիթըրի վրայ աշխատող, այ-

սօր իսկ կը կեցնեմ իրենց քով եղած գործերը եւ՝  
առջեւնին կը դնեմ հայրիկիդ զիրքը..., եղա՞ւ տղաս,  
հիմա հանգի՞ստ ես...

- Ես խօսք չունիմ ըսելիք Սրբազան Հայր, բացի  
<<երախտապարտ եմ>> ըսել: Արդէն նախապէս  
Պարոն Բարիութարեանը լաւագոյնս գնահատելով  
Ձեր ծառայութիւնը Հայ Մշակոյթին եւ Հայ Եկեղեց-  
ւոյ, վստահ եր, որ դուք յանձն կառնեք տպագրել 25  
տարիէ ի վեր Մատենադարանին մեջ <<քնած>> Յա-  
կոբ Անասեանի մեծարծէք աշխատութիւնը:  
Սրբազան Հայր դուք գաղափար ունի՞ք արդեօք  
հայրիկիս <<Արմատ հաւատոյ>> գործի մասին:

Այս հարցմանս վրայ երկու զիտնականները նկա-  
տելի հայեացըներ փոխանակեցին:

Մէկ վայրկեան լոռութիւն: Զգում եմ, որ Սրբազանը  
պատասխան չունի տալու, մէկ նայում է Ակադեմի-  
կոսին, մէկ՝ ինձ, երկու-երեք վայրկեան յետոյ.

- Ինչո՞ւ Արեւշատեանին չես հարցներ տղաս, չէ՞ որ  
անոր յանձնած ես....,- փոքր ինչ դժկամութեամբ  
ասաց Սրբազանը եւ հասկացնել սուեց՝ չխոսել այդ  
նիւթի մասին:

- Հարցուցի, ըսաւ, որ պատուերիս համաձայն փո-  
խանցած է Վազգէն Վեհափառին:

- Ըսել է Գարեգին Վեհափառին պէտք է դիմես բա-  
րեկամս....:

- Լաւ, լա՞ւ Սրբազան, կը ներեք, իսկապէս անոր  
քով պիտի երթալ, հաւանաբար մահէն առաջ Վազ-

գին Վեհափառը Էջմիածնոյ մատենադարանը պահ տուած պիտի ըլլայ <<Արմատ հաւատո>>-ն:

- Ուրեմն անցնինք զործի բարեկամներս, այժմ ձգեցիք, որ ես ալ դադար առնեմ լսարան մտնելէ առաջ:

- Հենրիկ, կարծում եմ ամէն ինչ պարզ է քեզ համար, զիտես անելիքդ,- ասաց Բարխուղարեանը արդէն ոյրտում, մարդաշատ մայթին:

Այո՞, զիտէի անելիքս: Առաջին հերթին՝ հայրիկիս <<Արմատ հաւատոյ>> աշխատութեան անյայտանալու գաղտնիքը բացելն էր: Մատենադարանը տեղեակ չէր այդ զործից, նոյնը՝ Ակադեմիայի Պատմութեան ինստիտուտը: Մնում էր գնալ Էջմիածին՝ Գարեգին Երկրորդ Կաթողիկոսի մօս:

- Հենրիկ, մաեստրօ, Պարոն Անասեան. այդ ե՞րբ ես եկել: Ուրախ եմ քեզ տեսնել Վեհարանում, յիշո՞ւմ ես մեր երիտասարդ տարիները, դու կը մեզ դաս էիր տալիս:

- Իհա՞րկէ յիշում եմ Վեհափառ Տէր, Զեր եղբորն ել եմ յիշում: Ասեմ որ, Վեհափառ Տէր, երջանկայիշատակ Վազգէն Առաջինի գահակալութեան օրոք էր, որ հոգեւորականների մեծաթիւ քանակութիւն՝ զրեթէ ամբողջացրեց Հայ Եկեղեցուն ծառայող անշափկարեւոր Հոգեւոր Հայրերի քանակը:

- Ճիշտ ես բարեկամս, Ճիշդ ես...

= Ես չհասցրի պատասխանել, նոյն վայրկեանին հոգեւոր արեղայ-քարտուղարը ներս մտաւ եւ յայտնեց,

որ պոլսահայերի խումբը դրսում սպասում է ընդունելութեան:

Ես պատրաստում էի հրաժեշտ տալ Վեհափառին՝ վերջինս նշան արեց նստած մնալ եւ դառնալով քարտուղարին ասաց.

- Մե երկու սուրճ բեր, իսկ դրանց կ ասա թող ներս գան:

Պոլսահայերի աւելի քան քսան հոգուց բաղկացած իմբի անդամները մեկիկ-մեկիկ մօտեցան Վեհափառի ձեռքը համբուրելու եւ օրինութիւնն ստանալու։ Շատերն էլ՝ ինձ հետ ձեռնուելու, որոնք նախապես ինձ ծանօթ էին Պոլսից։

- Պարոն Անասեանը կը ճանչնա՞ք, մեր մաեստրոն։  
- Այո՞, այո՞, կը ճանչնանք,- միաբերան ասացին շատեր,- իր փառաւոր համերգներուն ներկայ եղած ենք Պոլսոյ մեջ։

- Իմ ուսուցիչս եղած է,- ասաց Վեհափառը։  
- Ի՞նչ կըսեք Վեհափառ Տեր,- ձղձղան ձայնով մեջ ընկաւ մի կին։

- Եթէ քան մըն ալ սորված եմ, իրմէ՝ սորված եմ,- խնդումերես դեմքով ասաց Վեհափառը՝ անզուսայ խնդուքի մթնոլորտ ստեղծելով իր ընդունարանում։

Պոլսահայերի մեկնելուց յետոյ դիմեցի Կաթողիկոսին.

- Վեհափառ Տեր, Զեր օրնութիւնն ստացայ, Աստուած Զեր ձայնը կը լսի, վատահ եմ։ Ցանկանում եմ

ինձ համար մի շատ կարեւոր հարցի շուրջ զրուցել Ձեզ հետ, կարելի՞ է...

- Այդ ինչ հարցում է, Անասեան, իհա՞րկէ կարող ես:

- Դուք տեղեա՞կ եք Վարդան Այգեկցու՝ հայրիկիս՝ Յակոբ Անասեանի գրած աշխատութեան մասին:

- Ինչ որ նման մի բան յիշում եմ, իսկ ի՞նչ կայ, ի՞նչ է եղել:

- Այն կայ, որ Վեհափառ Տէր, երկու ամսից Ակադեմիայի նախագահութեան հովանաւորութեամբ, մեծ շուքով նշուելու է Յակոբ Անասեանի ծննդեան 100-ամեակը:

- Ի՞նչ հրաշալի բան, վաղո՞ւց սպասուած երեւոյթ, - ասաց Վեհափառը երկու ձեռքերը օդ բարձրացնելով:

- Թոյլ տուեք շարունակել Վեհափառ: Յոբեկանի օրերին, գիտական աշխարհը կը հարստանայ Յակոբ Անասեանի կոթողային <<Հայկական Մատենագիտութեան>> երրորդ հատորով եւ՝ գիտական մեծ արժեք ներկայացնող նրա <<Նամականիով>>, որը ես եմ կազմել:

- Վստահ եմ՝ այս միջոցառման հեղինակը դու ես, այդպէս է չէ՞...

- Աւելի ճիշդ կը լինի ասել՝ առաջարկողը, թե ու թիկունք կանգնողը խոշոր գիտնական եւ Վլադիմիր Բարխուդարեանն ազնուագոյն մարդ՝ Ակադեմիայի փոխնախագահ է, ժամանակին հայրիկիս ամենամտերիմ բարեկամներից մէկը:

- Բրատօ՞, բրատօ, ի՞նչպէս եք հասցնելու, կարծեմ ասացիր երկու ամիս յետոյ է յոբելեանը:

- Կը հասցնենք Վեհափառ Տէր, վստահ եղեք: Արդէն Համալսարանի Աստուածաբանութեան ֆակուլտետի դեկան Շահէ Արքեպիսկոպոսի մի քանի ժրազան տիկնայք շարում են Մատենագիտութիւնը, իսկ Նամականու ընտրանին է՝ շարում է Պարոն Բարիտողարեանի քարտուղարուիին: Տպարանների հարցն էլ է լուծուած:

Յիշեցնեմ որ, Յակոբ Անասեանի ծննդեան 100-ամեակի շրեղ տօնակատարութիւնը տեղի ունեցաւ 2004 թուականի Յունիսի 26-ին՝ Առնօ Բարաջանեան համերգասրահում, խուներամ հասարակութեան ներկայութեամբ: Անուանի գիտնականների ելոյթների միջից մեծ տպաւորութիւն թողեց յատկապէս Լու Անջելէսից հրաւիրուած, ճանաչուած հայագէտ ամերիկացի հայագէտ Պիեր Խուրիի ելոյթը, որը մի քանի տարի շարունակ շփուել էր Յակոբ Անասեանի հետ Լու Անջելէսում: Գեղարուեստական մասը Ճոխացրին երգչուիի Շուշան Պետրոսեանը, երգիչ Արսէն Գրիգորեանը և Երեւան երգչախումբը՝ շնորհալի խմբավար, վաղամեռիկ Մարիկա Եղիգարեանի դեկավարութեամբ: Այդ օրը գիտական աշխարհն իր սեղանին ունեցաւ Յակոբ Անասեանի թէ Հայակական մատենագիտութեան երրորդ հասորը, և թէ Նամականու Ընտրանին:

- Ի սկապես հերոսական գործ է ձեր կատարածը, ողջունում եմ,- Ասաց Վեհափառ Հայրապետը:

- Հիմա մնում է գտնել <<Արմատ հաւատոյ>>-ն, Վեհափառ: Խնդրանքս է՝ Ձեր մատենադարան-գրադարանի՝ Յակոբ Անասեանի արխիտում փնտռել տալ այդ աշխատութիւնը, որը ստեղծուել է Վազգեն Կաթողիկոսի պատուերով:

- Սիրո՞վ Պարոն Անասեան, այժմ իսկ ես ստուգել կը տամ:

Վեհափառը կանչել տուեց մի երիտասարդ քահանայի եւ յանձնարարեց փնտռել <<Արմատ հաւատոյ>>-ն Անասեանի արխիտում: Կես ժամ անց քահանան վերադարձաւ ձեռնունայն:

- Հոգ մի արայ Հենրիկ, գուցէ մի օր կը պարզուի ամէն ինչ...,- ակնյայտ փութեկոտութեամբ, նիւթը փակելու դիտաւորութեամբ՝ ասաց Վեհափառը:

<<Այստեղ մի թաքնուած զաղտնիք կայ>>,- մտածում եմ ես ու խոնարհաբար հրաժեշտ տալով Կաթողիկոսին՝ զլխահակ դուրս եմ զալիս Վեհարանից:

- Այո՛, այո՛..., զաղտնիք, որը չեմ կարողանում բացայայտել: Զենները մէկ արած՝ իբր ոչ մէկը զգիտի Յակոբ Անասեանի <<Արմատ հաւատոյ>> բացառիկ մի աշխատութեան որտեղ լինելը: Հնարաւո՞ր բան է.- ո՞չ, հնարաւոր չէ, թո՞ւղթ էր ինչ է՝, կամ թղթի մի պատառի՞կ, որ քամու հետ կորչեր անյայտութեան մէջ,- ԳԻ՛ՌՔ էր, զի՞րք՝ մեծանուն զիտնականի՝

գրեթէ երկու տասնամեակի տառապալից աշխատանքի որպէս արդիւնք...

Իսկ ԳԻՐՔ կոչուածը, այդ՝ արտաքուստ անշունչ, անհոգի առարկան խօսել զիտի, բղաւել, ճշալ՝ իր հանդեպ ցոյց տրուած ամէն մի անարդարութեան նկատմամբ:

Եւ նա խօսե՞ց, բողոքե՞ց՝ աւա՞ն, բաւական ուշացումով, այդ օրերից տաս տարի յետոյ՝ 2014 թուականին՝ արդէն Լու Անջելէսում:

Այդ մասին քիչ անց: Անցնենք միևն հարցերին:

Աներեւակայելի խղճամտութեամբ Շահե Արքպիսկոպոս Աճեմեանը յարգեց իր խօստումը: Գրականագիտ Դոկտոր Սուրեն Դանիելեանի խորհրդով, Կալիֆորնիայի Համալսարանի Դոկտոր Պրոֆեսոր Յակոբ Անասեանի <<Հայկական Մատենագիտութեան>> երրորդ հատորը տպագրել տուի Երեւանի <<Զանգակ-97>> տպարանում:

Նոյն տպարանում տպագրուեց նաև իմ գրական գործերի՝ <<Այս եմ ես>> շարքի չորրորդ հատորը, ինչպէս նաև իմ երաժշտական յօրինումների <<Հայրենիք եւ սէր>> մեներգերի ժողովածուն:

Իմ կազմած՝ հայրիկիս նամականու <<Ընտրանի>> 450 էջանց աշխատութիւնը Ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարեանի անմիջական միջնորդութեամբ լոյս տեսաւ Գիտութիւնների Ակադեմիայի <<Գիտութիւն>> հրատարակչութեան կողմից:

Երկու ամսում չոքս զիրք հրատարակել՝ զրեթէ անհաւատալի է: Այստեղ են ասել՝ <<Որտեղ փող՝ այնտեղ պարարտ հող>>, որի վրայ կարելի է արարել, սնել, աճեցնել ամէն ինչ:

Այժմ մնում էր լուծել Յակոբ Անասեանի լիուլի պատրաստ <<Սայաթ Նովա>> ծաւալուն աշխատութեան հարցը: Մի քանի օր Մատենադարան գնալգալուց յետոյ, Վլադիմիր Բարիուդարեանին յաջողուեց Սեն Արեւածառեանից ստանալ հիմնարկութեան դարակներում անուշադրութեան մատնուած հայրիկիս աշխատութիւնը:

Զանգակ-97 հրատարակչատան տնօրէն Պարոն Սոկրատը յանձն առաւ տպագրել <<Սայաթ Նովա >> աշխատութիւնը: Աշխատութիւնը իրեն յանձնելուց մի քանի օր անց Սոկրատը հեռաձայնեց եւ ասաց.

- Հենրիկ, հայրիկիդ <<Սայաթ Նովա >> աշխատութիւնը, կը ներես, հնարաւոր չէ երկու ամսում տպագրել, ոչ կը վեց ամսում:

- Ինչպէ՞ս, Պարոն Սոկրատ, չէ՞ որ դուք խօստացաք:

- Այո՛, խօստացայ, Ճիշդ է..., դու զիրքը նայե՞լ ես:  
- Ո՛չ, չեմ նայել, այդպէս՝ խնամքով փաթաթուած վիճակում տուել եմ քեզ:

- Դէ, ուրեմն լսիր, սա այսօրուայ-վաղուայ գործ չէ: Հայրիկիդ գրքում կան տասնեակներով օտար լեզուներով գրուած բազմաթիւ ծանօթագրութիւններ,

շատ անգամ նոյնիսկ կես էջի սահմաններում, որոնք տպագրելու համար՝ տառատեսակներ չունենք:

- Էս օրերի՞ն, ի՞նչ դժուար է տառատեսակներ հայթայթելը: Համակարգիչը բաց՝ ցանկացած լեզուի տառ կը գտնես:

- Բա ո՞վ է խմբագրելու, ասենք ուղբեկերէն, կամ էստոներէն: Վրացերէնի եւ Աղրբեջաններէնի հարցը մի կերպ կը լուծենք՝ եթէ մասնագէտներ գտնենք: Այնպէս որ, զիրքը թող մնայ ինձ մօտ, սա ժամանակի կարօւ հարց է: Դու քո մնացեալ գործերով զբաղուիր:

Մարդը ճիշդ էր ասում. հայրիկիս <<Սայաթ Նովա>> աշխատութեան տպագրումը երկար ժամանակի կարօւ ինդիր էր, որովհետեւ, ինչպէս ինչպէս Յակոբ Անասեանն է գրում՝ ժամանակին ՀԲԸ Միութեան Ալեք Մանուկեան Հիմնադրամի Տնօրէն Դոկտոր, պրոֆեսոր Երուանդ Ազատեանին (8 Փետրար, 1982, Լու Անջելէս), <<Իմ աշխատութիւնն ընդգրրկում. է Սայաթ Նովային վերաբերող նիւթերը բոլոր լեզուներով, նոյնիսկ՝ Սովետական Միութեան բազմաթիւ մանր ժողովուրդների լեզուներով>>:

Իրականում, Հայրիկս լինելով աներեւակայելի, երբեմն էլ չափազանց պահանջկոտ իր նկատմամբ, ինչպէս ժողովուրդը կասէր՝ ինքն է <<Քար զցել>> իր գործի զիսին: Ահա թէ ինչ է գրում նա հենց նոյն՝ Երուանդ Ազատեանին ուղղուած նամակում.

1963 թ. Հոկտ. 5-ին Ակադեմիայի Գրականութեան ինստիտուտը որոշեց տպագրել այն, որպէս յոբելեանական հրատարակութիւն (Սայաթ Նովայի ծննդեան 250-ամեակի առթիւ,- ՀԵՆ. Ա.), բայց ես ոչ մի կերպ չհամաձայնեցի, այն առարկութեամբ, թէ յոբելեանական նիւթերը դեռ շարունակուելու են լոյս տեսնել ամբողջ տարուայ ընթացքում: Ինստիտուտի փոխտնօրէն Բաբկէն Չուքասզեանը պնդում էր, որ եղածն էլ բաւարար է լիուլի, բայց ես մնացի անդրդուելի: ԼԻՆԵԼՈՎ ԿԵԱՆՔՈՒՄ ԱՆԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՐԴ եւ առաջնորդուելով ԶՈՒՏ ԳԻՏԱԿԱՆ ՄԿՅՋԲՈՒՆՔՆԵՐՈՎ, ԵՍ ԻՆՔՍ ԽԱՆԳԱՐԵՑԻ այդ գործը, մոռանալով, որ <<Լաւագոյնը՝ լաւի թշնամին է>>:

Եւ այսպէս, իր հոգու ծայրայեղ մաքրութեան եւ հայ գիտութեանը անթերի, բարձրարժէք գիտական մեծարժէք աշխատանքներ նուիրելու մարմաջով տարուած, Յակոբ Անասեանը զրկուեց երկու գիտական աշխատանքները տպագրուած տեսնելու հաճոյքից, զրկելով նաեւ հայ մշակոյթի, հայ գիտութեան զանարանը հարստացնելու առաքելութիւնից:

Թէ չէ, ի՞նչ էր եղել որ. թող մի քանի տուեալներ էլ պակաս լինէին <<Սայաթ Նովա>> աշխատութեան մէջ: Եթէ նա այդքան պահանջկոտ եւ բծախնդիր չլինէր՝ մենք այսօր մեր սեղանին կունենայինք այդ գործը:

Ինչպէս վկայում են նրա մտերիմ գիտնականները, Անասեանը Սայաթ Նովայի կենսագրութեան եւ գոր-

ծունելութեան մէջ այնպիսի նոր յայտնագործութիւններ էր արել, որոնք ժխտում են այլ գրող-զիտնականների՝ Սայաթ Նովային վերաբերող աշխատութիւններում տեղ գտած բազմաթիւ դրոյթներ ու տուեալներ:

Կա՞յ, այսօր կա՞յ Յակոբ Անասեանի <<Սայաթ Նովա>> աշխատութիւնը, որը 13 տարի շարունակ <<չեն գտնում>> Սոկրատի տպարանի պահեստում:

Ճիշդ էր ասում Գաբրիել Սունդուկեանը՝ <<Գելի վիզը ընդուր ա հաստ, որովհետեւ իր գործերը իրա ձեռով ա անում>>: Մնում է, որ ինքս գնամ Սոկրատի տպարան եւ, եթէ պէտք լինի՝ օրեր, շաբաթներ շարունակ փնտում, գտնեմ՝ ինչպէս Պարոն Սոկրատն է վկայում՝ տարիներ շարունակ իր պահեստում հանգչող հարիւրաւոր անտիպ գրքերի մէջ, թէ չէ, ի՞նչ իմանաս, մի օր ել ինչ որ յայտնի, կամ անյայտ հեղինակի անունով հրապարակ կ'ելնի հայրիկիս <<Սայաթ Նովա>> աշխատութիւնը:

Հիմա զանք Յակոբ Անասեանի <<Արմատ հաւատոյ>> աշխատութեան պատմութեան վերջաբանին: 2013 թ. գարնան օրերից մի օր ինձ է հեռաձայնում անցեալ դարի 90-ականներից Լու Անջելէսում հաստատուած, հայրիկիս ընկերներից՝ Սուրեն Քոլանձեանը, որը 1989 թ. Յակոբ Անասեանի մահից յետոյ կարգի էր բերել նրա արխիւր եւ ամբողջացրել վերոնշեալ երեք գրքերը (<<Հայկական Մատենագի-

տութիւն»> երրորդ հատոր, <<Արմատ Հաւատոյ >> եւ <<Սայաթ Նովա>>)-ն:

- Հենրիկ,- ասաց նա,- ես մի վատ լուր ունեմ քեզ յայտնելու:

- Ի՞նչ կայ, ի՞նչ է եղել, ինչ որ վատ եմ լսում, Զեր ձայնն էլ խոպոտ է, ի՞նչ վատ լուր:

- Ասեմ, ասեմ..., ես՝ իսկապէս ինձ շատ վատ եմ զգում: Զգիտեմ ինչքան ժամանակ է ինձ մնացել ապրելու, բայց չեմ ուզում հայրիկիդ հետ կապուած մի գաղտնիք թաքցնել քեզնից:

- Դու՝ որ 2004 թ. գնացիր Երեւան եւ փառաւորապէս նշել տուիր հայրիկիդ յոբելեանը, ես կարծում էի թէ Երեւանում ասած կը լինեն այն՝ ինչ հիմա եմ ասելու: Բայց դու վերադարձիդ ինձ ոչինչ չասացիր: Ես հասկացայ, որ քեզնից թաքցրել են ամէն ինչ:

- Արդէն լուրջ անհանգստանում եմ Պարոն Քոլանձեան, շուտ արեք:

- Յակոր Անասեանի <<Արմատ Հաւատոյ>>-ն հրատարակուած է դեռեւս 1998 թուականին՝ ուրիշ հեղինակների անունով: Տաս տարուց աւելի է, որ այն ինձ մօս է: Ես քեզ չեի ասում, որ հոգիդ չխոռովեմ: Հայրիկիդ զիրքը պարզապէս գողացել են՝ միայն թէ զրքի տիտղոսաթերթի վրայ տպել են հետեւեալ երկտողը..., կուզե՞ս կարդամ:

- Իհա՛րկէ Պարոն Քոլանձեան:

- Կարդում եմ, լսի՛ ր. <<ՆՈՒԻՐՈՒՄ Է ԼՈՒՍԱՀՈԳԻ ՎԱԶԳԻՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԵՒ ՀԱՅԱԳԻՏՈՒ-

**ԹԵԱՆ ՄԵԾ ԵՐԱԽՏԱԻՈՐ ՑԱԿՈԲ ԱՆԱՍԵԱՆԻ  
ԽՆԿԵԼԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ>>:**

- Լաւ, հասկացայ Պարոն Սուրէն,- չիմանալով ինչ  
ասել,- ասացի ես: Հեռալարի երկու ծայրերում՝  
միանգամայն հասկանալի լուրջին է: Խօսողն ինքն է  
դարձեալ:

- Հենրիկ, հասկանում եմ քեզ, մտնում եմ քո վիճա-  
կի մեջ: Ես քեզ կուղարկեմ այդ գիրը..., ես չգիտեմ,  
թէ վաղը միւս օր ինչ կարող է պատահել ինձ հետ...

- Ո՛չ, ոչ, ինքս կը գամ կը վերցնեմ, մի ուղարկեք:

- Չէ՞ Հենրիկ, ես փոստով կուղարկեմ: Իմ բնակա-  
րանը կնոցս մահից յետոյ բանի նման չէ..., մի գայ,  
մի արի:

Այդժամ ես հասկացայ, թէ ինչո՞ւ էին Հայաստանի  
մեր գիտնականներն ու Վեհափառ խուսափում  
<<Արմատ Հաւատոյ>>-ի մասին խուել: Նրանք իմ  
հարցումներից կոահել էին, որ ես ոչինչ չգիտեմ եւ  
նախընտրել էին այդ մասին լոել:

Մի քանի օր անց՝ անհուն մտաւրական, հայրի-  
կիս նման բարի ու ազնիւ պատմաբան Սուրէն  
Քոլանձեանը հրաժեշտ տուեց կեանքին: Դրանից մի  
քանի օր առաջ ես փոստով ստացայ Վարդան Այգեկ-  
ցու <<Գիրք հաստատութեան եւ Արմատ Հաւատոյ>>  
գիրը:

Գիրը հրապարակ է ելել Երեւանի Պետական  
Համալսարանի հրատարակութեամբ՝ անկասկած  
ամենազոր Շահէ Արքեպիսկոպոս Աճեմեանի հոգա-

ծութեան ներոյ: Վստահաբար, Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի յանձնարարութեամբ: Մինչեւ այստեղ որեւէ արտառոց երեւոյթ չկայ, մանաւանդ, որ, ինպէս վերեւում եմ նշել, տեղի տալով՝ գուցէ թէ իրաւական ճնշումներին, հայրիկս ինքնակամ հրաժարուել է <<Արմատ Հաւատոյ>>-ի հեղինակային իրաւունքից:

Ես մի քանի շաբաթ ուսումնասիրեցի այդ գիրքը (միայն 70 էջանոց ներածութիւն, մնացեալ 370 էջը Վարդան Այգեկցու բնագիրն է, բնական է՝ գրաբար լեզուով):

Սովորական, հասարակ ընթերցողի համար անհասու մի գործ է սա, որի իրաքանչիւր զլուխ պէտք էր լուսաբանուեր ներկայ աշխարհաբարով: Ներածութեան հեղինակ Յակոբ Քէոսէեանը <<Արմատ Հաւատոյ>>-ի մէջ ներառնուած հեղինակներից մի մասին է անդրադարձել միայն, սակայն չի խուսափում զրել. <<3. Անասեանի հաշուարկով <<Արմատ Հաւատոյ>>-ում վկայակոչուած հեղինակների ընդհանուր թիւր մօտաւորապէս հարիւր է...>>:

Ահա թէ որտեղ է թաղուած <<շան զլուխը>>:  
Յակոբ Անասեանը, որպէս զիտութեանը անկաշառ ու ծայրայեղ բծախնդիր ազնիւ զիտնական, փորձել է լիարժեք աշխատութիւն երեւան հանել եւ ոչ թէ <<վկայակոչուած հեղինակներից>> ոմանց արժեք տալ, իսկ միւսներին անտեսել:

Ահա իր այդ բացառիկ մաքուր բնաւորութեան ու զուլալ հոգու պատճառվ Յակոբ Անասեանը ինքնակամ, իր հեղինակային իրաւունքը զիջում է մեկ ուրիշի:

Ահա թէ ինչ է զրում <<Արմատ Հաւատոյ>>-ի առաջարանում նոյն ինքը՝ Յակոբ Քեոսէեանը հայրիկիս մասին.

*Հայագիտութեան բազմավաստակ երախտաւոր Յակոբ Անասեանին է ամենայն իրաւամբ պատկանում ԺԲ-ԺԴ (12-13) դարերի երեւելի մատենագիր Վարդան Այգեկցու <<Արմատ Հաւատոյ>> դաւանաբանական աշխատութեան յայտնաբերման, հեղինակային պատկանելութեան ճշուման եւ գնահատման պատիւր... Երջանկայիշատակ զիտնականը այդ ուղղութեամբ բանասիրական հետախուզումներ է կատարել տակաւին 1950-ական թուականներից եւ արդիւնքներին անդրադարձել իր մեծարժեք <<Հայկական մատենագիտութիւն>> աշխատութեան շատ էջերում: Վարդան Այգեկցու եւ նրա այդ երկասիրութեան մասին առաջին անգամ խոր եւ հիմնաւոր խօսք է աւում հայագէտի <<Վարդան Այգեկցին իր նորայայտ երկերի լոկսի տակ>> աշխատութեան մէջ:*

*Յետագայ տարիների ընթացքում զիտնականը մասնաւոր յօդուածների մէջ բանասիրական մանրակրկիտ քննութեամբ վեր է հանում <<Արմատ Հաւատոյ>>-ի աղբիւրները...*

*Աղիւրագիտական աշխատութիւններից զատ Յ.  
Անասեանը մի շարք յօդուածներ է նուիրել Վարդան  
Այգեկցու մատենագրական գործունեութեան պատ-  
մագիտական լուսաբանմանը...*

*Պատմաբանասիրական այս ուսումնասիրութիւն-  
ները բատինքեան անհրաժեշտ նախապայման դար-  
ձան Վարդան Այգեկցու դաւանաբանական երկերի  
պսակ հանդիսացող <<Արմատ Հաւատոյ>>-ի քննա-  
կան բնագրի պատրաստման համար: Ուստի, շատ  
չանցած, իրեն յատուկ խանդավառութեամբ  
գիտնականը ձեռնամուխ եղաւ այդ աշխատանքնե-  
րին: Սակայն վերահաս մահուան պատճառով այդ  
կարեւոր ձեռնարկը այնպէս էլ թերի եւ անկատար  
մնաց: Մայր Աթոռը Մաշտոցի անուան Մատենա-  
դարանի աշխատակից Յ. Հայրապետեանին (Տ. Շահէ  
քահանայ) յանձնարարեց աւարտի հասցնելով  
կազմել տուեալ երկի քննական բնագիրը:*

Լաւ է, չէ՞... Յակոր Անասեան...եւ, եւ՝ Քահանայ...  
Սա էլ արդէն՝ անլրջութեան գլուխ գործոցներց մեկը,  
ի՞նչ իմանաս, թէրեւս Տէր Հայրը խելացի գիտնական  
է: Թէեւ բնագիր կազմելը ամէն մի գիտական  
աշխատող էլ կարող է անել, իմշպէս կասեր մայրի-  
կըս՝ <<կտրէ փակցուր>>:

Կարեւորը՝ երկի մասին գիտական խօսք ասելն է,  
այն արժեւորելը մեր օրերի մտայնութեամբ, լուսա-  
բանելը գործի մութ ու լուսաւոր կողմերը՝ մի  
երեւոյթ, որ ես տեսայ Յակոր Անասեանի՝ <<Արմատ

Հաւատոյ>>-ին նուիրուած իր՝ տասնեակից աւելի յօդուածները կարդալիս եւ ուսումնասիրելիս: Այդ զիտական հսկայական արժէք ներկայացնող նիւթերն ինքնին իրենց ծաւալով ներկայ հատորի կեսից աւելին են:

Գրքի Ներածութեան հետ միասին պիտի դրուեին Յակոբ Անասեանի՝ <<Արմատ Հաւատոյ>>-ին վերաբերող նիւթերը, որպէսզի ընթերցողը հասկանար ու լսրոներ 12-րդ դարի մեծ լուսաւորիչ, Հայ Եկեղեցու ծեսերի ու աւանդութիւնների ջերմ պաշտպան, մեր Եկեղեցու օրէնքների դէմ ամէն մի ոտնձգութեան դիմաց սուին ճռճող Վարդան Այգեկցու այդ հոյակապ կոթող միտք բանին:

Այսպէս կամ այնպէս՝ մեր կրօնի, հաւատամքի, ելեղեցական դարաւոր աւանդոյթների, ծեսերի, տօների, ընդհանրապէս՝ կանոնակարգի մասին Վարդան Այգեկցու գրաբարով գրուած <<Արմատ հաւատոյ>> զիրքը հասու չէ հասարակ ընթերցողին:

Հենց այդ պատճառով էլ Յակոբ Անասեանը իր՝ <<Արմատ հաւատոյ>>-ին վերաբերող տասնեակից աւելի ծաւալուն յօդուածներում, աշխատութեան առանձին զլուխներ տարրալուծել է աշխարհաբարով, որպէսզի ամէն մի հայ ընթերցող հարստանայ Վարդան Այգեկցու՝ Հայ Եկեղեցու կանոնակարգին վերաբերող գիտելիքներով:

Այ՝ Յակոբ Անասեանի այդ մեծարժէք յօդուածներն է, որ անպայմանօրէն պիտի տեղադրուեին Վարդան Այգեկցու բնագրից առաջ:


Մեզ՝ Յակոր Անասեանի ժառանգներիս համար միակ միսիթարանքն այն է, որ <<Արմատ Հաւատոյ>>-ի ներածականի մէջ հեղինակ Յակոր Քեսուեանը աւելի քան երեսուն անգամ յղումներ է անում Յակոր Անասեանի գործերից:

<<Արմատ Հաւատոյ>>-ի հետ կապուած այս պատմութեան գերազոյն մեղատորը Յակոր Անասեանն է, որ քսան տարի քրտնաջան աշխատելով այդ գործի վրայ, այդպէս դիւրութեամբ, ՍԻՐԱՅՕԺԱՐ, ինըն իրեն զրկել է հեղինակային իրաւունքից... Յաջորդ մեղատորը՝ Շահէ Արքեպիսկոպոս Աճեմեանն է, որը դեռեւս 1981 թուականին էր հրափրել Յակոր Անասեանին Երուսաղէմ՝ <<Արմատ Հաւատոյ>>-ի հետ կապուած հին ձեռագրեր ուսումնասիրելու եւ նա մօտիկից գիտէր այդ գործի բարդութիւնն ու ծաւալը:

Ո՞վ գիտէ, գուցէ իսդի խայթից ելնելով էր, որ նա 2004 թուականին ոգեւորութեամբ եւ իր անձնական դրամի հաշուին հրատարակեց Յակոր Անասեանի <<Հայկական Մատենագիտութեան>> երրորդ հատորը՝ գրքի առաջին էջի վրայ տեղադրելով հետեւեալ մակագրութիւնը,

*Մոյն հասորի տպագրութիւնը իրականացաւ  
արդեամբ եւ ծախսիւք Աստուածաբանութեան  
ֆակուլտէտի դեկան՝ դոկտոր, պրոֆեսոր  
Շահէ արքեպիսկոպոս Աճեմեանի  
<<Արմատ Հաւատոյ>>-ի բոլոր մեղատքներն այսօր  
հանգչում են երկնային արքայութեան մէջ*





[1700m.]

ԳԱԱ Երևանաբար Գիտ. Գրադ.



FL0485579

*Հ*  
103452

... Մենք գերազանցաղէս  
մշակութային ժողովուրդ ենք՝  
համաշխարհային մշակոյթի  
կողմից վկայագրուած:

... Շնորհակալութիւն իմ  
ժողովրդին, որից ժառանգել եմ  
իմ ընդունակութիւնները եւ  
որին, աշխատել եմ, որուն  
հարազատ զաւակ, անվերա-  
դահօրէն նուիրել իմ ամբողջ  
գիտակցական կեանքը:

Ես հղարտ եմ, որ հայ եմ:

Յ.Ս. ԱՆԱՍԵԱՆ  
4 մարտ, 1984  
Լոս Անջելես

Ծննդեան 80-ամեակին նուիրուած  
յոթեւանական երեկոյի  
շնորհակալական խօսքից